

ԿՈՒՐՏ ՅԵԼ ՅԱՐՄԻՆԱ ՀԱՌՈՋՆԵՐ

ՓՈՔՐԻԿ ՅԵՐԵՒԱՆԵՐԸ ՄԵԾ ԿԱՐԻՔԻ ՄԵՋ



83-5
Հ-33

ՊԵՏՂՐԱՏ

-6 NOV 2011

ԿՈՒՐՏ ՅԵՎ. ՅԱՐՄԻՆԱ ՀԱՌԻՋՆԵՐ

83-153

3-33

ս. ծ.

ՓՈՔՐԻԿ ՅԵՐԵԽԱՆԵՐԸ ՄԵԾ ԿԱՐԻՔԻ ՄԵՋ

Նկարները ՅՈՒ ՀԱՆՖԻ

Ռուսերենից թարգմ.

Հ. Տ. ԱՎԱԳՅԱՆ

ՊԵՏՀՐԱՏ

ՀԼԿՅԵՄ ԿԿ ԿԻՑ ԾԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱԿԱՆ ԴՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ

Յ Ե Ր Ե Վ Ա Ն

1937

11.06.2013

1359

Նվիրվում ե Ժառիսական
Գերմանիայի անթիվ սովա-
լուկ պրոլետարական յերե-
խաներին յեվ սանջված,
խոսանգված պրոլետարական
մայրերին. նվիրվում ե չորս
ամսական ինգերորդին, մեկ
յեվ կես տարեկան Վոլժգան-
գին յեվ չորս տարեկան
Բերնհարդին, վորոնք սպան-
ված են իրենց դժբախտ մոր
Շարլոտտա Յունեմանի հետ
միասին Բերլինում 1935 թը-
վին հիսկերյան ժառիգի
մեռումը:

Խմբագիր՝ Գ. Կոլլոդյան
Տեխ. խմբագիր՝ Ստ. Ալթոբուխյան
Որբագրիչ՝ Ա. Գասպարյան




9- 3057
39

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ՌՈՒՔԻՆ ԶԻ ՅԱՆԿԱՆՈՒՄ ԿՐԱԿԵԼ ԱՂԲԻ ԱՐԿՂՆԵՐԻ ՎՐԱ

— Ինչպէս ե մեծացել մեր Ռոբբին, ինչ խելոք ե նա, — բացականչեց Ֆրաու Ելիզաբեթ Մերկերը, սիրով փաղաքշելով յերեխայի հոգատարությամբ սանրված գլուխը:

Տղան ուրախ թռչկոտում եր իր մոր շուրջը, վորը ճանապարհ եր գնում իր ամուսնուն՝ աշխատանքի: Ռոբբիի հայրը, Սլեբրա Մերկերը, գրոհային ջոկատի պետն եր: Ամեն առավոտ նա գնում եր գրոհայինների շտաբը: Մի նայեք՝ ինչ լավ



նստում ե նրա վրա համազգեստը: Ինչ հատու ե
վճռական քայլում ե նա: Փրաու Ելիզաբեթը հը-
պարտությամբ ճանապարհ եր դնում նրան մինչև
բակի դուռը:

«Ինչ հիանալի հր ե,— մտածեց նա, — իսկ չե
վոր արդեն դեկտեմբեր ամիսն ե»:

— Բարի լույս, Փրաու Մերկեր, բարի լույս, —
հարգանքով բարևում եյին նրան տան ապրողները:

— Ինչ ժրաշան ամուսին ունեք դուք, ինչքան
վաղ ե գնում նա աշխատանքի, — քաղցր ժպտաց
նրան լուսամուտից Փրաու Ռենները:

— Բարի լույս, սիրելի Փրաու, — յերկչոտ թո-
թովեց Փրեյլեյն Շենեկին: Խեղճը նույնպես շտա-
պում եր դեպի իր գրասենյակը: Նա առանց կանգ
առնելու կնիկսեն արեց, ինչ վոր բան ճշտաց ու
անհայտացավ:

Փրաու Ելիզաբեթը պատասխանում եր այդ
վողջուններին բարեհոգությամբ, բայց արժանա-
վորությամբ: Նա լիովին համոզված եր, վոր բո-
լորը նրան հարգում են ըստ արժանավույն, վոր-
պես գրոհայինների պետի կնոջ: Ո, նա գիտեր, թե
ինչպես պիտի պահի իրեն այդ մարդուկների հետ:
— Ռոբերի, գնանք տուն, ժամանակն ե նախա-
ճաշելու, — քնքշաբար կանչեց նա տղային:

Բայց փոքրիկ Ռոբերին չափազանց տարվել եր
իր խաղով: Նա քայլում եր բակում, հենց այնպես,
ինչպես մեծ զինվորները զորահանդեսին: Դե, Ռոբ-
երին լավ գիտի, թե ինչպիսի զորահանդեսներ են
լինում: Նա հաճախ եր տեսնում այդ զորահանդես-
ները: Նրա տոտիկները աշխուժորեն դոփում եյին
սալահատակած բակում: Ռոբերին թվում եր, թե

ելի շատ-շատ տղաներ քայլում են իրա հետ միա-
սին:

— Չախը, յերկու, յերեք, չորս: Չախը, յերկու,
յերեք, չորս, — բղավում եր նա:

Հետո Ռոբերին հիշեց իր նոր թմբուկի մասին,
և ահա խայտաբղետ, թարմ գույներով փայլող
թմբուկը կախված ե նրա կրծքին, իսկ թմբկա-
փայտերն ուղղակի թռչկոտում են նրա ձեռքերում:

Տրամ-տամ, տրամ-տամ-տամ,

Տրամ-տամ, տրամ-տամ-տամ:

Հիմա խաղն ավելի կարգի ընկավ: Չարկում ե
թմբուկը, ջոկատն ել քայլում ե առաջ, առաջ...
Մայրը յերջանիկ ժպտով դիտում եր իր տղայի
խաղը: Նա գրկեց յերեխային ու համբուրեց նրա
բաց խարտյաշ մազերը:

— Մայրիկ, յես զինվոր եմ, մայրիկ, — գոչեց
Ռոբերին ուրախ, բայց և այնպես մի փոքր անվստահ:
Նա ուզում եր, վոր մայրը մասնակցի իր խաղին:

— Դե, իհարկե, դու զինվոր ես, Ռոբերի: Հիտ-
լերի փոքրիկ զինվորը, — պատասխանեց մայրը:

Ռոբերի դեմքը փայլեց ուրախությունից: Իս-
կապես, նա հագնված ե, ինչպես իսկական գրոհա-
յին:

Ռոբերին չեր կշտանում իր նոր զգեստին նա-
յելուց: Այսուր առաջին անգամն ե հագել նա գրոհա-
յինների մանկական համազգեստը: Դա հորեղբայր
Վիկտորի նվերն ե:

Համազգեստը տուն են ուղարկել կարտոնե տու-
փի մեջ ամենամեծ խանութից: Ախ, ինչ դուրե-
կան խշխշում եր մետաքսե թուղթը, յերբ Ռոբերին
անհամբեր հանում եր կարտոնի տուփից հրաշալի
նվերը: Ամեն ինչ, ամեն ինչ կար այնտեղ, վոչինչ

չեյին մոռացել: Նոր կուրտկան և շալվարը, փայլուն կաշվե կոշիկները, փոքրիկ գլխարկն իր գոտիով, իսկ կոճակները վրանց եյին փայլում: Իհարկե յուրաքանչյուր կոճակը զարդարված էր կեռախաչով¹: Չեյին մոռացել նույնիսկ ատրճանակի մի փոքրիկ պատյան:

Այսոր Ռոբբին պարծենում էր նոր համազգեստով: Նա ուղղում է իր թեփքի վրայի կապը, փորը թեփել էր մի կողմ: Կապի վրա մի սպիտակ շրջանկա, իսկ դրա վրա սև կեռախաչ: Ռոբբին ձեռքը դիպցրեց կաշվե պատյանին:

— Մայրիկ, Հիտլերի զինվորը չե՞ վոր պետք է կրակի:

— Իհարկե, իհարկե, Ռոբբի, — պատասխանեց Ֆրաու Մերկերը:

— Վոր ենպես ե, յես ել պիտի ատրճանակ ունենամ, — բացականչեց Ռոբբին հուսալի նայելով մորը:

— Յերեկոյան կխնդրես հայրիկիդ, — պատասխանեց նա: — Նա քեզ համար յերևի, ատրճանակ կբերի:

Ռոբբերտն ուրախությունից գծվել էր: Յերեկ նրան նվիրեցին համազգեստն ու թմբուկը, իսկ եգուց ել, գուցե, ատրճանակ ստանա: Այ, ինչ եմ ասել: Այ, թե կնախանձեն նրան յերեսանները: Առանձնապես Բերնհարդը: Ռոբբին դեռ չգիտի, արժի՞ արդյոք, գործ ունենալ Բերնհարդի հետ: Յերևակայեք միայն — ատրճանակ: Դե իհարկե, Ռոբբին հենց հիմա յել չի վախենում վոչ վոքից... Գուցե միայն չար տղաներից ու շներից, մեկ ել կատուներն են, վոր յերբեմն շատ անախորժ են

¹ Կեռախաչ — սվաստիկա — ֆաշիստների նշանաբան:

լինում: Բայց յեթե նրան մի ատրճանակ նվիրեն, այն ժամանակ նա արդեն, իսկապես չի վախենա վոչ վոքից: Կկրակի — ու պրծալ:

— Մայրիկ, — հարցնում է նա հանկարծ, — իսկ ձևը կարող եմ սպանել ատրճանակով:

Ֆրաու մերկերը ժպտալով պատասխանում է.

— Կարող ես կովել աղբի արկղների հետ:

Բայց Ռոբբին չի բավարարվում այդ պատասխանով:

— Մայրիկ, իսկ յես ուղում եմ սպանել Բերնհարդին, — ասում է նա քմահաճորեն:

— Հիմար բաներ դուրս մի տուր, — պատասխանեց մայրը: — Ժամանակն է նախաճաշելու, Ռոբբի, սուրճը կսառի: Իսկ յավ և յտող տղային մայրիկը տալիս է շաքարած մրգեր՝ սերուցքով: Դա Ռոբբիի սիրած համեղ ուտելիքն է: Բայց այդ ըոպեյին վոչ մի քաղցրավենիք չի կարող գրավել նրան:

— Մայրիկ:

— Հր՛, ի՞նչ ե, բալիկ ջան: Գնանք, գնանք, մենք յերկուսով ենպես լավ կնախաճաշենք:

— Մայրիկ, իսկ հայրիկն ատրճանակ ունի՞:

— Դե, իհարկե, ունի:

— Ի՞նչ ե, հայրիկս ե՞լ աղբի արկղների վրա յե կրակում:

Խոսակցությունը տղայի հետ անախորժ ընթացք է ընդունում: Չե՞ վոր նրանք դեռ կանգնած են բակում, ամբողջ տան աչքի առաջ, և տասնյակ ուշադիր ականջներ լսում են Ռոբբիի շաղակրատանքը:

— Գնանք, բալիկ ջան, գնանք տուն, — վճռականորեն ասաց Ֆրաու Մերկերն ու բռնեց յերեսայի ձեռքից:

Բայց Ռոբբին վոտքերը խփեց գետնին:

—Հայրիկս ե՛լ աղբի արկղների վրա յե կրակում,—համառ կրկնում եր նա: Յե՛վ պատասխան չստանալով, բղավեց. —ասա, ո՞ւմ վրա յե կրակում հայրիկը, ո՞ւմ վրա յե կրակում:

—Ախար, Ռոբբի, հայրիկը չե՞ վոր արդեն մեծ ե,—փորձում եր հանգստացնել նրան Փրաու Մերկերը: —Հավ տղա յեղիր ու արի գնանք տուն: Դեհ, Ռոբբի չան:

Բայց Ռոբբին չեր լսում նրան:

—Ո՞ւմ վրա յե կրակում հայրիկը,—գոռում եր նա հիմա ամբողջ բակով մեկ ու կատաղած դոփում վտաքերը քարե սալահատակին:

Կարծես դիտմամբ հենց այդ ժամանակ պիտի բաժնի դուրս գար Հերր Ռեյնեկեն:

—Ռոբբի, ինչ հարցեր ես տալիս գնանք տուն,—ասաց Փրաու Մերկերը քաղցր ձայնով:

Բայց Հերր Ռեյնեկեն արդեն մոտեցել եր: Նա գլխարկը հանեց:

Ո, Փրաու Մերկեր,—ասում ե նա, յերբ նա-նյումեմ ձեզ և ձեր տղային, տեսնում եմ գերմացի մոր իգեալը:

Փրաու Մերկերը շփոթված ժպտում ե, իսկ Ռոբբերտը բղավում ե ավելի բարձր.

—Ո՞ւմ վրա յե կրակում հայրիկը:

Ո՛, դա վոսկի յերեխա յե,—ասում ե, հերր Ռեյնեկեն և նորից քաղաքավարի գլուխ ե տալիս իբրև հրաժեշտ:

Փրաու Մերկերը կարմրում ե՝ ի՞նչ են նշանակում այդ խոսքերը,—գովասանք թե ծաղրանք: Ռոբբին գոռում ե նվազած ձայնով: Փրաու Մերկերը վերջնականապես կորցնում ե համբերությունը: Մեկ: Յե՛վ նա բռնում ե Ռոբբիի ձեռքից:

Յերկո՛ւ: Յե՛վ նրան քաշ ե տալիս սանդուխքներով վեր, չնայած նրա հուսահատ դիմադրությանը: Տղան դեմ ե անում վտաքերը, ձեռքերը, բայց մայրը քաշ ե տալիս նրան իր յետևից, ինչպես քաշ են տալիս պարանով համառ լակոտին:

Դրը՛րխկ, ամպի վորոտինման անցավ ամբողջ տնով: Այդ Փրաու Ելիզաբեթ Մերկերը խփեց, վերջապես, իր բնակարանի մուտքի դուռը:


ԳԼՈՒԽ ՅԵՐԿՐՈՐԴ

ԲԵՐՆՀԱՐԴԸ ԳՆՈՒՄ Ե ՎՈՐԲԱՆՈՑ

Բակի հեռավոր անկյունում պատի մոտ շարվել են աղբի արկղները: Արկղների յետևում մի նեղ դուռ կա: Նա տանում ե դեպի քարե սանդուխքները, վորոնք իջնում են № 27 տան նկուղը: Իսկ մի սովորական բնակելի տուն ե, Վեյնշտրասսեյի վրա, Բերլինի հյուսիսային մասի կողքի փողոցներից մեկն ե:

Տունը մի մեծ, գորշ տուն եր՝ նա վոչնչով չեր տարբերվում այդ փողոցի վրա գտնվող մյուս տներից: Այդ հանգիստ և մռայլ տները կարծես մի մեծ լռակյաց ընտանիքի անդամներ լինեյին:

№ 27 տանը հարկեր շատ կային և ավելի շատ բնակարաններ: Բնակարանների մեջ կային այնպիսիները, վորոնցում ապրում եյին ունեվոր մարդիկ: Տունն ուներ մի գեղեցիկ մուտքի դուռ: Տընվորները դուրս ու ներս եյին անում այդ դռնով և նրանցից շատերը չեյին կասկածում աղբի արկղների յետեվը բակի անկյունում գտնվող մութ սանդուխքի գոյության մասին: Այդ սանդուխքը տանում եր դեպի այն բնակարանը, վորտեղ ապրում եր Փրաու Շառլոտտա Յունեմանն իր յերեք յերեխաների հետ:



Մեծահասակների համար դա մի տեղ եր, ուր դուրս ելին գցում ամանների կտորները, լաթեր, թառամած ծաղկե փնջեր և ամեն տեսակ ուրիշ աղբ։ Բայց հետաքրքիր, փոքրիկ մարդուկ՝ Ռոբբին այդ անկյունի մասին ունի իր առանձին կարծիքը։ Վորքան զարմանալի և հետաքրքիր բաներ կարելի չե գտնել ամեն տեղ՝ տանը, բակում, փողոցում։ Յեվ չե վոր ամեն բան պետք ե նայել, շոշափել, հոտոտել, յերբեմն և լիզել։ Չկա աշխարհիս յերեսին փոշ մի բան, վոր արժանի չլիներ նրա, Ռոբբիի, ուշադրությանը։

Վաղուց չեր, վոր Մերկերների ընտանիքը տեղավորվել եր այդ տունը, և Ռոբբին պետք ե մի լավ ծանոթանար ամբողջ շրջապատին։ Առանձնապես գրավիչ ե բակի այն անկյունը, վորտեղ դրված են աղբի արկղերը։ Այդ անկյունում ինչ վոր խորհրդավոր, արգելված բան կար։ Զուր չի, վոր մայրիկը թույլ չի տալիս նրան խաղալ այնտեղ։ Ահա թե ինչու տղան առանձնապես ձգտում ե հենց այնտեղ գնալ։ Նա զգուշությամբ, գաղտագողի անցնում ե բակը և արագ անհայտանում ե սանդուխքների մոտ խորխորատում։ Ո՛հ, ինչպես խոնավ ու ցուրտ ե այնտեղի ողբ։ Ռոբբիի շունչը բռն-

վեց։ Անցնելով մի քանի քայլ, նա կանգ ե առնում։ Նա սարսափում ե՝ նրա առաջ բացվեց դատարկության սև յերախը։ Ռոբբին շտապ շուռ ե գալիս ու նայում, վոր համոզվի թե դրսում դեռ ևս լույս ե և տաք, և վերադարձի ճանապարհն ազատ ե ու կարելի չե ուզած ըոպեյին փախչել այդտեղից։ Ինչ պայծառ լույս ե տալիս արևն այնտեղ, վերևում։ «Բայց Բերնահարդ Յունեմանը միշտ իջնում ե այդ սանդուխքներով և նրա հետ փոչինչ չի պատահում», — մտածում ե Ռոբբին։ Նրա աչքերը կամաց կամաց սովորում են մթությանը։ Բայց չե վոր այստեղ այնքան ել մութ չի, վորքան թվում եր առաջ։ Ելի յերկու՝ յերեք աստիճան և Ռոբբին նկուղումն ե։ Նրա առջև մի քանի դռներ կան, իսկ նրանց վրայից մեծ կողպեքներ են կախված։ Շրջիկ, շրջիկ։ Ռոբբերտը վախենում ե։ Նշանակում ե, նա մենակ չի, այստեղ ինչ վորը մեկը կա։ Շրջիկ, շրջիկ, շրջիկ, շրջիկ։


Աղմուկը դեռ շարունակվում ե։ Ռոբբին տատանվում ե — և սարսափելի չե, և հետաքրքիր։ Բայց հետաքրքրությունը հաղթանակում ե և Ռոբբին առաջ ե գնում։ Ոհո, դռներից մեկը բոլորովին բաց ե։ Ա՛յ, թե ինչ։ Դա ածխի պահեստն ե։ Ինչ վոր մի նիհար մարդ վերցնում ե ածուխը բահով ու լցնում յերկաթյա դույլերի մեջ։ Ռոբբին իսկույն ճանաչեց՝ նիհար մարդը դռնապանն եր։ Դե նրանից Ռոբբին մի եսքան ել չի վախենում։ Դռնապանը միշտ կատակ եր անում Ռոբբիի հետ. յերբ նա անցնում ե նրա մոտից մայրիկի հետ միասին։ Իսկ հիմա նա, եդ դռնապանն այնպիսի գվարճալի տեսք ունի։ Նա անընդհատ կռանում ե ու ուղղվում, կարծես լարովի լինի, իսկ նրա հսկայական ստվերը մոմի թարթող լույսի տակ կրկնում ե նրա բոլոր

շարժումները: Կարծես տիկնիկային թատրոնում լինի:

Ստվերների խաղը քանի գնում ավելի տարո-
րինակ ու ծիծաղելի յե դառնում: Ռոբերին զրժ-
վարությամբ ե գսպում, ծիծաղում — Նա չի ուզում,
վոր դռնապանը տեսնի իրեն: «Ինչ լավ կլինի մի
վախեցնեմ դռնապանին», — հանկարծ վճռում ե նա:
Դըմբ, զըմբ: Այդ՝ Ռոբերին ամբողջ ուժով խփեց
իր թմբուկին: Իսկ հիմա շուտ սանդուխքով դեպի
վեր դեպի արևը, ազատ ողը:

Դռնապանը ցնցվեց ու շուռ յեկավ բահը ձեռ-
քին նա վազեց դեպի դուռը և տեսավ շտապ փախ-
չող տղային՝ գրոհայինի համազգեստով: Սանդուխքը
մի փոքր դիք եր Ռոբերի համար: Նրա կարճիկ
փոտքերը դժվարությամբ եյին հաղթահարում աս-
տիճանն աստիճանի յետեվից:

— Ափսոս, վոր չի կարելի մի լավ դնքսել քեզ, —
կիսաձայն փնթփնթաց դռնապանը ու վերադարձավ
իր աշխատանքին:



Բայց խուսափելով
վտանգից, Ռոբերին
նորից զգաց, վոր նը-
կուղն անդիմադրելի
ձգում ե դեպի իրեն:
Տղան հասկանում եր,
վոր վերջ ի վերջո
դռնապանն իրեն վոչ-
ինչ չի անի: Նա ուղ-
ղակի չի համարձակ-
վի, յերկյուղ կրելով,
վոր Ռոբերին իսկույն
և յեթ կգանգատվի
մորը:

Ռոբերին նորից իջնում ե ներքեվ, բայց ար-
դեն զգուշությամբ գնում ե նկուղի մյուս
կողմով: Ըհը՝, գտավ: Դռան առաջ դրված ե մի կի-
սատակառ և կոտրված շրջիլ: Յերևի հենց այստեղ
եւ ապրում ե Բերնհարդը: Ռոբերին կանգնում ե
փոտքի թաթերի վրա ու ահանջը դնում բանալու
ծակին: Սըսս, մի ձայն ե լսվում: Լաց ե լինում
մի յերեխա, գնզգնզում ե ամանեղենը: Ռոբերին
ճանաչում ե Բերնհարդի ձայնը:

— Մայրիկ ջան, յես հո բոլորը չեմ ուզում: Մի-
այն մի հատ:

— Բերնհարդ, համբերությունից մի հանիր
ինձ՝ կարտուր յերեկոյի համար ե:

— Դե, մայրիկ ջան, մեկը, մեկը հո կարող ես տալ
ինձ

— Ձեռ քաշիր, Բերնհարդ, չե վոր յես արդեն
տվել եմ քեզ սուրճ և հաց:

Ռոբերին ուշադրությամբ լսում ե: Դուռը քիփ
չի ծածկված, իսկ ածխատնից լսվող աղմուկը բո-
լորովին չի խանգարում նրան:

— Մայրիկ, մայրիկ ջան, մի հատ փստիկ կար-
տուր, մի հատիկ, — աղաչում ե նորից Բերնհարդը:

— Ձեռ դադարի արդյոք դու, Բերնհարդ: Հան-
գիստ թող ինձ, — նորից լսվում ե կանացի ձայնը:

«Դա յերևի նրա մայրն ե», — մտածում ե Ռոբ-
երին, և նրան թվում ե, թե կինը լաց ե լինում:
Յեվ ահա նա նորից խոսեց: Բայց հիմա նա խոսում
ե կամաց, շատ կամաց, այնպես վոր Ռոբերին հա-
զիվ ե ջոկում առանձին խոսքերը:

— Ձե՞ վոր դու մեծ ես, Բերնհարդ: Դու պի-
տի արդեն հասկանաս: Եդ կարտուր մեր վերջին ու-
նեցածն ե: Յերբ Վոլֆն ե բղավում — յես հասկա-

նում եմ: Նա դեռ շատ փոքրիկ է: Բայց դու: Չե՞ վոր
դու արդեն մեծ տղա յես, Բերնհարդ...

Լուսթյուն տիրեց:
Միայն փոքր յերեսան
լալիս եր ու լալիս:

Հանկարծ սարսափ տիրեց
Ռոբերին: Պահ, նույնիսկ
մարմինը փշաքաղվեց:

— Ինզան, յերևի, հի-
վանդ ե, — լսեց նա նորից
Բերնհարդի մոր ձայնը: —
Սմբողջ օրը լաց ե լինում
նա:

— Իսկ Վոլֆը, մայրիկ,
նա լալ է:

— Նա դեռ տաքության
մեջ է: Նա, յերևի, դող-
երույթի մեջ է: Շուտ արա
հագնվիր, Բերնհարդ: Յես
քեզ տանեմ մանկատուն
և փորձեմ բժիշկ կանչել:

Դռան յետևը մի ծանր հառաչանք լսվեց:

— Վայ ինձ, ես ինչպիսի կարիքի մեջ եմ, ինչ
կարիքի, և վոչ վոք չի ոգնելու:

Ուռլ հեկեկանք և նորից բացականչություն՝
եւ ինչպիսի կարիքի մեջ եմ»:

Ռոբերտն այլևս չեր ուզում աղանջ դնել: Այդ
ձայնը նրա մեջ ինչ վոր տարորինակ սարսափ եր
առաջացնում: Տղան հիշեց մոր պատմությունները
նկուղներում թափառող ուրվականների մասին, և
ինչքան ուժ ուներ սլացավ դեպի վեր:

Աղբի արկղների մոտ լույս եր և լուռ: Հենց



բակի տեսքը միայն հանգստացրեց Ռոբերին: Տղան
ընկավ մտածմունքի մեջ: Ինչ ասես չտեսավ ու
չլսեց նա այսօր:

Բայց այդ ի՞նչ է: Բերնհարդը դուրս սողաց
դեպի արևը: Ռոբերին հեռանում ե արկղից, անկախ
տեսք շինած, բայց միաժամանակ աչքի տակով
գիտում ե Բերնհարդին: Սա շլացել ե պայծառ
լույսից ու կկոցում ե աչքերը: Ռոբերին լուռ ե: Բերն-
հարդը նույնպես:

Դա մի նիհար ու գունատ տղա յե: Նրա վոտքերը
բարակ են և իր հասակի համեմատ մեծ գլուխ ունի:
Բերնհարդի յերեսին միշտ մի ամաչկոտ ու յեր-
կյուղած ժպիտ կա: Բերնհարդը դեռ հինգ տարեկան
եւ չկա, բայց նրա աչքերը տխուր են ու խելոք, կար-
ծես հասակավորի աչքեր լինեն: Ահա նա, վերջա-
պես, նայեց Ռոբերին: Նոր գգեստի փայլը, խայ-
տաբղետ թմբուկը շմեցրին Բերնհարդին: Զարման-
քից բերանը բացած, նա դիտում ե այդ շքեղու-
թյունը: Ռոբերին անփույթ խաղում ե թմբկափայ-
տերի հետ: Բերնհարդը յերկշոտ կանգ ե առնում
սիրտ չանելով մոտենալ:

Բայց Ռոբերին ավելի ձեռներեց ե նրանից:

— Լսիր, Բերնհարդ, — հարցնում ե նա, — դու
ելի յեղբայրներ ունես, եղպես չի՞:

— Հա, Վոլֆն իմ յեղբայրն ե:

— Իսկ ելի ունե՞ս:

— Մի քույրիկ ել ունեմ:

— Եդ են ե, վոր միշտ լա՞ց ե լինում:

— Հա, եդ Ինզան ե:

— Իսկ յերբ նա լաց չի լինում, կարելի՞ յե
խաղալ նրա հետ:

— Չե, նա միշտ պառկած ե: Նրա հետ խաղալ
չի կարելի: Նա դեռ շատ փոքր ե:

Բերնհարդը հագել էր իր կուրտկան և գլխարկը դրել: Նա սպասում էր մորը, վոր պիտի տաներ նրան վորքանոց: Բայց նա չէր ուզում գնար: Ինչ հիացմունքով նայում էր նա խայտաբղետ թմբուկին: Բերնհարդն ավելի ու ավելի մոտենում էր նրան: Վերջապես, նա սիրտ արեց ու ձեռքը դիպցրեց պիրկ ձգված կաշուն: Բայց այդ բանը Ռորբիին դուր չեկավ և նա ամբողջ ուժով խփեց Բերնհարդի ձեռքին:

— Վայ, — գոչեց սա և յետ քաշեց ձեռքը:

Ձե՞ վոր Ռորբերտն անհամեմատ ավելի բարձր էր և ուժեղ Բերնհարդից, իսկ նրա համագգեստը նախանձ և հարգանք էր ներշնչում: Ախ, Բերնհարդը գիտեր, վոր Ռորբին գերազանցում է իրեն ամեն ինչով: Վորքան հաճախ էր նա տեսնում նրան բակում, վորքան հաճախ յերազում էր այն մասին, վոր մի փոքր խաղա Ռորբիի հետ, մի լավ նայի նրա սիրուն խաղալիքներին:

— Քո անունը Ռորբերտ է, հա՞, — հարցրեց Բերնհարդն անվստահ:

— Հա՛, բայց մայրիկս ինձ կանչում է Ռորբի: Իսկ եզուց յես մի հատ ել ատրճանակ կստանամ, — հպարտ հաղորդեց տղան: — Յեթե դու ինձ չլսես, յես կխփեմ քեզ: Յեվ քո յեղբորը, Վոլֆին նույնպես, — ավելացրեց նա վճռականորեն:

Բերնհարդը ժպտաց Ռորբիի սպառնալիքների վրա: Դա, յերևի, միայն խաղ է: Դե հո չի կարող Ռորբին իսկապես խփել նրան ատրճանակով:

— Դու կարողանում ես զինվորներ խաղալ, — հարցրեց Ռորբերտը:

Բերնհարդը լուռ գլխով արեց:

— Դե, վոր եղպես է յես կլինեմ գեներալ, իսկ դու յեկ իմ ջոկատը:



Ռորբերտը, ինչպես վայել է սպային, սկսեց հրամաններ տալ:

— Ջոկատ, քայլով մարշ: Չախր, յերկն, յերեք, չորս: Չախր, յերկն, յերեք չորս: Բերնհարդը հլու

քայլում էր և նրան թվում էր, թե իր յետևից գալիս են զինվորները շարքերով: Իսկ նա բոլորի առջևն է:

Ջոկատ, կանգ առ: Շուրջ պտտիր—հրամայեց Ռորբերտն ու Բերնհարդը քայլեց աղբի արկղների առաջ: Նա բախտավոր էր, վոր Ռորբին խաղում է իրա հետ:

Ռորբերտը նոր-նոր բաներ էր հնարում խաղի մեջ:

— Հիմա արի մարզանքներ անենք, — գոչեց նա ու հրամայեց:

Պառկիր:

Բերնհարդը հլու ընկավ քարե սալերի վրա:

— Վեր, — հնչեց Ռորբիի հրամանը: Բերնհարդը շտապ թռավ վոտքի:

— Վար:

— Վեր:

— Վա՛ր:

— Վեր:

Ռորբին ուրախանում էր ամբողջ սրտով: Զինվորները վարժությունները կատարում էին հիանալի կերպով: Գեներալը գոհ էր: Նա հրճվում էր իշխանությամբ:

—Վար:

—Վեր:

—Վար:

—Վեր:

Հրամանը քանի գնում արագանում եր: Բերնհարդն սկսեց շնչասպառ լինել: Յերեխայի դատարկ ստամոքսում կլկլում եր ցիկորիի սուրճը: Քրտրնքի խոշոր կաթիլներ յերևացին նրա ճակատին: Բայց նա չեր վստահանում հայտնել, վոր ինքը հոգնած ե, վախենալով, վոր Ռոբբին այլ ևս յերբեք չի ուզի խաղալ իր հետ:

Նրա բախտից նկուղից դուրս յեկավ, վերջապես, նրա մայրը: Բարկացած ձայնով կանչեց նա տղային:

—Դե, գնանք, Բերնհարդ: Յես ստիպված յեղադուռը փակել յերեխաների վրա: Լսում ես ինչպես են բղավում նրանք: Յես ուզում եմ շուտ վերադառնալ տուն:

Նա արագ քայլեց բակի միջով և Բերնհարդը ստիպված եր վազելով հասնել նրան: Նա նույնիսկ ժամանակ չունեցավ ասել Ռոբբերտին, վոր մյուս անգամ ել ուրախությամբ կխաղա նրա հետ:

Անսպասելիությունից Ռոբբին բերանը բաց սառեց իր տեղում: Ես ինչ չարն ե Բերնհարդի մայրը: Ինչո՞ւ նա փչացրեց իր խաղը: Ռոբբին սովոր չի, վոր իր վրա նայեն չարացած աչքերով: Չե՞ վոր բոլորը ժպտում եյին նրան:

Հլու գինվորներն անհայտացան: Խաղը խանգարվեց: Ռոբբին փորձեց հրամայել աղբի արկղներին, բայց նրանք կանգնել եյին «ձեռքները ցած գցած» և լուռ հակառակվում եյին գեներալի հրամաններին: Քառանկյունի, անշնորհք եյին այդ արկղները և փոքրիկ գրոհայինը իզուր աշխատում



եր ռազմական վոգի ներշնչել նրանց: Յերբ նա
բղավեց՝ «հայլ, Հիտլեր», այնպիսի անհնազանդ
համառ լռություն յեղավ դրա պատասխանը, վոր
Ռոբերտը վրդովվեց: Հայտնի չի, թե ինչ պիտի
լիներ հետո, բայց հանկարծ Ռոբերին ինչ վոր մի
թացություն զգաց ըթի վրա: Իսկ յերբ նա բարձ-
րացրեց դեմքը դեպի վեր, անձրևի խոշոր, ծանր
կաթիլներն ընկան ուղիղ նրա բերանը:

— Ռոբերտ, Ռոբերտ, շուտ տո՛ւն արի, — կանչում
եր նրան գլխավոր մուտքի դռան կանգնած աղա-
խինը:

Ռոբերտը գլխապատառ վազեց բակով և սկսեց
բարձրանալ սանդուխքով վեր:

Արևը ծածկվել եր: Կտուրի վրա բարձրում քա-
մին հալածում եր սև ամպերը: Անձրևի ծանր կա-
թիլները խփվում եյին բակի սալաքարերին, ուժեղ-
կոծում եյին աղբի արկղները, և ապա աղմուկով
հոսում եյին առփով:

ԳԼՈՒԽ ՅԵՐՐՈՐԴ

ԲԱՐՈՆԵՍՍԱ ՖՈՆ ԿԻՆԿԵՐԼԻՏՏԻ ՀԵՏ ՀԱՆԱՔ
ՉԵՆ ԱՆՈՒՄ

— Ելի մի անգամ, յերեխաներ: Սկսենք նորից,
— դուռաց ֆրեյլեն Կունիգունդա Հոպֆենշտոկը:
Ֆրեյլեն Կունիգունդան դաստիրակչուհի յեր ման-
կատանը:

— Ուշադրությո՛ւն, ուշադրությո՛ւն, — կրկնեց
նա չոր ձայնով և պատրաստվեց արդեն խփել դաշ-
նամուրի ստեղներին իր յերկար փոսկրոտ մատ-
ներով:

Լռություն:

— «Պարզած դրոշակներով...» — Փոքրիկ Հեր-
բերտն սկսեց յերգել, առանց սպասելու յերա-
ժշտությանը:

Նրա բարակ ձայնը հնչում եր կեղծ և նման եր
քարով խփված ճնճղուկի ճովողյունին: Ֆրեյլեն
Կունիգունդան նույն իսկ վրդովված վեր թռավ տե-
ղից:

— Հապա ձեռքերդ տո՛ւր, — հրամայեց նա տղա-
յին: Հերբերտը դողաց ու հազիվ բարձրացրեց իր
փոխ թաթիկները:

— Այ դու, անուշագիր տղա, — գոչեց դաստիրակ-
չուհին: Յե՛վ — շր՛ըփ, շր՛ըփ. — Հերբերտի մատներին
տեղացին հարվածները: Ֆրեյլենը ծեծում եր
նրան նույն փայտերով, վորով դասի ժամանակ
չափ եր տալիս: Հերբերտը լաց եր լինում:

—Իսկ հիմա լռիր: Յեթե դու անմիջապես
չդադարես փողնալ, կստանաս ելի մի բաժին:

Դաշնամուրի մոտ կիսաշրջանաձև կանգնած և
յերգ սովորող յերեխաները վախեցած աչքերով
հետևում եյին Ֆրեյլեն Կունիգունդային: Խեղճիկ-
ներն ամբողջ ժամանակ դողդողում եյին, վախե-
նալով, վոր Ֆրեյլենի բարկությունը կարող ե
իրենց գլխին ել թափվել:

—Հանդարտ,—հրամայեց նա:

Յերեխաներն անշարժացան: Արդեն մի ամ-
բողջ ժամ եր, վոր նրանք յերգ եյին սովորում:
Ամենափոքրերը շատ հոգնել եյին:

—Դեհ, կրկնենք մեկ ել,—ասաց դաստիարակ-
չուհին: Իսկ ով ուշագիւր չեղավ, նրա ձեռքերին
ել կխփեմ:

Ֆրեյլենը սկսեց նվագել դաշնամուրի վրա, և
յերեխաները նորից սկսեցին յերգել «Հորստ Վեսսե-
լի»¹ յերգը

Պարզած դրոշակով


Խիտ—խիտ շարքերով

Գնում են գրոհայինները...

Մեծահասակ յերեխաներն անգիր գիտեյին յեր-
գի խոսքերը, իսկ փոքրերը միայն բաց ու խուփ եյին
անում բերանները, վոր չբարկացնեն խստասիրտ
Ֆրեյլենին:

—Դե, վերջապես մի բան դուրս յեկավ,—ա-
սաց դաստիարակչուհին ու ժպտաց: Բայց հենց իս-
կույն նրա խիտ հոնքերը ահեղ մոտեցան իրար ու
մի ուղիղ գիծ կազմեցին յերկար քթի վրա:—Ի՞նչ
ես անում, Ռոլֆ:

¹ Հորստ Վեսսել—սպանված գրոհայինի անունը, վորին ֆա-
շիստներն իր մահից հետո հայտարարել եյին, վորպես ազգա-
յին հերոս:



Ռոլֆ Մյուլլերը, յերեք տարեկան մի փոքրիկ
տղա, նստեց հատակին ու սկսեց խաղալ ձեռքի
թաշկինակի հետ՝ մանկատուն գնալուց առաջ մայ-
րը թաշկինակից մի սիրուն տիկնիկ եր շինել նրա
համար: Նրան արդեն վաղուց ծանծրացրել եր յերգը:
Նա շատ եր հոգնել: Բարակ վոտները դժվարությամբ
եյին պահում մեծ ուռած փորը: Մինչև մանկատուն
մտնելը տղայի հիվանդ ստամոքսն ուրիշ ուտե-
լիք չեր ունեցել, բացի կարտոֆիլ ու կաղինի սուր-
ճից: Սուրճ և կարտոֆիլ—անընդհատ նույն բանը:
Բայց նույն իսկ այդ ուտելիքը հաճախ չեր լինում:
Ահա թե ինչու Ռոլֆն այդպիսի ահագին փոր ուներ:

—Ո՞վ թույլ տվեց քեզ նստել,—բղավեց Ֆրեյ-
լեն Կունիգունդան և բռնեց Ռոլֆի ալանջից:

Խեղճ տղան դառը լաց յեղավ և սկսեց տրորել
աչքերն իր տիկնիկով:

Ես ի՞նչ գարշելի բան ե քո ձեռքին, կեղտոտ

տղա, — բղավեց դաստիարակչուհին սուր ձայնով: Նա խլեց Ռուֆի ձեռքից թաշկինակն ու արձակեց այն: Փոքրիկ տիկնիկը, մայրական խաղալիքը, անհայտացավ: Ռուֆը սաստիկ ափսոսում եր իր խաղալիքին:

— Իմ տիկնիկը, ախ իմ տիկնիկը, — հեկեկում եր նա:

Ինչպես եր ատում նա այդ վտիտ, չար կնոջը: Նա գոռում եր ամբողջ ձայնով և փորձում եր խփել վոտքով ֆրեյլեն Կունիգուենդային:

— Այ, թե դու ինչ չարն ես յեղել: Լավ, յես կհանեմ քո միջից այդ բանը:

Յեվ Ռուֆը յերկու ուժգին ապտակ ստացավ:

— Ել կիսի՞ս, իսկ հիմա ինչքան ուզում ես գոռա: — Յեվ ֆրեյլեն Կունիգուենդան վերադարձավ գեպի դաշնամուրը:

Յերեսխաները դեռ կանգնած էին կիսաշրջանաձև: Հիմա նույնիսկ մեծերը հոգնել էին: Բայց նրանք վախենում էին հայտնել այդ մասին:

— Յերեսխաներ, — դարձավ նրանց ֆրեյլեն Կունիգուենդան: — Դուք նոր յերգում եյիք մեր ամենասուրբ գերմանական յերգը: Յուրաքանչյուր գերմանացի յերեսխա պիտի իմանա և սիրի այն:

Յերեսխաները մինչ այդ հոգնածությունից մի վոտքից մյուս վոտքի վրա էին ընկնում:

Այսոր յես մի սյուրպրիզ ունեմ ձեզ համար, — շարունակեց ֆրեյլեն Կունիգուենդան:

— Յես գիտեմ — յուղաբլիթներ: Մենք եսոր կարտոֆիլի յուղաբլիթներ կունենանք — բացականչեց Ֆրից Շուստերը:

— Սուս արա, անկիրթ, — գոչեց ֆրեյլենը: — Զհամարձակվեք ընդհատել ինձ, յերբ յես խոսում

եմ: Հասկացա՞ք: Իսկ դու, Ֆրից, իբրև պատիժ այսոր կմնաս առանց ձաշի:

Ֆրեյլեն, ի՞նչ սյուրպրիզ ե, — յերկշոտ հարցրեց Եգոն Գեդիկեն:

Նա ամենահնազանդ տղան եր մանկատանը — և նույն իսկ չար ֆրեյլեն Կունիգուենդան վոչ մի անգամ չեր պատժել նրան:

— Սիրելի յերեսխաներ, — շարունակեց նա քաղցրը ձայնով: — Այսոր մեզ մոտ մի բարձր աստիճան հյուր ելինելու՝ բարոնեսսա ֆոն Կինկերլիտցը: Դուք կյերգեք նրա համար մի քանի յերգեր և ցույց կտաք, վոր դուք լավ գերմանացի յերեսխաներ եք, փոքրիկ զինվորներ եք, վորոնք սիրում են իրենց նացիոնալ սոցիալիստական հայրենիքը:

— Ի հարկ ե, ֆրեյլեն, — աններդաշնակ ձայնով խմբովին պատասխանեցին յերեսխաները: Նրանք սաստիկ վշտացած էին, նրանք այնքան հուսով էին, վոր յերգն արգեն վերջացել ե և վոր կարելի կլինի, վերջապես, նստել ու հանգստանալ:

— Իսկ հիմա, յեկեք մի քիչ ել պարապենք: Անհրաժեշտ ե, վոր բարոնեսսան գոհ լինի ձեզանից:

II, ֆրեյլեն Կունիգուենդան անողոր եր իր պարտականությունների կատարման մեջ: Նա տեսնում եր, վոր յերեսխաները հոգնել էին, բայց յեթե թույլ տա նրանց հանգստանալու, ել ժամանակ չի ունենա նախապատրաստելու բարոնեսսայի այցելությունը: Իսկ ֆրեյլենն ամենից շատ դրանից եր վախենում: Պետք ե ինչպես ել լինի ցույց տալ նշանավոր հյուրին, թե ինչ լավ ե կատարում ֆրեյլենը ֆաշիստական ղեկավարության առաջադրանքները: Դաստիարակել յերեսխաներին խստա-

բարո և ամուր կանոններով, զինվորական փողով
և տնտեսել յուրաքանչյուր կոպեկը նրանց սննդի,
հաշվին:

«Որհնեցեք այն բոլորը, վոր ձեզ կոփում ե» —
գրում եյին ֆաշիստական յերիտասարդական
յրագրների յուրաքանչյուր համարում և ֆրեյլեն
Կունիգունդան ամուր պահապանում եր խստաբարո
դաստիարակության կանոնները:

— Կանգնեցեք շարքի, — ասաց նա կոշտ:

Հոգնած յերեխաները հնազանդվեցին: Նրանք
արագ շարվեցին իրար կողքի և մի շարք կազ-
մեցին:

Փրեյլեն Կունիգունդան հրամայում եր՝

— Դեպի աջ, դեպի ձախ:

Յեվ յերեխաները հնազանդ շուռ եյին գալիս
դեպի աջ և դեպի ձախ: Ամեն բան ընթանում եր
բավական հարթ, միայն Հերբերտն եր, վոր
անընդհատ սխալվում եր ու շուռ գալիս վոչ
պահանջված կողմը:

Փրեյլեն Կունիգունդան, չարացած, հրամայեց
նրան, վոր «դեպի աջ» ասելիս վեր բարձ-
րացնի աջ ձեռքը, իսկ «դեպի ձախ» ասելիս —
ձախ ձեռքը: Դա վերջնականապես շփոթեցրեց
տղային: Փրեյլեն Կունիգունդայի գայրույթն ան-
նկարագրելի յեր: Բոլորը սսկվեցին, մի նոր փոթո-
րիկ սպասելով:

— Կրկնիր մի անգամ ել, անշնորհք, — գոռաց
նրա վրա ֆրեյլենը, և հենց այդ ըոպեյին դուռը
կամացուկ բացվեց ու սենյակ մտավ Բերնհարդը:

— Բարի լույս, — բարևեց նա ցածր ձայնով:

— «Հայլ Հիտլեր» պետք ե ասել, հիմար: Դու,
խնչ ե, մսուացել ես այն ամենը, վոր սովորել ես

այստեղ: Համ ել ասում ես «բարի լույս», յերբ
արգեն շուտով կեսոր կլինի: Ո՞ւր եյիր կորել
այդքան յերկար ավարա:

— Փրեյլեն ... յես ... մորս հետ ... գալիս
եյինք... և ինչպես շատ անձրև եր... և մենք պետք ե
սպասեյինք, վոր...

— Ստում ես, ինչպես միշտ — հետևեց խիստ
պատասխանը: — Շուտ կանգնիր շարքի:

Յեվ Բերնհարդը սկսեց քայլել սենյակում
մյուս յերեխաների հետ միասին:

Ախ, ինչ չարասիրտ ե ֆրեյլենը: Բերնհարդն
ամենից ավելի շատ նրանից եր վախենում աշխար-
հում: Շրջան շրջանի յետեվից անցնում եյին
յերեխաները հատու զինվորական քայլով, իսկ
յերկար ֆրեյլեն Կունիգունդան արձակում եր հրա-
ման հրամանի յետեվից:

Նրան թվում եր, թե ինքը մի սպա յե մեծ
ռազմական զորահանդեսին:

«Այ, յեթե բարոնեսսա Փոն Կինկերլիտցը
տեսներ ինձ: Տեսներ, թե յես ինչպես եմ կրթում
յերեխաներին մեծ առաջնորդ Ադոլֆ Հիտլերի
փողով: Կարող ե պատահել, վոր իմ ոռճիկն ել
կավելացնեյին», — յերազում եր նա:

Մեկ, յերկու, մեկ, յերկու, մեկ յերկու, մեկ...

Փրեյլեն... են, — լսեց նա Հերբերտի դող-
դոջուն ձայնը:

— Մեկ, յերկու, մեկ յերկու... — Փրեյլեն Կու-
նիգունդան թույլ չեր տալիս ընդհատել իրեն: Մեկ
ել վոր ամեն մի ըոպե կարող եր յերևալ բարո-
նեսսան:

— Փրեյլեն... յես պետք ե... — ասաց Հերբերտն
ավելի հաստատակամ:

Բերնհարդը քմծիծաղ տվեց՝ այսպիսի զինվորի հետ Ռոբերտը չէր խաղա յերևի:

Բայց ահա դռները բացվեցին... և շեմքին յերեվաց բարոնեսսան: Բերնհարդը նույն իսկ աչքերը չռեց զարմանքից: Նա դեռ յերբեք չէր տեսել այդպիսի նշանավոր և գեղեցիկ տիկին: Յերբ նա ներս մտավ, սենյակը լցվեց զարմանալի բուրմունքով: Իսկ ինչ պսպղուն քարեր կային նրա մատներին: Նա փողորմածաբար ժպտում եր յերեսաներին և նույն իսկ շոյեց Հերբերտի գլուխը: Այդ տիկինը բոլորովին նման չէր չար Կունիգունդային:

Բայց սս՝ս... ահա խոսեց Ֆրեյլենը:

Յերեսաներ, — ասաց նա սիրալիր, սիրելի յերեսաներ: Յերգենք մեր թանկագին հյուր բարոնեսսա Փոն Կինկերլիտցին այն յերգը, վորը քիչ առաջ սովորում եյինք: Ուշադրություն, մենք սկսում ենք:

Յեվ խումբը յերգեց...

— «Յելիր, յելիր, յերիտասարդ թմբկահար: Զարկ թմբուկը...»¹

Բայց Ֆրեյլեն Կունիգունդան զգում եր, վոր ինչ վոր վատ բան ե կատարվում յերեսաների հետ: Նրանք բոլորն ինչ վոր տարրինակ կերպով գրգռված եյին:

Մինչ այդ բարոնեսսան և նրան ուղեկցող CC² համազգեստով յերկու փայլուն սպաները ժպտաղեմ լսում եյին յերեսաների յերգերը:

¹ Գրոհալինների յերգը:

² CC — գերմանական Փաշխտների առանձին պահանորդային շոկատներ:



Ֆրեյլեն Կունիգուենդան հուզված չափ երտալիս փայտիկով:

«Ամենազոր աստված, այնպես արա, վոր բարոնեսսան զոհ մնա: Զե՞ վոր հիմա նրա կյանքի խնդիրն ե լուծվում: Մի՞թե անիծված թոկից փախածները, ամեն ինչ կկործանեն»:

Փայտիկը ցատկեց դեպի վեր:

— «Խորհրդային Ռուսաստանի վրա արշավենք»:

Բայց արդեն յերգում եյին առաջևի շարքերը, մնացած յերեխաները բարձր հռհռում եյին:

Ֆրեյլենը դեռ անձնատուր չէր լինում:

Նա յերգեց հետեյալ տունը՝ «Մոսկվան մենք կտիրենք»: Բայց իր հուզմութի մեջ նա չէր նկատում, վոր յերգում եր արդեն միայն ինքը, իսկ յերեխաները հըրհըրում եյին իրար ու բարձր ծիծաղում:

— Ֆրեյլեն Կունիգուենդա Հոպֆինշտոկ, — հնչեց հանկարծ անվանի տիկնոջ վրդովված ձայնը: — Հետաքրքիր ե իմանալ՝ ի՞նչ ե նշանակում այդ, Ֆրեյլեն Կունիգուենդա:

Դաստիարակչուհին զաղարեցրեց: յերգել ու վախեցած նայում եր բարոնեսսային:

— Ֆրեյլեն... — հռհռաց Եգոն Գեդիկեն, ամենահնազանդ սանը, մանկատան զարդն ու պարծանքը: Եգոնն այլևս վոչինչ չէր կարողանում խոսել ծիծաղից:

— Ի՞նչ ե պատահել, Եգոն, — սիրալիր հարցրեց նա սանին, չնայած հոգու խորքում նա ուզում եր վոր, տղան գեանի խորքն անցնի:

— Ֆրեյլեն... — ճստացին ելի մի քանի ձայներ, բայց դրանք կորան ընդհանուր ծիծաղի մեջ:

— Հը՛, ի՞նչ ե, իմանալու յենք մենք վերջապես,

թե ինչ ե պատահել, — բարկացած հարցրեց բարոնեսսան:

Բերնհարդը յերկշտո նայեց նրան:

Գեդեցիկ տիկինն այլ ևս չէր ժպտում և նրա ձայնը հնչում եր նույնքան խիստ ու կոպիտ, վորքան և մյուս ձայներն այդ մանկատանը:

— Ֆրեյլեն... — սկսեց նորից Եգոնը:

— Դե ասա, վերջապես, հիմա՛ր, — հրամայեց նրան Ֆրեյլեն Կունիգուենդան:

— Հերբերտը դուրս ե գնացել շալվարի մեջ:

Այ, թե ինչ: Յերեխաները հռհռում եյին ամբողջ կոկորդով մեկ, միայն փոքրիկ Հերբերտը շփոթված կանգնել եր մի կողմ:

Ֆրեյլենը գունատվեց, կարմրեց, նորից գունատվեց, ուզում եր մի բան ասել: Բայց բարոնեսսան, արդեն շուռ գալով և նշան անելով ուղեկիցներին, դուրս սահեց սենյակից: Շեմքին նա կանգ առավ և, առանց Ֆրեյլեն Կունիգուենդայի վրա նայելու, ասաց:

— Ճիշտն ասած, յես դեռ յերբեք, վոչ մի տեղ այսպիսի բան չեմ տեսել: Անհնազանդ յերեխաներ են, զարշահոտություն ե և կեղտոտություն: Յեվ սա կոչվում ե գերմանական մանկատուն: Ամոթ և խայտառակություն: Ըստ յերեվույթին կան դաստիարակչուհիներ, վորոնք պարզապես չեն հասկանում, թե ինչպիսի պատասխանատու պարտականություն ե դրել նրանց վրա մեր հայրենիքը:

Յեվ բարոնեսսան անհայտացավ: Յերեխաներն անհնազանդ են: Ճիշտ ե: Նրանք բոլորն ել այլպես են: Յերեվում ե, վոր Ֆրեյլեն Կունիգուենդան նրանց չի դնգսել բավականաչափ: Գարշահոտություն: Պռոշշները կրծելով, դաստիարակչուհին բռնեց Հերբեր-

տի ոձիքից և մի հարվածով դուրս նետեց նրան
դռնից: Բայց կեղտոտությունը: Ո՞ւր ե կեղտոտու-
թյունը: Դե սենյակն արդեն միշտ ել մաքուր եր:

Փրեյլենը նայեց հատակին: Աստված իմ: Կար-
ծես ախող լիներ, ես վիրտեղից հենց այս առավոտ
են հատակը փայլեցրել:

Ամբողջ սենյակով մեկ, կանոնավոր քառա-
կուսուռ ձեւով, նշելով քայլող յերեխաների ուղին,
ձգվում եր կեղտոտ հետգիծը: Այդ Բերնհարդի վոտքե-
րի հետքերն եյին: — Նա յեկել եր մանկատուն
ամբողջովին թրջված և նրա կոշիկները նույնպէս
բոլորովին թաց եյին: Ճիշտ ե մանկատանը նա
շորերը փոխեց, վորովհետև այնտեղ բոլոր յերեխա-
ներին միատեսակ եյին հագցնում, բայց կոշիկները
մնացել եյին նույնը:

— Այդ դձու յես, — հարձակվեց Փրեյլեն Կունի-
գուհեան Բերնհարդի վրա:

Նա վողջ մարմնով դողում եր հուզմունքից:
Նա յերբեք չեր սիրել յերեխաներին, իսկ այսօր
պարզապէս ատում եր նրանց:

— Իբրև պատիժ դու ամբողջ ուրը կմնաս
առանց ուտելու, — բղավեց նա, և Բերնհարդը
դեռ ուրախ ե վոր այդքան եժան պրծավ:

ԳԼՈՒԽ ԶՈՐՐՈՐԴ

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԲՈՐՍՍՅԻ ՅԵՎ ՄԻ ԱՆՈԳՈՒՏ
ՈՐՎԱ. ՄԱՍԻՆ

— Հիմա պետք ե շտապել, — ասաց ինքն իրեն
Փրաու Յուլենամանը, յերբ Բերնհարդին տարավ
մանկատուն:

«Արդյոք յերեխաները դեռ լաց են լինում տա-
նը, — մտածում եր նա հոգատարությամբ: — Ճիշտ ե,
ինգան և Վոլֆը սովորել են մնալ մենակ, բայց չե
վոր նրանք յերկուսով ել հիվանդ են հիմա»:

Փրաու Յուլենամանը գրեթե վազում եր անվերջ
յերկար փողոցներով:

Անձրեւ եր գալիս:

Պատուած կիսակոշիկներն ամբողջովին թրջվել
եյին: Վերարկուն, այդ հին, տեղ-տեղ բոլորովին մաշ-
ված վերարկուն նույնպէս ամբողջովին թաց եր:

«Ա՛խ, յեթե այսօր հնարավոր լիներ չնշվելու, —
յերազում եր Փրաու Յուլենամանը: — Բայց առանց
դրան չի կարելի. գործազրկության մասին նշում-
ների քարտը պետք ե բոլորովին կարգին լինի»:

Յեւ Փրաու Յուլենամանը շտապում եր վորքան
ուժ ուներ:

Արագ քայլելուց շնչասպառ լինելով, նա յե-
կավ, վերջապէս, աշխատանքի բորսա:

Պատուհանի մոտ, փորտեղ նշվում էյին գործազուրկները, կանգնած եր մռայլադեմ կանանց մի ամբողջ շարք:

— Ես ինչ մեծ հերթ ե: Յես կուշանամ սոցալ դրամարկղից, այ քեզ դժբախտություն, — կուլ տալով արտասուքները, շնչում եր ինքն իրեն Փրաու Յունեմանը, կանգնելով հերթի: Հիմա միայն նա զգաց, փոր ամբողջովին թրջվել է և դողում է, դողում է այդ խիստ տաքացրած և խեղդող սենյակում:

«Միայն թե չհիվանդանամ, չե՞ փոր եղ դեպքում մենք բոլորս կկորչենք», — անցավ խեղճ մոր գլխով:

— Ես ինչ ե պատահել ես կրպակում, իսկի տեղից չենք շարժվում, — բարձրաձայն զայրացավ մեկը:

— Դուք ծաղրում եք ինձ, ինչ ե, — գոչեց հանկարծ մի յերիտասարդ կին, փորը կանգնել եր հենց պատուհանի առաջ: Նա զրգոված թափահարում եր ձեռքերը փոսկե ակնոցով պաշտոնյայի ուղիղ քթի առաջ:

— Ձեմ հասկանում, թե ինչու յեք բղավում, — պատասխանեց նրան պաշտոնյան: — Ձե՞ փոր դուք անմիջապես կարող եք տեղ ստանալ: Հենց եզուց գնացեք աշխատանքի:

— Յես փորտեղից ճարեմ հազար մարկ գրավա-կանը: Իմ գրպանում իսկի մի պֆեննիգ ել չկա: Կամ գուցե դուք ինձ փող կտար:

Հերթի կանգնած բոլոր կանայք համակրանքով ականջ էյին դնում այդ վեճին: Նրանք լուռ էյին, բայց նրանց դեմքերը խոժոռ էյին ու մռայլ:


— Փանձապահուհին միշտ պիտի գրավական մտցնի, — սառնասիրտ շարունակեց պաշտոնյան: —

Դե հո բոլոր մարդիկ ազնիվ չեն՝ պատահում ե, փոր զանձապահուհիներն անհայտանում են փող ռըվա յեկամուտի հետ միասին:

— Բայց պատահում ե նաև, փոր ինքը՝ գործա-տերն ե անհայտանում գրավի հետ միասին, — ա-սաց մեկը հերթի միջից:

— Կամաց, — բղավեց պաշտոնյան:

— Ձե, յես արդեն մինչև կոկորդոս կշտացել եմ, — գործազուրկ կինը բռունցքով խփեց սեղանին: — Ինձ աշխատանք տվեք, իմ յերեխաներն ուտել են ուզում:



— Իսկ ինչո՞ւ դուք եղբան շատ յերեխաներ ու-նեք, — ծաղրում եր այդ կնոջը պաշտոնյան:

— Ինչպե՞ս եք համարձակվում կշտամբել ինձ: — Յերբ ինձ հեռացնում էյին գործարանից, ասում էյին, թե գերմանացի կինը պետք ե յերեխաներ ծնի ու հոգ տանի իր ոջախի համար: Իսկ հիմա, յերբ խոհանոցային կճուճները դատարկ են և յե-րեխաներն ուտելու բան չունեն, դուք պարտավոր եք աշխատանք տալ ինձ: Յես չեմ գնա եստեղից, մինչև փոր դուք աշխատանք չտաք ինձ:

— Պահանջվում են յերկու յերիտասարդ սիրուն

աղջկերք ռեկլամային վահանատախտակներ ման
ածելու համար, — հայտարարեց մի պաշտոնյա մի
ուրիշ սեղանից: Տասնհինգ — քսան աղջիկ նետվե-
ցին դեպի նա:

— Յես կբերեմ իմ յերեսաներին եստեղ, —
գործազուրկ կնոջ ձայնը հնչում էր բեկ-բեկ և խուլ,
բայց վոչ վոք արդեն չէր լսում նրան:

Շառլոտտա Յունեմանը վշտագին հետեվում էր
մեծ պատի ժամացույցի սլաքների ընթացքին:

Մեկ անց կեսն է արդեն մեկ անց կեսն է — մտա-
ծում էր նա հուսահատությամբ: — Ի՞նչ անեմ յես
հիմա: Ապահովագրական դրամարկը շուտով կփակ-
վի, գրպանումս — վոչ մի պֆեննիգ, իսկ տանն ինձ
սպասում են յերկու սոված, հիվանդ յերեսաներ:

— Պահանջվում է մի ցրիչ իր սեփական հեծա-
նիվով, — հայտարարեց նորից պաշտոնյան:

Հերթից դուրս յեկավ մի աղջիկ ռ. մոտեցավ
պատուհանին: Մնացածը վրդովված խոսակցում
էին:

— Պետք չի՞ արդյոք մի շոֆեր իր սեփական մե-
քենայով, — հարցրեց ծաղրական տոնով մի պա-
ռավ լվացարար:

Բայց վոչ վոք չէր ծիծաղում: Այդ թշվառ,
հուսահատված կանայք, վորոնք գալիս էին այստեղ
ամեն ուր, սիրտ չունեցին ծիծաղելու: Նրանցից շա-
տերը ստիպված էին թողնել յերեսաներին տանն
առանց հսկողության:

«Ինչ համարձակ կին է այդ գործազուրկը, —
մտածում էր Շառլոտտա Յունեմանը: — Այ թե ինչ-
պես պետք է վարվել: Պետք է բերել այստեղ
յերեսաներին»:

Բայց նա գիտեր, վոր ինքը յերբեք սիրտ չէր
անի այդպիսի բան անելու:

Հերթը հուզվում էր: Կանանցից մի քանիսը

բարձր հայհոյում էին բորսայի ծառայողներին:

— Յես կհրամայեմ ազատել շենքը, լսում եք:
Յեթե դուք չհանգստանաք, յես վոստիկանությանը
կկանչեմ, — փքված գոռում էր պաշտոնյան:

Իսկ Շառլոտտա Յունեմանն անդադար նայում
ժամացույցի սլաքին և վերջ ի վերջո կամաց լաց
յեղավ:

— Հը՛, ի՞նչ պատահեց եստեղ, ի՞նչ եք վայնա-
սունը դրել, — դարձավ նրան մի փոքրիկ, ամրա-
կազմ, արդեն վոչ յերիտասարդ կին: Նրա կլոր յե-
րեսը բարենոգի ժպտում էր: — Ձերոնցից հո մեռ-
նող չի՞ յեղել:

— Ձե, մեռնող չի յեղել: Բայց յես փակել եմ
յերեսաներին տանը... Յես դեռ պիտի ապահովա-
գրական դրամարկը գնամ, և վախենում եմ, վոր
այն կփակեն ավելի շուտ, քան այստեղ իմ հերթը
կհասնի, — պատասխանեց ֆրաու Յունեմանը ար-
տասուքների միջով:

— Լաց մի լինեք: Իմ փոքրիկները նույնպես
մնում են մեռնակ, և վոչինչ չի պատահում նրանց:

Յերբեմի հարեմաններից մեկն ու մեկը հան-
դիպում է նրանց մոտ մի ըոպեյով, և եղպես ել
յուրա յենք գնում:

— Մի՞թե դուք դռները բաց եք թողնում, — տե-
ղեկացավ Շառլոտտա Յունեմանը:

— Մի՞թե դուք կարծում եք, թե կարող են գո-
ղանալ փոքրիկներին, — ծիծաղեց նրա բարենոգի
խոսակիցը:

— Իսկ ինչպե՞ս, դուք խնդրում եք ձեր հարևա-
նուհիներին ուշք դարձնել ձեր յերեսաներին:

— Ձե, ինչ կարիք կա, նրանք արդեն իրենք ել
գիտեն, վոր յես ամբողջ ուրը զբաղված եմ բորսա-
յում նշումներով: Իսկ յեթե փոքրիկները սովածա-

նում են, — նրանց համար այնքան ել դժվար չի տաքացնել կարտոֆիլի պյուրեն:

— Ինչ բախտավոր եք դուք, վոր այդքան լավ հարեփաններ ունեք, — հառաչեց Շառլոտտա Յունեմանը:

— Դե, դրանք բոլորը բանվորների կանայք են, իսկ հիմա ամենքի դրուժյունն ել մեկ ե, — պատասխանեց փոքրիկ կինը: — Նրանք ինձ են ոգնում, յես ել նրանց: Այդպիսով մի կերպ գլուխ ենք պահում: Իսկ դուք վորտեղ եք ապրում, — հարցրեց նա:

— Ա՛խ, յես ապրում եմ Վեյնշտրասսե փողոցում: Յես նույն իսկ չեմ ել կարող ասել, թե ով ե ապրում մեր տանը: Համենայն դեպս դրանք այնպիսի մարդիկ են, վորոնք չգիտեն ինչ ե կարիքը: Մի քանի անգամ յես ուզում եյի խոսել նրանց հետ, բայց սիրտ չեյի անում: Նրանք այնքան խոժոռ են նայում ինձ վրա... — և ֆրաու Յունեմանը նորից լաց յեղավ:

— Դե, դե, սիրտներդ պինդ պահեք, — մխիթարում եր նրան մյուս գործազուրկը: Կամաց կամաց ամեն ինչ կուղղվի: Պետք ե միայն ինքներդ ձեզ պինդ պահեք: Իսկ արտասուքները վոչինչով չեն ոգնի:

Վերջապես յեկավ Շառլոտտա Յունեմանի հերթը: Նրա քարտը դրոշմված եր: Այսօր այդ դրոշմը ինչ վոր թունավոր կանաչ գույն ուներ: Դրոշմի թե գույնը և թե նկարը հաճախ փոփոխում եյին, վորպեսզի գործազուրկների համար այնքան ել հեշտ չլիներ կեղծելու այն:

«Իսկ հիմա շուտ, շուտ դեպի ապահովագրական գանձարկղ» — մտածեց ֆրաու Շառլոտտան: Նա նույն իսկ սիրտ չեր անում ժամացույցին նայելու ու գլխապատառ վազեց սանդուխքով ներքեփ: Նրա հանդեպ գալիս եյին ուրիշ գործազուրկներ,

տղամարդիկ և կանայք, յերիտասարդ և ծեր, վորոնք նույնպես ամեն ուր գալիս եյին այդտեղ իրենց քարտերը դրոշմելու: Բանն այն ե, վոր յեթե գործազուրկի քարտի վրա չլիներ այդ պարտադիր ամենորյա նշումը, նա նպաստ չեր ստանա: Ընդհանրապես սա աշխատանքային բորսա յեր, վորտեղ բանվորներն աշխատանք պիտի ստանային: Բայց այնքան քիչ աշխատանք կար, և այնքան շատ գործազուրկներ, վոր բորսան պարզապես դրոշմ դնելու մի բյուրո յեր դարձել: Գործազուրկների մեծ մասը յերկու տարուց ի վեր գալիս եյին դրոշմելու իրենց քարտերը և վաղուց ի վեր հույսները կորցրել եյին վորեն աշխատանք գտնելու:

Անձրևը սաստկանում եր: Սոցապղծամարկղ գնալիս ճանապարհին Շառլոտտա Յունեմանը նորից թրջվեց:

— Կարող եք չշտապել, արդեն փակ ե, — հայտնեց նրան մուտքի մոտ դռնապանը, վոր գրոհայինների համազգեստ եր հագել:

Նա նույնիսկ չթողեց նրան ներս մտնի շենքը: Անշարժ կանգնած եր ֆրաու Յունեմանն անձրևի տակ և նրա կաթիլները գլորվում եյին նրա կապտավուն գունատ յերեսի վրայից:

— Յես... յես... պետք ե... — հուսահատ թոթովում եր նա:

— Դուք յերեվի շատ զբաղված եյիք եսօր և այդ պատճառով ել ուշացել եք: Տարորինակ մարդիկ են ես գործազուրկները — գործ ել չունեն անելու, ամբողջ ուր թրեփ են գալիս ամեն տեղ բայց դու տես, վոր չեն սովորում ժամանակին գալ:

— Խնդրում եմ ձեզ... շատ եմ խնդրում...

— Կորեք եստեղից: Եզուց կգաք, — կտրեց նրան կոպտաբար դռնապանը:

— Ի՞նչ յես պիտի դրամարկդ գնամ, յես ուտելու փոշինչ չունեմ, իսկ տանն ինձ սպասում են յերկու սոված, հիվանդ յերեխաներ: Մտածեցեր դուք միայն — մեկը ծծկեր ե, իսկ յերկրորդը նույնպես դեռ բոլորովին փոքր ե:

— Կորեք, գնացեք ձեր յերեխաների հետ, հասկացա՛ք: Յեթե յես ասացի, թե այլևս փոշ փոքի ներս չեմ թողնի, ուրեմն եղպես ել պիտի լինի:

Յե՛վ դռնապանը վռնդեց ֆրաու Յունեմանին փողոց:


Անցորդները կանգ եյին առնում ու նայում:

Դա զարհուրելի յե, — վրդովված գոչեց վայելու չվառգույնի անձրևոցով մի յերիտասարդ տիկին իրեն ուղեկցող հասակավոր պատկառելի պարոնին: — Դու լսեցի՞ր, Ոսկար, այդ կինը թողնում ե տունը իր յերեխաներին և թրև ե գալիս ամեն տեղ: Ինչպիսի լրբություն: Նա արժանի չե մոր սուրբ անունը կրելու:

— Նա արդարացի զայրույթ ե առաջացնում բոլորի մեջ, — պատասխանեց տղամարդը, հեռացնելով իր տիկնոջը փողոցային սկանդալից:

Ֆրաու Յունեմանը սաստիկ ամաչում եր, փոր մարդիկ կանգ են առնում ու աչքերը չռում նրա վրա: Նա շուռ յեկավ ու հեռացավ այդտեղից:

— Ինչ անամոթն ե, — քրթմնջաց նրա յետևից դռնապանը: Նա ուզում եր ինչ փոր մի հայհոյանք ուղարկել ֆրաու Յունեմանի յետևից, բայց հանկարծ նրա հայացքը հանդիպեց մոնտյորի կապույտ շորեր հագած մի մարդու հայացքին: Սա լուռ դիտում եր փողջ անցուղարձը: Նրա աչքերում այնքան ատելություն կար, փոր դռնապանը գերադասեց անմիջապես անհայտանալ...



Իսկ Շառլոտտա Յունեմանը մոլոր քայլերով գնում եր փողոցով հուսահատությամբ լի:

— Աստված իմ, տանը պառկած են սոված, հիվանդ յերեխաները: Ինչո՞վ կերակրեմ նրանց, փորտեղից բժիշկ ճարեմ:

Հանկարծ նա կանգ առավ: Իսկ շտապ ոգնության կայանը: Չե փոր այնտեղ միշտ հերթապահ բժիշկներ կան:

Ֆրաու Յունեմանը մի փողոց ել կտրեց ան-
ցավ, թեքվեց դեպի ձախ ու, վերջապես, կանգ
առավ հրապարակում մի բարձր տան առաջ։ Մեծ
ցուցանակի վրա գրված էր՝ «Բեռլին քաղաքի
շտապ ոգնություն»։ Նա մտավ այդտեղ՝ Նրա սիր-
տըն ուժեղ բաբախում էր, շունչը կանգ էր առնում։

— Ձեզ ինչ է պետք, — հարցրեց սանիտարը։

— Յես... ինձ... իմ յերեխաները... — կակա-
զելով փնթփնթում էր Ֆրաու Յունեմանը։

Այդ ամբողջ որվա ընթացքում կրած հուզ-
մունքներից ու հոգսերից նա հանկարծ ուշքը կորց-
րեց և ընկավ աթոռի վրա։

Սանիտարն անուշադրի սպիրտ մոտեցրեց նրա
թիկն և Ֆրաու Յունեմանն ուշքի յեկավ։ Յեկավ
մի յերիտասարդ բժիշկ։

— Ձեզ հետ ինչ վոր բան է պատահել, — հարց-
րեց նա։

— Ձե, բայց իմ տանը յերկու փոքրիկ հիվանդ
յերեխաներ կան և ինձ բժիշկ է հարկավոր...

— Բան է պատահել ձեր յերեխաներին։


— Ձե, չե... Նրանք հիվանդ են... Յես չգիտեմ,
ինչ է պատահել նրանց... — բացատրում էր դժ-
բախտ կինը։

— Վորբան տաքություն ունեն նրանք։

— Ձեմ կարող ասել, ախրը վորտեղից կարող եմ
յես շերմաչափ ճարել։ Ձե վոր յես գործազուրկ եմ։

Յեվ Շառլոտտա Յունեմանն աղաչական նայեց
բժիշկին։

— Բայց, սիրելիս, մենք ցավոք սրտի վոչինչով
չենք կարող ոգնել ձեզ։ Մենք բժիշկ ենք ուղար-
կում միայն դժբախտ դեպքերի համար, իսկ մնա-
ցած բոլորը մեզ չի վերաբերում։



Բժիշկը շուռ յեկավ ու դուրս յեկավ սենյակից։
Ֆրաու Յունեմանը հարցրեց սանիտարից։

— Խորհուրդ տվեք ինձ հիմա դիմեմ յես, — իմ
յերեխաները կորուստի առաջ են կանգնած։

Սանիտարը խղճաց այդ դողողացող, տանջված
կնոջը։

— Փորձեցեք իմանալ կաթոլիկական հիվան-
դանոցում։ Գուցե ձեր բախտը կտրի և ենտեղ ըն-
դունեն ձեր յերեխաներին։

Շաուլոտտա Յունեմանը գնաց։ Նորից անվերջ
փողոցներ...

Ֆրաու Յունեմանը յերեքվում եր թուլու-
թյունից։ Առավոտից նա միայն մի քիչ ցիկորիի
լակ եր խմել։ Հոգմունքից քաղց չեր զգում, բայց
նրա ներսում ամեն ինչ կծկվում եր ու ցավում։

«Ժամի քանի՞սը կարող ե լինել հիմա։ Ախր
յերեխաները մի բան պիտի ուտեն։ Բայց ի՞նչ։ Ինչ
կարող եմ տալ նրանց», — հուսահատ մտածում եր
նա և գնում եր առաջ ու առաջ։

Ս. Գեդվիգայի անվան կաթոլիկական հիվան-
դանոցի ընդունարանում Շաուլոտտա Յունեմանը
դիմեց մի կաթոլիկ կույսի, խնդրելով ընդունել
իր հիվանդ յերեխաներին։ Նա հավատացած եր,
վոր սրտացավ կույսերը չեն մերժի իրեն։

— Ո՞վ կվճարի ձեր կողմից, — չոր հարցրեց
նրան կույսը։ — Դուք գրված եք հիվանդանոցային
դրամարկղում։

— Վճարե՛լ։ Յես փող չունեմ վճարելու, — պա-
տասխանեց խեղճ մայրը, ձեռները տրորելով։ — Յես
արդեն յերկու տարի յե, վոր անգործ եմ։

— Մեզ դա չի վերաբերում։ Մեր հիվանդա-
նոցը վճարովի յե։ Գնացեք ձեր հիվանդանո-
ցային դրամարկղը։

Ֆրաու Յունեմանը յերեքալով դուրս յեկավ
սուրբ Գեդվիգայի հիվանդանոցից։

«Բա ի՞նչ անեմ, վերջն ինչ պիտի լինի», — մը-
տածում եր նա հուսահատված։

Նա կգնա հիմա հիվանդանոցային դրա-
մարկղի բժշկի մոտ։ Նա կբացատրի նրան, վոր
ժամանակ չի յեղել ուղեգիր ստանալու, վոր նա
կբերի ուղեգիրը վաղ առավոտյան։

Բժշկի ընդունարանը, բարեբախտաբար, դա-
տարկ եր։

— Խնդրեմ, — ասաց բժիշկը և ներս թողեց
նրան իր առանձնասենյակը։ — Գործադիւրկ եք։

— Այո։

— Յույց տվեք ձեր հիվանդանոցային ուղե-
գիրը։

— Հերը բժիշկ, եսոր յես ուշացա դրամարկղից։
Յես վաղը կբերեմ ուղեգիրը։

— Ինչ ե, ձրի՞ պիտի աշխատեմ ձեզ համար։
Ձեք կարող ժամանակին գալ դրամարկղ։

— Հերը բժիշկ, ահա իմ քարտը։ Համոզվեցեք,
վոր նրանում ամեն ինչ կարգին ե։ Յես վաղը կը-
բերեմ ուղեգիրը։ Անպայման։ Աղաչում եմ ձեզ,
գնանք ինձ հետ իմ հիվանդ յերեխաների մոտ, —
պաղատում եր ֆրաու Յունեմանը։

— Յեկեք վաղը և ուղեգիր բերեք, — բարկա-
ցած պատասխանեց բժիշկը։ — Յեվ բերեք յերեխա-
ներին այստեղ։

Ֆրաու Յունեմանը շուռ յեկավ դեպի դուռը։
Բժիշկը բղավեց նրա հետեվից։

— Յեվ, տեսեք, չուշանաք։ Յես ընդունում եմ
առավոտն իննից մինչև տասը։ Իրանից ուշ յես
տանը չեմ լինի։

Նորից փողոցը: Նորից անձրևը: Շաուրտտայի փոռքերը ծալվում եյին: Աչքերի առաջ սեփանում եր: Ակամայից նա դանդաղեցրեց քայլերը: Ինչպես միշտ, մոտենալով իր տանը, նա ինչ վոր տանջալից յերկյուղ եր զգում: Նա վախենում եր նորից տեսնել խոնավ նկուղը, լսել իր յերեխաների սոված աղաղակը:


Ֆրաու Յունեմանը ինք զինքը հավաքեց ու մտավ բակը: Կտնգ առնելով սանդուխքի մոտ, նա ալանջ դրեց: Վոչ մի ձայն: Դա հանգստացրեց նրան և նա կամացուկ բացեց դուռը:

«Ինչպիսի բախտավորություն ե, վոր յերեխաները քնած են: Նրանք յերեվի հոգնել են լաց լինելուց և, վերջապես, քնել», — մտածեց նա:

Ածխի արկղում ընկած եյին ածխի ու ցախի մնացորդները: Նա կրակ արեց ու տաքացրեց կարտոֆիլը: Միայն կարտոֆիլ, առանց վորևե ճարպի:

— Մայրիկ, մայրիկ, — այդ Վոլֆգանգը արթնացավ հափի, հափի:

Հափի — նշանակում եր «բան տուր ուտեմ»:



Մայրը տվեց նրան յերկու տաք կարտոֆիլ, և տղան ագահությամբ կուլ տվեց դրանք:

— Ուր, ուր, — բղավեց նա նորից: Դա արդեն նշանակում եր «ջուր»: Նա մի լիքը գավաթ ջուր խմեց, մինչև վերջին կաթիլը:

«Նա դեռ տաքություն ունի», — մտածեց մայրը, ձեռքը դիպցնելով տաք ճակատին:

Նա տաք փաթաթեց փոքրիկ ինգային և նրան ել ջուր խմացրեց: Ընդան շատ թույլ եր և նորից անմիջապես քնեց: Ապա ֆրաու Յունեմանն ինքը կերավ յերկու կարտոֆիլ: Վերջին յերեք հատը կճուճի հատակին թողեց նա փոքրիկ Վոլֆին՝ առավոտյան համար:

«Ի՞նչ պիտի ուտենք մենք եգուց: Եգուց ի՞նչ պիտի անենք, — այդ մտքերը վոչ մի վայրկյան հանգիստ չեյին թողնում նրան: Լվանալով և փրոելով յերեխայի շորերը, նա հանեց իր թաց հագուստը և ուժասպառ ընկավ մահճակալի վրա: Միայն այժմ, հանգիստ պառկած մահճակալին, նա զգաց իրեն կրծող քաղցր: Մի խուլ, ծանր ցավ, կարծես լցրեց նրա ամբողջ եյությունը:

«Բերնհարդը կուշտ ե գոնե», — մտածեց նա: — Եղ մի բանը լավ ե»:

Դա միակ ուրախալի միտքն եր այս ամբողջ զժվարին որվա ընթացքում...

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ԻՆՉՊԵՍ ՎԱՐՈՒՆԳՆԵՐՆ ԸՆԿԱՆ ՀԻՏԼԵՐԻ ՄՈՏ

Գդալները չխկչխկում եյին ափսեներին: Ինչ շուտ դատարկվեցին ափսեները:

— Ֆրեյլեն, ելի տվեք, — խնդրում եյին յերեխաները:

— Քնից առաջ փսաս ե շատ ուտելը: Դուք վատ յերազներ կտեսնեք, — պատասխանեց ֆրեյլեն Կուլնիգունդան:

Աղախինը հավաքեց դատարկ ափսեներն ու յուրաքանչյուր յերեխայի առաջ մի բաժակ կաթ դրեց:

Յերեխաները հաճույքով խմում եյին կաթը:

Անկյունում մի փոքրիկ սեղանի կողքին նստած եյին յոթ յերեխաներ: Նրանք պատժված եյին, և նրանց ընթրիք չեր հասնում: Ահա թե ինչո՞ւ նրանք նստել եյին առանձին սեղանի կողքին: Դաստիարակության ալգպիսի սխտեմն ոգտակար եր նաև նրանով, Վոր հնարավորություն եր տալիս ամեն որ մի քանի մարկ տնտեսել յերեխաների սննդի հաշվին: Ֆրեյլեն Կուլնիգունդան մեծ նշանակություն եր տալիս դրան: Առանձին ուշադրություն եր դարձնում ֆրեյլենն այն բանի վրա, Վոր պատժված յերեխաներն անպատճառ նայեյին, թե ինչպես են ուտում մյուսները: Դա սաստկացնում եր պատիժը, այն ավելի տանջալից եր դարձնում:

Պատժվածների միջև եր նաև Բերնհարդը: Տրխուր նայում եր նա, թե ինչպես խփշտում են շխան մնացած սաները: Բայց ճար չկար, պետք եր համբերել: Ֆրեյլենն այնպես մարդ չի, Վոր պատիժը վերացնի: Բերնհարդի կողքին բարձր բազկաթուռի վրա նստած եր փոքրիկ Հերբերտը, այդ որվա բոլոր առախորժությունների իսկական մեղավորը: Խեղճ փոքրիկ: Արտասուքները գլորվում եյին նրա թշերի վրայով, յերբ նա նայում եր Ռոլֆի վրա, Վորը հրճվանքով ծծում եր կաթը: Նույն իսկ Եգոնը, ամենից ավելի հնազանդ Եգոնը, որինակելի սանը, այսօր մնացել եր առանց ուտելու:

Ինչ անհամբերությամբ սպասում եյին պատժվածներն ընթրիքի վերջապալուն Վերջապես:

— Եգոն, — գոչեց ֆրեյլենը: — Փնա խոհանոց:

Եգոնը ուղղակի վեր ցատկեց ուրախությունից: Այ, ինչ եմ ասել: Նա մանկատան մեծ սաններ և հաճախ ոգնում եր խոհարարուհուն: Սա ել յերբեմն ժրաշան աշխատանքի համար Վորևե համեղ պատառ եր տալիս նրան իբրև վարձատրություն:

Եգոնը շատ եր հպարտանում դրանով, բոլոր յերեխաներն ել նախանձում եյին նրան:

— Դե շուտ, անցիր աշխատանքի: Յես եսօր շտապում եմ կինո, — ասաց խոհարարուհին:

Եգոնը հագավ ոեղինե գոգնոցը և սկսեց աշխատել: Կոնքի մեջ դեռ մի հատ կերակրի աման կար անլվա, և նրանում Եգոնը մի քիչ խանձրահամած վարսակապուր գտավ: Եգոնը յեռանդով քեր ընկած եր ու մաքրում ամանը: Պարզ ե, Վոր մաքրելիս մեկ յերկու բուռ վարսակապուր ել ընկավ բերանը:

Խոհարարուհին նստեց տաբուրետի վրա և, ծանր շունչ քաշելով, սկսեց հագնել իր նոր, լաթից տուֆլիները:

— Ֆրաու Վինտեր, դուք եստեղ չե՞ք մնա եսոր, — հարցրեց նրան Նգոնը:

— Ձե, տղաս: Եսոր դու ինձ կ'իօխարինես, թե չե՞ս կուշանամ կ'ինոյից:

«Տղաս» նշանակում էր, փոր ֆրաու Վինտերը շատ լավ տրամադրութեան մեջ էր:

Եգոնն ավելի համարձակ դարձավ:

— Ֆրաու Վինտեր, — ասաց նա, — յես սաստիկ ուտել եմ ուզում: Յես եսոր չեմ ընթրել...

— Ի՞նչ ես ասում: Ուրեմն դու ել ես չարու-թյուն արել, բացականչեց խոհարարուհին:

Այդ ժամանակ դանգը տոխն և նա գնաց դուռը բանալու: Յեկելի երգրիչ-տղան, բակալ աչի խանութից, և յերկու շիշ թթու դրած վարունգեր բերել: Նա դրեց շշերը խոհանոցի սեղանին և, տեսնելով, փոր ֆրաու Վինտերը շուռ ե յեկել, քաշեց Եգոնի աականջից:

Եգոնը բարկացավ և իր հերթին գցեց կեղտոտ շուրը տղայի վրա...

Վայ... Ֆրաու Վինտերի ամբողջ բուռը ծածկվեց ճարպի բծերով: Ֆրիշն ուրախ քմծիծաղ տվեց լեզու ցույց տվեց Եգոնին և, «բարի գիշեր» մաղթելով խոհարարուհուն, շտապ դուռս յեկավ դռնից, միաժամանակ պինդ ճմլեց Սիցի անունով անգորական կատվի պոչը: Սիցին, ֆրաու Վինտերի սիրելին, վայրենի ճիշ արձակեց, մի խոփշբով ցատկեց նստարանի վրա ու ընկավ կաթի կճուճը:

— Այ դու անպիտան, — բղավեց խոհարարուհին:


— Ֆրաու Վինտեր, յես մեղավոր չեմ, դե հո դիտմամբ չարի... — արդարանում էր Եգոնը:

Զբացան յերազներն ընթրիքի մասին: Խոհա-

րարուհին կատաղած այս ու այն կողմ էր նետվում խոհանոցում: Վերջապես նրա աչքին ընկավ խոհանոցային մեծ գդալը: Շրըխկ, շրըխկ... և հարվածները տեղացին Եգոնի մեջքին:

Ել ի՞նչ էր մոռում անելու Եգոնին: Նա լալիս էր ու քերքրում ամանը, լալիս էր ու քերքրում... Չէ՞ փոր ա, դե բոլորի համար մեղավոր եր բակալեայի խանութի տղան: Եգոնը լուռ կուլ էր տալիս արցունքները:

Ֆրաու Վինտերը հավաքեց կոտրված կճուճի կը-



տորները և շուտով սրբեց հատակին թափված կաթը: Նա տղմուկ էր խոհանոցում ինչպես փորոտ: Յերը նա լցնում էր ածուխն ածխի արկղը, այնպիսի մի փորոտ լսվեց, կարծես տունն էր քանդվում: Այդպիսի գոնե թվաց փոքրիկ Եգոնին: Վերջապես շորերը փոխելով իր սենյակում, նա պատրաստվեց գնալ Ենմքից նա բղավեց տղային:

— Իե, շարժվիր, շուտ, փորպեսդի մի քառորդ

ժամվա ընթացքում եստեղ ամեն բան պատրաստ լինի: Դու լաց կլինես, յեթե վերադառնալուց հետո յես եստեղ անկարգություն գտնեմ:

Գլխավոր մուտքի դուռը ծածկվեց և խոհանոցում մնացին միայն Եգոնն ու Միգի կատուն:

Ելոնը հեծկլտալով սկսեց մաքրել կերակրի ամանը Նա արդեն մի տարի յեր, վոր մանկատանն եր. և մինչև հիմա վոչ մի անգամ չեյին ծեծել նրան: Նա այնպես եր պարծենում դրանով, և բոլոր յերեխաներն ել նախանձում եյին նրան: Այսորվա որը ամեն ինչ կործանեց:

— Լավ եր վոր վոչ վոր չտեսավ, — մխիթարում եր տղան իրեն. — Իսկ յեթե հանկարծ Փրաու Վինտերը գանդատվի Փրեյլենին:

Բայց ահա աշխատանքը վերջացած ե: Եգոնը հանեց գոգնոգր, լվաց ձեռքերը ջրի ծորակի տակ և նորից ուշադրությամբ դիտեց խոհանոցը: Կարծես թե ամեն բան կարգին եր: Թթու գրած վարունգներով շշիւրը դեռ սեղանի վրան եյին: Խոհարարուհին մոռացավ կողպել դրանք մառանում: Թթու գրած վարունգներ: Ավելի համեղ բան Եգոնը յերբեք չեր կերել:

Փոքրիկ մատներն սրագ վորսացին շշի լայն բերնից կլորիկ և ախորժելի վարունգները: Եգոնը կուլ տվեց մի քանի հատ, առանց նույնիսկ նրանց համն զգալու: Ստիպված եր ելի յերկու հատ ուտելու: Բայց այդտեղ նա մտաբերեց յերեխաներին:

«Ո՛ր, դե իհարկե, նա միքիչ ել նրանց կտա՞ն թող իմանան ինչ լավ բնկեր ե Եգոնը»:

Եգոնը գրպանները լիքը վարունգ լցրեց և շշիւրի գլուխը ջուր լցրեց, վոր գողությունը չնկատվի:

Խոհանոցից նա գնաց ուղղակի ննջարան: Յերե-

խաները պառկել եյին մահճակալներին, ամենափոքրերն արգեն քնել եյին:

— Ֆրեյլենը գնացել ե, — հարցրեց Եգոնը:

— Նա դեռ չի յեկել:

— Տղերք, — կամաց ասաց Եգոնը, — վոր իմանաք ինչ եմ բերել:

Յերեխաներն ականջները սրեցին:

— Ի՞նչ, ի՞նչ:

— Վարունգներ:

— Ա՛յ, քեզ բան:

Յերեխաները վեր թռան մահճակալներից ու վազեցին Եգոնի մոտ:

— Ինձ տուր, Եգոն, տուր ինձ:

— Սուս արեք, Փրեյլենը գալիս ե, — հանկարծ բղավեց մեկը:

— Բա յես հիմա ի՞նչ անեմ, — հարցրեց Եգոնը կիսաձայն ու շոշափեց իր լիքը լցրած գրպանները:

Յերեխաները բոլորը նետվեցին դեպի իրենց մահճակալները: Եգոնն արագ հանվեց ու անհայտացավ վերմակի տակ: Բարեբախտաբար դա սուտ տալանապ եր:

— Պետք ե թաղցնել վարունգները, — շշիւրաց նորից Եգոնը: — Իսկ յերբ Փրեյլենը լուրսը հանգցընի, մենք կբաժանենք վարունգները. հա՛:

Բայց ուր պահել վարունգները: Ֆրեյլենը կուհիգունդայի աչքերը կարծես կատվի աչքեր լինեն: Նա իսկույն նկատում ե ամեն ինչ:

— Իսկ յես գիտեմ, յերեխեք, — ասաց Կարլիսենը, մի գունատ, հիվանդոտ տղա: — Յես գիտեմ: Մենք կպահենք վարունգները պատկերի յետևը: Ենտեղ Փրեյլենը չի տեսնի:

Բոլոր յերեսաները նայեցին ծանր, լայն շրջանակի մեջ դետեղված նկարին, փորկախված երկրորդ տի մահճակալի վերևը։ Դա Հիտլերի պատկերն էր։

— Շատ բարձր է, — ասաց Եգոնը։

Բայց Կարլիսենն զգուշությամբ բարձրացավ մահճակալի թիկնակին, կանգնեց վերևի ձուլի վրա ու ձգվեց փողջ հասակով։

— Հիմա, Եգոն, տուր ինձ վարունգները։ Յես կպահեմ դրանք։

Փորրիկ Հերբերտը հետաքրքրությամբ հետևում էր թե ինչպես Կարլիսենը ոգատար դարսում էր վարունգները Հիտլերի հետևի։

Յերբ Ֆրեյլենը մտավ ննջարան, բոլոր յերեսաները կարգով պառկած էին անկողիններում։ Ֆրեյլենը դժգոհ դեմքով հոտոտեց ողն ու նկատեց.

— Սենյակից ինչ փոր թթվահոտ է գալիս։

Յերեսաների սրտերն ուժեղ բաբախեցին։ Ֆրեյլենը բացեց լուսամուտը և դիտեց սենյակը։

— Ուշադրությո՛ւն, յերեսաներ, պատրաստվեք աղոթի, — հրամայեց նա։

Յերեսաները, յերկու ձեռքը միացնելով, արագ փնթփնթացին «Հայր մերը»։

— Դանդաղ։ Ո՛ւր էք շտապում։ Յետեմների՞ցդ են ընկել, ինչ է։ Յեթե դուք լավ չաղոթեք, յես կըստիպեմ ձեզ կրկնել աղոթքը քսան անգամ իրար հետևից։ Դե, կրկնեցեք։

— Հա — այդ մեր, փնթփնթում էին յերեսաներն ու մտածում աղի վարունգների մասին, փորոնք դրված էին Հիտլերի հետևի։

Գարծես դիտմամբ, այդ յերեկո Ֆրեյլեն Կուլնիգունդան յերկար չեր հեռանում։

— Յես կպատմեմ ձեզ մեր առաջնորդ Հիտլերի

մասին, — հանկարծ ասաց նա։ — Լսեցեք ուշադրությամբ, յերեսաներ։

Դաստիարակչուհու խոսքերը կարծես հետաքրքրեցին յերեսաներին։ Նրանք անընդհատ նայում էին Հիտլերի պատկերին։ Ֆրեյլեն Կուլնիգունդան գոհ էր։

— Այո, այո, մի լավ նայեք նրան, — շարունակեց նա։ — Տեսե՛ք, ինչ բարձր ճակատ ունի նա, ինչ ազնիվ դեմք։

Յերեսաները նայում էին կախարդվածների նման։ Իսկապես — դա մի զարմանալի նկար էր։ Նկարիչը, ինչպես յերևում է, ուղեցել էր պատկերացնել Հիտլերին սիրալիր ժպիտը դեմքին։ Բայց վրձինը մի չար կատակ էր արել նրա հետ։ Ժպիտը մի չար քմիքադի յեր նմանում, և պատի վրայից յերեսաներին էր նայում ծամածռությամբ ալանդակված դեմքը։

— Նայեցե՛ս նրա առնական կրճքին, — տարված շարունակեց Ֆրեյլենը, հիացած իր սեփական պերճախոսությամբ։

Յերեսաներն աչքերը չեյին հեռացնում պատկերից։

Բայց այս ի՞նչ է։ Այս ի՞նչ հրաշք է։ Պատկերից պոկվեց մի փոքրիկ վարունգ ու, փորպես հասած սալուր, ընկավ ուղիղ Հերբերտի բերանը։ Տղան ուրախացավ և ուղում էր անմիջապես ուտել այն։ Բայց Եգոնը նշաններով հրամայեց նրան թափանել վարունգը բարձի տակ։ Հերբերտը զգամությամբ հնազանդվեց և, նորից պառկելով մեջքի վրա, լայն բացեց բերանը՝ գուցե Հիտլերը մի վարունգ ել կզըզի նրան։

Յերեսաները չկարողացան զսպել իրենց ու ծիծաղեցին։ Ախր շատ ծիծաղելի յեր Հերբերտն իր լայն բացած բերանով։

— Ես քննեմ ծիծաղեմ: Հանգիստ: — Յե՛վ Ֆրեյլեն Կու-
նիգոլենդան ախպես ուժեղ խփեց վոտոր հատակին,
վոր նույնիսկ ապակիները զնգզնգացին: Յե՛վ հենց
այդ ժամանակ էր, վոր վորձանքը պատահեց: Հիտ-
լերը ցնցվեց, և ուրախությունից փայլող Հերբեր-
տի վրա թափվեց թթու վարունգների անձրևը:

Տղան մոռացավ մանկատան մասին, մոռացավ
շարասիրտ Կունիգոլենդային, մոռացավ, վոր ինքը
սոված է մնացել ամբողջ ուրը, և փոխադրվեց մի ակն-
թարթում ինչ վոր բախտավոր, յերանավետ յեր-
կիր, վորտեղ համեղ պատառներն իրենք իրենց գա-
լիս ընկնում են յերեսանների բերանները:

— Ո՞վ, ո՞վ:

Ֆրեյլեն Կունիգոլենդան ուղղակի շնչասպառ էր
լինում գայլույթից:

Ո՞վ համարձակվեց:

Եգոն Գեդիկեն ամբողջովին կուչ յեկավ ու մի
կծիկ դարձավ: Ֆրեյլենը շուռ յեկավ ու բռնեց նրա
ուսերից:

— Այդ դժուր է, իհարկե: Ա՛յ դու սրիկա: Դու
խոհանոցից ես գողացել վարունգները: Դե սպասիր
հիմա:

Նա դուրս քաշեց Եգոնին մահճակալից, և նրա
փայտը անգթաբար իջավ տղայի վրա: Եգոնը գո-
ռում էր: Նա գոռում էր ցավից ու ստորացումից:
Ֆրեյլենը դեռ յերրիք չեր ծեծել նրան... Նա — ամե-
նամեծն է յերեսանների մեջ... և ահա նրան խայտա-
ռակ կերպով ծեծում են բոլորի աչքի առաջ:

Վերջապես, Ֆրեյլենը, հոգնելով, թողեց Եգոնին
ու մոտեցավ Հերբերտին:

— Ա՛յս րոպեից տուր վարունգները:

Հերբերտը ցնցվեց և վախեցած նայեց Ֆրեյլեն-

նին, բայց չհամարձակվեց հակառակվել: Ավանդ. նա
վերադարձավ յերազների աշխարհից դեպի ման-
կատան դաժան իրականությունը:

Իր բարկությունը թափելով Հերբերտի վրա,
և խելքի բերելու համար մի քանի յերեսանների
եղ լավ ապտակներ հասցնելով, Ֆրեյլենը հանգ-
ցրեց լույսն ու շրխկոցով ծածկեց դուռն իր հե-
տևից:

Յերեսանները կամաց հեծկտում էին: Վոմանք
վիրավորանքից, վոմանք սովածությունից, վո-
մանք էլ պարզապես վախենում էին Ֆրեյլեն
Կունիգոլենդայից:

Բերնհարդը գլուխը թաղեց բարձի մեջ ու
մտածում էր «Յեթե մայրիկս իմանար, վոր ամ-
բողջ ուրն ինձ վաչինչ չեն տա ուտելու, նա յերկի
առավոտյան կտար ինձ են կարտոֆիլը»:

ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ

ՏԱՊԱԿԱԾ ՅԵՐԵՄԱՆԵՐԻ ՅԵՎ ԱՆՏԵՍԱՆԵԼԻ
ԿՈՄՈՒՆԻՍՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ

— Յեթե Ռոբբին խելոք տղա լինի և բոլորն ուտի, նա կստանա նաև կրեմի պուդինգ, — ասաց Լուցին և դրեց տղայի առաջմի ափսե տապակած յերշիկ ու կարտոֆիլի սալատ:

Լուցին ծառայում է իբրև աղախին Մերկերների մոտ: Ֆրանս Մերկերը պատրաստվում է ինչ վոր տեղ գնալ յերեկոյան ու շորերն է փոխում իր ննջարանում: Լուցին հրամայված է ընթրիք տալ յերեխային:

Ռոբբերտը նստած է սեղանի կողքին, վտառներն է թափահարում և դժկամորեն, ուժից վեր, ծամում է յերշիկը: Նա բոլորովին սոված չէ: Յերեկոյան թեյին նա մի կտոր տորթ է կերել: Բայց կրեմ-պուդինգ... Շատ հետաքրքիր է իմանալ, ինչ պուդինգ է դա՝ շոկոլադի, թե վանիլի: Ախ, ափսոս, վոր Ռոբբին իսկույն չհարցրեց այդ մասին:

Ռոբբիի հայրը նստած է բազմոցին ու լրագիր է կարդում: Ժամանակ առ ժամանակ Ռոբբին խեթ նայում է նրան, բայց չի վստահում ընդհատել ընթերցումը: Հայրը միշտ բարկանում է, յերբ նրան խանգարում են: Ռոբբին շուռ ու մուռ է գալիս աթոռի վրա: Նա ինչպես ել վոր լինի ուզում է խոսել հոր հետ ատրճանակի մասին...

Եհ, մի շուտ վերջանար ես յերշիկը: Ինչպես են խշխշում թերթերը, յերբ հայրը շուռ է տալիս երբ, Հիմա նա բոլորովին չի յերևում լրագրի հետևում: Յգուցի են միայն վտառները՝ բարձրաճիտ կաշվե կոշիկներում: Թվում է, թե նրանք հենց իրենք իրենց են ապրում: Այ քեզ զվարճալի բան: Ռոբբին բարձր քրքջում է Լրագրի հետևից հերևում է հոր դեմքը: Այբերտ Մերկերն այսուր լավ է տրամադրված: Ռոբբին զգում է այդ:

— Հայրիկ... շողոթորթ ձայնով սկսում է նա:

— Հր, ի՞նչ:

— Ատրճանակ առ ինձ համար: Մալրիկս ասում էր, վոր ամեն մի գրոհային պիտի ատրճանակ ունենա, իսկ յես հիմա գրոհային եմ:

— Իե, վոր մայրիկն ասում է, ուրեմն եղպես ես, — պատասխանում է հայրը:

— Ռոբբին ատրճանակ կստանա, Ռոբբին ատրճանակ կստանա, — ուրախ բացականչում է տղան ու չափ է ընկնում սենյակում:

— Բայց առաջ ընթրիքդ կեր, փոքրիկ աղմկարար: Յերեք ըոպելից հետո Ռոբբին հպարտ ցույց է տալիս հորը դադարկ ափսեն:

— Ռոբբին խելոք տղա չէ, Ռոբբին բոլորը կերավ, — գովում է նա ինքն իրեն:

Ահա և պուդինգը: Բանից դուրս յեկավ, վոր շոկոլադով է:

Ռոբբին արագ խժոռում է պուդինգը: Ուտելով քաղցրավենիքը, նա բարձրանում է հոր ծնկներին:

— Հայրիկ, — նորից սկսում է նա խոսակցությունը, — յես եսոր հարգրեցի, հարգրեցի մայրիկից, թե ում վրա յես դու կրակում: Իսկ նա բարկացավ ու վոշինչ չպատասխանեց ինձ:

— Այ, Դա շատ զուր ե արել: Մայրիկը պիտի պատասխաներ քո հարցերին:

— Իսկ ում վրա յես կրակում դու, հայրիկ:

— Գերմանիայի թշնամիներն վրա, — պատասխանեց Ալբերտ Մերկերը դաժան ձայնով:

— Իսկ ով են Գերմանիայի թշնամիները:

— Այ, որինակ, հրեաները:

Ռոբերին մտքի մեջ ընկավ, ապա, հիշելով մի բան, գոչեց.

— Հայրիկ, հայրիկ, իսկ հերը Աբելեսը հրեա՞ յե:

— Այո:

— Բա ինչո՞ւ դու չկրակեցիր նրա վրա, յերբ նա յերեկ մեզ մոտ հյուր երև կոֆե յեր խմում եստեղ: Իսկ Լուցին ել գնեց նրա համար ումիտորթ, վորովհետև մայրիկն ասաց, վոր հերը Աբելեսըն ամենից շատ հենց այդպիսի տորթ ե սիրում:

— Այդ դու գեռ չես հասկանում, Ռոբեր: Հերը Աբելեսը քերին աստիճանի հարգելի և պատկանելի պարոն ե: Չե՞ վոր նա մեծ բանկի գլխավոր դիրեկտորն ե:

— Ուրեմն դիրեկտորների վրա կրակել չի՞ կարելի:

— Չե, իհարկե չե: Մանավանդ, վոր մենք ամելի ուսմանի թշնամիներ ունենք:

— Ով՞ են դրանք:

— Կոմունիստները:

— Իսկ նրանք ի՞նչ են անում:

— Նրանք ուտում են փոքրիկ յերեխաներին:

— Բայց Ռոբերին նրանք չեն համարձակվի ուտել:

— Չե, քո հայրը և նրա ընկերները չեն թույլ տա, վոր նրանք եղպիսի բան անեն:

— Հայրիկ, իսկ նրանք շատ են, եղ կոմունիստները:

— Այո, բավական կան: Յես չափազանց շատ աշխատանք ունեմ:

— Յե՞վ դու պիտի բռնոտե՞ս նրանց բոլորին:

— Յես անում եմ, ինչ վոր կարող եմ: Բայց, Ռոբեր, դա թեթև գործ չի:

Ռոբերի խարտյաշ գուխը տխուր խոնարհվեց: Քիչ, շատ քիչ բան հասկացավ Ռոբերին հոր խոսքերից: Բայց մի բան լավ պահեց միտքը՝ շարժարդիկ կոմունիստները — անհանգստացնում են հայրիկին: Պետք ե ոգնել նրան: Բայց ի՞նչպես: Ռոբերն մտքի մեջ ընկավ:

— Հայրիկ:

— Ի՞նչ:

— Հայրիկ, յեթե դու մի ատրճանակ բերես ինձ համար, մեսք միասին կկրակենք Գերմանիայի թշնամիների վրա:

Ալբերտ Մերկերը ծիծաղեց: Ռոբերին — իսկական փոքրիկ նաչիոնալ — սոցիալիստ ե:

— Բա դու ինչպե՞ս կճանաչես կոմունիստին, — բարենոգու թյամբ հարցրեց հայրը վորդուն:

— Հարցր հանկարծակիի բերեց Ռոբերին:

— Իսկապես, վո՞նց պիտի ճանաչեմ նրանց, — տարակուսած կրկնեց նա հարցը:

— Իե, դա հո ալնքան ել հեշտ բան չի, տղաս: Կոմունիստները, գիտես, կարողանում են լավ թագնը վեր նրանք իրենց ձեռքնում են սովորական մարդիկ ու թափանցում են ամեն տեղ: Ի՞նչ յերբեմն վոչինչ չես կասկածում, իսկ նրանք, տեսար, ըհը, եստեղ են: Նրանք քո հետևում են, փողոցում, տանը, գործարանում, ամեն տեղ...

Ռոբերտը վախեցած յետ նայեց՝ արդյոք իր յետևում կոմունիստ չկամ։ Բայց սենյակում միայն լուցին եր, վոր ավսեններն եր հավաքում սեղանից։

— Հայրիկ, իսկ խորամանկ մարդիկ են եղ կոմունիստները։

— Հա, բա, խորամանկ են ու չափազանց համառ։

Այբերտ Մերկերն ավելի շուտ ինքն իրեն եր ասում, քան վորդուն։

— Սորամանկ են ու համառ...և այնքան շատ են նրանք։

— Հայրիկ, շատ շատ են։

— Ինչպես մոլախոտերը... Բայց դե դու բոլորը չես հասկանա, Ռոբերտ, գլուխ մի կոտրիր դրանց վրա։ Առայժմ թող եղ հոգսերը քո հորը։ Աշխատում ես, աշխատում, վորքան ուժ ունես։ Կարծում ես, եղ եր, արդեն ամեն ինչ վերջացած ե նրանց հետ, իսկ նրանք նորից են յայտնվում։ Կարծես վոչինչ չի պատահել։ Ինչպես մոլախոտեր...

Բայց Ռոբերտն չափից դուրս հուզված եր, վորպեսզի դատարեցներ խոսակցու թյունը։ Յերևակայել միայն, թե ինչ սարսափելի մարդիկ են այդ կոմունիստները։ Իսկապես դժվար ե վորսալ նրանց։ Դե, թող յիշեան նրանք Ռոբերտին, նա նրանց բոլորին ել իսկույն կզնդակահարի։

— Հայրիկ, կոմունիստներն սկզբում սպանում են յերեկաներին, հետո ուտում, ճիշտ ե։

Նրանք յերեխաներին սովորաբար, մորթում են։

— Իսկ նրանք յերեխաներին խորովում են, թե յեփում։

— Ռոբերտ, ինձ հանգիստ թող վերջապես։ Դու չափազանց շատ հարցեր ես տալիս։ Ձե՞ վոր յես քեզ արդեն ասել եմ, վոր Գերմանիայում կոմունիստներին թույլ չեն տա յերեխաներ ուտել։

Դա մի փոքր հանգստացրեց Ռոբերտին։

— Բա են վորտեղ ե, հայրիկ, վոր կոմունիստներին թույլ են տալիս յերեխաներ ուտել։

— Մոսկվայում։

— Հա, յես գիտեմ, գիտեմ, վորն ե եղ Մոսկվան։ Դա են յերգի միջի քաղաքն ե։

— Վո՞ր յերգի, — զարմացավ հայրը։

Պատասխանի փոխարեն Ռոբերտն յերգեց գրոհայինների յերգը։

Սորհրդային Ռուսիայի վրա յենք առեալում,

Մոսկվան սենք կտրենք, կտրենք, այո։

Այ քեզ կարիճ տղա։ Այբերտ Մերկերը հիացած եր իր վորդու։ Ինչ հիշողություն ունի, ինչ լավ հասկանում ե ամեն բան։ Նա նստեցրեց տղային իր ծնկների վրա ու համբուրեց նրան։

— Հայրիկ, — փսփսաց նրա աղանջին Ռոբերտն, — գիտե՞ս ինչ։ Յես չեմ ուզում տիրել Մոսկվան։ Յես ավելի լավ ե մնամ Բեռլինում։

— Այ դու վախկոտ, ծիծաղեց հայրը։

— Այբերտ, դու հանգիստ նստել ես բազմոցին ու գրողդում ես, իսկ արդեն շատ ուշ ե, — բացականչեց Ֆրանց Մերկերը, ներս մտնելով սենյակ։ — Դե, շուտ հագիր հանդսական զգեստն ու գնանք։

— Ախ, մայրիկ, ինչ սիրո՞ւն ես դու։ — Ռոբերտն ծափ տվեց գոհունակությունից։ Մայրիկը սիրուն, յերկար շոր եր հագել, իսկ նրա վզին փայլում եր մարգարտե մանյակը, — Ռոբերտն սիրում եր այդ

մանյակը, ավելի շատ, քան իր բոլոր մնացած թանկարժեք իրերը:

— Իսկ յես ի՞նչ կստանամ տանը մնալու համար:

— Դու մի շոկոլադե կստանաս քնից առաջ, իսկ առավոտյան մայրիկը կգնա քեզ հետ կենդանաբանական այգի: Դեհ, իսկ հիմա պետք է քնել, տղաս: Յես հիմա կասեմ Լուցիին, վոր քեզ պառկեցնի:

Ծնողները գնացին: Ռոբերտը պառկել է անկողնում: Մեծ, խայտաբղետ թմբուկը կախված է պատից— Ռոբերին սիրում է, վոր թմբուկը միշտ իր աչքի առաջը լինի: Բայց հիմա Ռոբերին վոչ մի ուշադրություն չի դարձնում խաղալիքի վրա: Նա անհանգիստ շուռ ու մուռ է գալիս մահճակալում: Ի՞նչ մոլթն է սենյակում...

Հարևան սենյակի դուռը բաց է: Լուցին աղմրկում է ափսոսելով ամաններով: Բայց և ափսոսելով Ռոբերին վախենում է:

— Լուցի,— կանչում է նա:

— Քնիր, Ռոբերտ, մի խանդարիր ինձ: Յես շատ զործ ունեմ:

— Լուցի, մոտ արի ինձ: Յես վախենում եմ կոմունիստներից:

— Իսկ ինչո՞ւ յես դու վախենում նրանցից, Ռոբերտ,— հարցրեց աղախինը:


— Ախր նրանք փոքրիկ յերեխաներ են ուտում,— բացականչեց տղան:

Բայց Լուցին բարձր քրքշաց:

— Քնիր, Ռոբերտ, քեզ վոչ վոք չի ուտի:

Հեշտ է ասել՝ «քնիր»: Ռոբերին չի կարողանում քնել, և յերկուդը չի փարատվում: «Ի՞նչ կլինի, յեթե ռադիոն միացնեմ», — մտածում է նա:

Ռոբերին ցատկում է մահճակալից և մոտենում



ե Ռադիոնդուենիչին: Դա մի մեծ, շքեղ արկղե՝
կարմիր փայտից շինած, իսկ նրա վրա բազմաթիվ
փոքրիկ բռնակներ ու լծակներ կան: Ռոբբին այն-
քան ել լավ գլուխ չի հանում դրանցից. դե ճիշտն
ասած, մայրիկն ել թույլ չի տալիս նրան ձեռք տալ
ընդունիչին:

Բայց հիմա մայրիկը տանը չի, և Ռոբբին հա-
մարձակ միացնում ե ուղիուն:

«Փիիո՛ւմ, ֆիիո՛ւմ» շվշվաց ու ճվճվաց ինչ
վոր մի բան, և ապա Ռոբբին լսեց մի ձայն, վորը
յերբեմն հեքյաթներ եր պատմում: Այ քեզ հաջո-
ղո. թյուն: Յե՛վ Ռոբբին, ուրախացած, շտապ ծլկվեց
մահճակալի մեջ, հարմարավոր պառկեց վերմակի
տակ և պատրաստվեց լսել հեքյաթը: Բայց ձայնը
բարկացած ասաց.

— Դերմանիան պիտի սպառազինվի, վոր պաշտ-
պանի աշխարհը բուշեիկյան կարմիր ժանտախտից:
Դերմանիան պիտի պատրաստվի մոտալուտ մեծ
պատերազմին...

Ռոբբերտը զարմացավ՝ ինչո՞ւ ուղիուն հեքյաթ-
ներ չի պատմում, այլ ինչ վոր բոլորովին ան-
հասկանալի բաներ ե ասում:

Նա նորից դուրս յեկավ մահճակալից ու պտտեց-
րեց բռնակը: «Կըռ, ֆիիո՛ւմ, կըռ, ֆիիո՛ւմ», — շրթա-
կաց ուղիուն և ապա այնպես վայրենի ձևով օրվ-
ճրվաց ու աղմկեց, վոր Ռոբբին քրքշաց: Բայց այս
ինչ ե: Ռոբբին նույնիսկ վեր ցատկեց մահճակա-
լի մեջ ու լայն բացեց բերանը:

— Այլո, ալլո: Խոսո՛ւմ ե Մոսկվան: Խոսո՛ւմ ե
Մոսկվան: Լսեցեք հաղորդումը Դերմաներեն լեզ-
վով:

«Ես ինչ լավ յեղամ, — մտածեց Ռոբբին: — Հենց
եսոր յես ու հայրիկս խոսում եյինք Մոսկվայի
մասին»:

— Մենք Կարլ Լիբկնեխտի անվան Դերմա-
նական դպրոցի աշակերտներն ենք՝ Մոսկվայում:
Հիմա կսկսվի մեր հավաքույթը, — ասաց մի ման-
կական ձայն: — Ուշադրություն: Յես զեկուցում եմ.
յերկու բաժանմունքն ել լրիվ հավաքվել են:

— Լավ, դուրս բերեք դրոշակը:

«Տրու-տու-տո՛ւ, տրու-տու-տո՛ւ»:

«Ուրեմն նրանք ել են փող փչում» — Ռոբբերտն
անսահման զարմացած եր: Այնտեղ, խորհրդավոր
Մոսկվայում, հավաքույթը շատ աշխույժ եր
անցնում: Ինչ վոր մի տղա «Պետիա Լաֆֆրեն-
տյեֆֆ» («Ես ինչ անուններ ունեն դրանք, — մտա-
ծեց Ռոբբին: — Ձի լինում արտասանել») պատմեց,
վոր դպրոցի շեֆարկյալ գործարանի կոմունիստ-
ները մի հիանալի հանգստի տուն են սարքավորել
յերեխաների համար Մոսկվայի մոտ:

Դրան ի պատասխան յերեխաները բղավեցին
«ու՛ււ» — այնքան բարձր, վոր Ռոբբին ցնցվեց: Հե-
տո Պետյան ասաց, վոր նրանք վողջ ջոկատով ավ-
տոբուսով գնալու յեն այդ հանգստի տունը:

Յերեխաները նորից հրճվանքով բղավեցին «ու-
ււ»:

Ռոբբին չկարողացավ զսպել իրեն: Նա ամբողջ
ուժով բղավեց ուղիուն ընդունիչի մեջ՝ «Եզուց ձեզ
բոլորիդ կուտեն»:

Նա ափսոսում եր այդ ուրախ, վո-
չինչ չկասկածող յերեխաներին: Բայց Պետյա Լավ-
քենտյեֆր չլսեց բարեկամական նախազգուշացումը:

Ռոբբին մոռացավ քնի մասին: Յերկար, գիշե-
րային շապկով, բորիկ, նա կուչ եր յեկել գորգի
վրա՝ ընդունիչի մոտ: Նա վախենում եր բաց թող-

նել թեկուզ մի բառ այն բոլորից, վոր խոսում եյին Մոսկվայում: Իսկ այնտեղ ինչ վոր մի «Մարուսիա» հարց տվեց Պետյային՝ ինչպե՞ս պիտի անվանեն հանգստի տունը:

— Հա, հա, — Լավեցին բացականչություններ ուղիւյով, — ինչպե՞ս կանվանենք այն:

— Անվանեցեք Ադուլֆ Հիտլերի տուն, — բղավեց տարված Ռորբին:

Բայց Մոսկվայի դպրոցականները փոշինչ չլրսեցին:

— Հանգիստ, յերեխեք, — ասաց Պետյա Լավրենայեվը: — Յես մի առաջարկություն ունեմ:

— Յերեխեք, — ասաց Պետյան, — դուք գիտեք, վոր մենք և դուք — Խորհրդային Միության յերեխաներս — ամենաբախտավոր յերեխաներն ենք աշխարհում: Մեզ համար կառուցվում են նոր, լուսավոր դպրոցներ, մեզ համար հրատարակվում են գրքեր, հնարվում են խաղեր: Մեզ համար կառուցվում են պալատներ և ահումբներ... Մենք ձեզ հետ միասին ապրում ենք առանց հոգսի: Բայց մենք չպետք է մոռանանք այն բանվորների յերեխաներին և պիոներներին, վորոնք տառապում են կապիտալիստական յերկրներում: Առանձնապես գերմանացի մեր ընկերներին: Չե՞ վոր դուք գիտեք, վոր Գերմանիայում իշխանությունը Փաշիստների ձեռքին է:

Հեռավոր Մոսկվայում մանուկներն ուժգին ծափահարեցին Պետյային: Թվում էր, թե ինքը՝ ուղիւն ծափահարում է նրան՝ «Կը՛ռ, կը՛ռ». — ճարճատում եր նա:

Բեռլինում ընդունիչի մոտ նստած փոքրիկ Փաշիստը նույնիսկ բերանը բացեց դարմանքից:

— Յեմահա, յերեխաներ, — շարունակեց մինչ այդ Պետյան, — Դուք բոլորդ գիտե՞ք գերմանական բանվորների առաջնորդ Երնստ Թեյմանին: Նա նստած է բանտում այն պատճառով, վոր կոմունիստներն ու բանվորներին կռվի յեր տանում Փաշիստների դեմ: Փաշիստներն ուզում են սպանել մեր Թեյմանին: Յես կարծում եմ, վոր մենք ձեզ հետ միասին պետք է պայքարենք ընկեր Թեյմանին ազատելու համար:

— Ճիշտ է, ճիշտ է, Պետյա, — բղավեցին յերեխաները: — Իսկ դու ի՞նչ ես առաջարկում:

— Թեյմանը պայքարում է նրա համար, վոր գերմանական պրոլետարական յերեխաների կյանքը նույնքան ուրախ լինի, վորքան և մերը: Այդ պատճառով ել յես առաջարկում եմ անվանել մեր հանգստի տունը Երնս Թեյմանի անունով:

— Ուռա, ճիշտ է: Կեցցե՛ք ընկեր Թեյմանը, ուռա:


Կարծես փոթորիկ անցավ ռադիոյով: Ծափահարություններ, բացականչություններ, փողոյններ... և հանկարծ հնչեց ներդաշնակ յերգեցողությունը:

Ինսերնացիոնալը աշխարհը կփրկի:

Այդ յեղանակը լավ ծանոթ էր Ռորբին: Ուրախացած նա ծափ տվեց և նույնպես սկսեց յերգել: Միայն Ռորբիի խոսքերն այն չեյին, ինչ վոր Մոսկվայում: Նա յերգում եր՝ «Գերմանացի ժողովուրդը կնվաճի գերմանական իրավունքները»: Այդպես եր սովորեցրել նրան նրա հայրը: Այդպես են փոփոխել Փաշիստներն իրենց ուղածի պես հեղափոխական բանվորական հիմնը:

Միայն Ռորբին չեր, վոր լսում էր հաղորդու-

մը Մոսկվայից: Այդ միևնույն ժամանակ կիպ ծածկված դռների և լուսամուտների հետևը Գերմանիայում բազմաթիվ մարդիկ ռադիոյով լուրեր ելին լսում Սորհրդային Միությանից: Փաշիստները դաժան պատժի սպառնալիքի տակ արգելել էին գերմանական ժողովրդին բոլշևիկյան ռադիոն: Բայց բանվորները, հեղափոխականները, թագնավելով ֆաշիստական լրտեսներից, այնուամենայնիվ բռնում էին հաղորդումներն այդ յերկրից — ամբողջ աշխարհի բանվորների հայրենիքից: Նրանք



ականջ էլին դնում Մոսկվայի ձայնին և մտածում այդ ժամանակ հազարավոր հեղափոխական բանվորների մասին, վորոնք, չնայած ֆաշիստական տնտրին, չնայած հիտլերյան բանդիտների դաժանություններին, անխոնջ պայքարում են կոմունիզմի գործի համար: Նրանք մտաբերում էին բանտերում և համակենտրոնացման ճամբարներում նստած ընկերներին... Լսելով խորհրդային մանուկ-

ների ուրախ խոսակցությունները՝ նրանք մտածում էին իրենց, միշտ սոված, ճնշված յերեսաների մասին: Նրանք ուրախանում էին, վոր Երեստ Թելմանի, իրենց սիրելի «Թեդդի» անունը պատվում են նաև խորհրդային մանուկները: Յեվ բռնացքները սեղմելով՝ նրանք յերգվում էին, վոր կիրկեն իրենց առաջնորդին Փաշիստների ճանկերից...

Յեվ այն տանը, վորտեղ ապրում եր Ռոբբին, նկողային հարկում նստել էին մարդիկ, վորոնք ազահորեն ականջ էլին դնում Մոսկվայից լսվող ամեն մի խոսքին: Դռնապանն ու իր կինը, վոր զգուշավորությամբ ականջ էլին դնում միջանցքի ամեն մի շուկին, նույնպես ընդունում էին հաղորդումը Սորհրդային Ռուսաստանից: Իսկ յերբ Լիբկներտի անվան դպրոցի աշակերտները յերգեցին, նրանք ձայնակցեցին նրանց: Շշնջալով կրկնում էին նրանք մեծ յերգի խոսքերը, վոչ այն խոսքերը, վոր յերգում էին ֆաշիստները, գողանալով յեղանակը բանվորներից, այլ այն խոսքերը, վոր յերգում են վողջ աշխարհի պրոլետարները, բոլոր լեզուներով...

Դռան հետևը, սեղանատանը, լուռ կանգնած եր Լուցին և նույնպես լսում եր հաղորդումը: Յերբ լռեցին «Ինտերնացիոնալի» վերջին հնչյունները, Լուցին սթափվեց և ներս մտավ Ռոբբիի սենյակը: Սա դեռևս անշարժ նստած եր ընդունիչի առաջ: Բայց ռադիոն արդեն լուռ եր:

— Ռոբբի, շուտ, պառկիր տեղդ, — բղավեց նա տղայի վրա, և նա, հնազանդվելով, քաշվեց դեպի իր անկողինը: Նա շփոթված և ընկճված եր: Հազարավոր հարցեր էին պատվում նրա գլխում:

— Լոկի, — ուզում եր սկսել նա: Բայց Լոկին
վոչ մի ցանկություն չունեւ այժմ խոսելու
Ռոբերտի հետ: Նա ինքն ել եր ուզում մտածել
չառ բաների մասին:

— Քնիր, Ռոբեր, քնիր, — ասաց նա և ծածկեց
դուռը:

Ռոբերին այնքան եր հոգնել, վոր շուտով քնեց:
Բայց քնի մեջ ել նրան հալածում եյին կոմու-
նիստները: Նրանք ընկել եյին նրա յետևից Բեռ-
լինի փողոցներում: Փոքրիկ ֆաշիստական զինվոր-
ները, բոլորն ահագին խայտաբղետ թմբուկներով,
քայլում եյին Ռոբերի առջև: Ռոբերն, փախչելով
կոմունիստներից, հանկարծ իրեն տեսավ Մոսկվա-
յում... Ծիծաղկոտ յերեխաներով լիքը մի մեծ զար-
դարուն ավտոբուս գալիս եր ուղիղ իր վրա... Ռոբ-
երն նստել եր սալահատակի վրա և չեւ կարողա-
նում շարժվել տեղից: Ավտոբուսը քանի գնում, մո-
տենում եր... Ռոբերն լաց յեղավ ու... արթնացավ:

Այդպես, արթնանալով ու նորից քնելով, Ռոբ-
երն մի անհանգիստ գիշեր անցկացրեց:

ԳԼՈՒԽ ՅՈՒՆԵՐՈՐԴ

ՊԱՍՏՈՐ ԵՆԳԵԼՄՅՈՒԼԼԵՐԻ ՍԻՐԱԼԻՐ ԶՐՈՒՅՅՆԵՐԸ

Հաղիվ սկսել եր լույսը բացվել, յերբ Փրաու-
Յունեմանն արթնացավ: Նրան արթնացրեց փոք-
րիկ ինգերորդի լացը: Նա ջուր տվեց աղջկան,
բայց ինգերորդը շարունակեց լալ: «Թվում ե, թե
տենդն անցել ե», — մտածեց Փրաու Յունեմանը
թեթևացած: «Ախ, յեթե եղպես լիներ»: Նա սկսեց
հագնվել: Բայց այստեղ արթնացավ Վոլֆը և նույն-
պես լաց յեղավ: Նա ուտել եր ուզում: Ահա թե
յերբ պետք յեկավ յերեկվա կարտուր: Փրաու Յու-
նեմանը լուռ դիտում եր, թե ինչ ազահուժյամբ
խժռում եր Վոլֆը կարտոֆիլները... Կարտուր սառն
եր: Վառելիք չկար, վոր տաքացներ: Վերջին
ածուխը վառվել եր դեռ յերեկ:

Յերբ Վոլֆը վերջացրեց յերկրորդ կարտոֆիլը,
նա ժպտաց մորը և ասաց. «Մայրիկ... ելի հափի...»

Մայրը նայեց վտիտ, վոսկրոտ մարմնիկին, և
արտասուքները գլորվեցին նրա աչքերից: «Ի՞նչ
պիտի անենք հիմա, — մտածում եր Շառլոտտա Յու-
նեմանը: — Տամ Վոլֆին վերջին կարտոֆիլը, թե՞
պահեմ ու յերեկոյան տամ նրան»: Իսկ տղան
մինչ այդ նորից լաց յեղավ: Նա տեսնում եր, վոր
կճճում ելի բան ե մնացել... Փրաու Յունեմանը
վճռեց խորամանկություն անել: Նա փաթաթեց
վերջին կարտոֆիլը ձեռքի թաշկինակի մեջ, թաշ-

կինակի ծայրերը կապեց թելով ու ծծակի տեղ տվեց յերեխային: Վոլֆն ուրախ եր գրան: Նա ծըծակը վերցրեց բերանը և հիմա հանգիստ պառկել եր, ծծելով կարտոֆիլի հյութը: Ձեռքի թաշկինակի ծայրերը ցցվել էյին նրա բերնից, և Վոլֆը խաղում եր նրանց հետ: Փրաու Յունեմանը տանջանքից ծամածուփած դեմքով գնում գալիս եր սենյակում, ինչպես կալանավորն իր կամերում:

Ժամանակն անցնում եր: Առաստաղի տակի փոքրիկ լուսամուտից սկսեց թափանցել ցերեկվա լույսը: Նկուղում գրեթե լույս եր, — «Գուցե արդեն ուշ ե, — վախեցած մտածեց Շառլոտտա Յունեմանը: — Պետք ե գնալ: Ուրեմն, նորից պետք ե թողնել յերեխաներին մենակ... Բայց յես պետք ե գնամ սոցապղբամարկդ: Յես կասեմ այդ անհոգի մարդկանց, փոր մենք բոլորս կմեռնենք քաղցից, յեթե մեզ չոգնեն»:

Կոշիկները թաց էյին դեռ յերեկվանից: Փրաու Յունեմանը թղթով բռնեց կոշիկների տակի կլտըրտված տեղերը: «Ժամանակն ե, ժամանակն ե գնալ»: Բայց նա դեռ նստած եր մահճակալի վրա: Այսոր նա վոչ մի կերպ չեր կարողանում ստիպել իրեն գնալու... Նորից լսել յերեխաների ճիչը, լըսել, թե ինչպես Վոլֆը պիտի կանչի «մայրիկ, մայրիկ» պարզելով դեպի մայրն իր նիհար թաթիկները... և այդպես ամեն առափոտ, ամեն որ... Ձե, չե, այդպիսի կյանքն անտանելի յե:

Նա այլ ևս ուժ չունի տանելու: Փրաու Յունեմանը մի սոսկալի ծանրություն եր զգում իր կրծքում: Նա ուզում եր նորից պառկել անկողնում, քնել և այլևս յերբեք, յերբեք չարթնանալ: Բայց նա չեր կարող այդպես անել: Ձեր կարող իր

յերեխաների պատճառով: Նա վերցրեց Վոլֆին ձեռքերի վրա, սեղմեց կրծքին և սկսեց համբուրել նրա փոքրիկ, կնճռոտ յերեսը: Վոլֆը սաստիկ լաց յեղավ — ա՛յնպիսի սարսափելի դեմք ուներ մայրը: Նա ուղում եր թագնվել նրա մութ, փայլատակող աչքերից:

Շառլոտտան պառկեցրեց Վոլֆին մահճակալի մեջ, տվեց նրան կարտոֆիլի ծծակը և, առանց յետ նայելու, դուրս վազեց սենյակից: Գլխապատառ վազեց նա փողոց, փոր չլսի փակված յերեխաների լացը: Տրամվայի կանգառի մոտի ժամացույցն ութ անց կեսն եր ցույց տալիս: Նշանակում ե նա չի ուշանա: Սոցապղբամարկդ բացվում ե ժամը իննին: Յեվ յեթե նրան հաջողվի, նա առաջինների թվում կլինի, նպաստը կստանա և անմիջապես ուտելիք կգնի յերեխաների համար: «Դե նրանք հո ենքան ել հիվանդ չեն», — հանգստացնում եր նա ինքն իրեն: — Յեթե նրանց լավ կերակրես մի քանի որ շարունակ, նրանք յերեկ կառողջանան: Իսկ սոցապղբամարկդն անպայման կոգնի նրան: Այսոր նա գլուխ չի ցավացնի հիվանդանոցային ուղեգրերի համար, չե, այսոր նա, ինչ գնով ել լինի, մի քիչ փող պիտի ճարի: Այնքան քիչ ե հարկավոր իրեն: Ածխի և յերեխաների ուտելիքի գինը — ուրիշ վոչինչ»:

Փրաու Յունեմանը վազում եր փողոցներով և բարձրաձայն խոսում ինքն իրեն: Անցորդները յետ էյին դառնում ու զարմացած նայում նրա յետևից:

Ժամն իննին բացվեց սոցապղբամարկդ: Շենքըն անմիջապես լցվեց գործադուրկներով: Փրաու Յունեմանին բոլորից առաջ հաջողվեց տալ իր

քարտը դրամարկդի ծառայողին: Հիմա նրան մը-
նում եր միայն սպասել, փոր կանչեն: Նա նայեց
շուրջը: Բոլոր նստարաններն զբաղեցրած էին, և
Ֆրաու Յունեմանն ստիպված յեղավ կանգնած մնալ,
չնայած նրա փոքրերը ծալվում էին թուլությունից
Շուրջն աղմուկ եր տիրում: Գործազուրկները խո-
սակցում էին իրար հետ, մի քանիսը հայհոյում ե-
լին, մյուսներն ել փորձում էին սրախոսել: Վորը
հայհոյում եր դրամարկդի ծառայողներին, փորն
ել կիսաձայն գանգատվում քաղցից ու աղքատու-
թյունից: Փողոցից գալիս էին նորանոր գործա-
զուրկներ, տղամարդիկ ու կանայք: Փոքրիկ սե-
նյակում արդեն փոքր դնելու տեղ չկար:

Շաուրտտա Յունեմանը փոչ մի բանի վրա ու-
շադրություն չեր դարձնում: Իր սեփական փիշտն
այնպես եր կլանել նրան, փոր նա չեր կարող հե-
տաքրքրվել մյուս մարդկանց վիճակով: Նրա գըլ-
խում աղմուկ եր տիրում... Ինչո՞ւ չեն կանչում
նրան: Չե՞ փոր, շատերը, փոր նրանից ուշ էին տը-
վել քարտերը, արդեն ազատվել էին ու գնացել:
Համբերությունը կորցնելով՝ Ֆրաու Յունեմանն
անցավ դեպի գրասեղանն ու հիշեցրեց իր մասին:

— Մի՛ խանգարեք: Յերբ հարկավոր լինի, ձեզ
կկանչեն,— բարկացած բղավեց նրա վրա պաշտո-
նյան: Նա հեռացավ գրասեղանից: Բայց այդտեղ
նրա աչքերը մթնեցին, սենյակը պտույտ յեկավ,
Շաուրտտա Յունեմանն ուշաթափ ընկավ հատակի
վրա: Ուշքի գալով, նա տեսավ, փոր նստած է նստա-
րանի վրա: Մեկը պարզեց նրան մի կտոր հաց,
փորի վրա մարգարին եր քսված: Այդ սենյակում
մարդիկ լավ գիտեին, թե ինչու յեն ուշա-
թափվում: Ֆրաու Յունեմանը լուռ կերավ հացը,

և նա իրեն մի փոքր լավ զգաց: «Մարդիկ սովա-
ծությունից վայր են ընկնում, և փոչ վոք ուշադր-
ություն չի դարձնում դրա վրա», — ասում էին
ամբոխի մեջ: Գործազուրկների փողջ բազմու-
թյունը խուլ ալեկոծվեց:

— Շաուրտտա Յունեման, — լսվեց վերջապես
պաշտոնյայի ձայնը, և նա յերեբալով մտավ հա-
րևան սենյակը: Սեղանի կողքին նստած պաշտոնյան
խսկույն վրա պրծավ նրան:

— Ասացեք խնդրեմ, ի՞նչ եք ուզում դուք: Տաս-
որ հազիվ լինի, փոր նպաստ եք ստացել մեզնից:
Ինչի՞ համար եք նորից յեկել:

Յերեկ այդ պաշտոնյան ինքը նկատողություն
եր ստացել իր բարձրագույն պետերից: Նրան ի
ցույց եր դրված, փոր գործազուրկներին տված
նպաստների գումարն աճել է: «Չի կարելի այդքան
փալաս լինել», — ասաց նրան պետը: Պաշտոնյան
պիտի ապացուցեր, փոր նա ամենևին փալաս չի,
բայց և Ֆրաու Յունեմանն ել հաստատ փորոշել եր
անձնատուր չլինել: Նա մտածում եր այն վերջին
կարտուլի մասին, փոր Վոլֆը յերեկ վաղուց ի վեր
ծծել վերջացրել է: Չե, նա փոչ մի դեպքում չի
զիջի:

— Յես խնդրում եմ արտակարգ նպաստ տալ
ինձ:

— Դուք ցնորվել եք: Ի՞նչ եք կարծում — դուք
միակ գործազուրկն եք Բեռլինում:

— Յեթե դուք ինձ չոգնեք, իմ յերեխաները
կմեռնեն, — ճշաց Ֆրաու Յունեմանը հուսահատու-
թյան մեջ:

— Խնդրում եմ չփախեցնել մեզ, — միանգա-
մայն հանգիստ պատասխանեց պաշտոնյան: — Մենք

սովոր ենք դրան և գիտենք, վոր եստեղ ամենից շատ
բղավում են նրանք, վորոնք բոլորից ել լավ են
ապրում: Մեզ խաբել չես կարող:

— Դե վոր եղպես ե, յեկեք իմ տունը և ինք-
ներդ հավաստիացեք: Յես կմեռնեմ քաղցից, յեթե
եսոր նպաստ չստանամ: Յես ել, իմ փոքրիկ յերե-
խաներն ել:

Խոսակցությունը ձանձրացրեց պաշտոնյային:

— Հերիք ե, — ասաց նա: — Մենք փոշնչով չենք
կարող ոգնել ձեզ: Յեթե դուք արտակարգ նպաստի
կարիք ունեք, դիմեցեք աղքատների հոգաբար-
ձուին:

Ել ինչ եր մնում անելու Շառլոտտա Յունե-
մանին: Գլուխը քաշ արած՝ նա ուղեփորվեց դեպի
իր քաղմասի աղքատների հոգաբարձուն: Նա լավ
գիտեր ճանապարհը դեպի հոգաբարձուն: Նա այն-
քան հաճախ եր ստիպված լինում այցելել նրան և
այնքան հազվագյուտ դեպքերում եր հոգաբար-
ձուն ոգնում նրան: Բայց ճար չկա, պետք ե գնար:

— Ելի դուք եստեղ եք, — բղավեց նրա վրա հո-
գաբարձուն:

Նրան անվանում եյին հերը Մեյեր: Նա առե-
տրական եր և նացիոնալ-սոցիալիստական կու-
սակցության անդամ:

— Զրինի՞ դուք կարծում եք, թե ինձ մոտ կա-
րելի յե գալ ինչպես ձեր սեփական տունը:

— Խղճացեք, հերը Մեյեր: Իմ յերեխաները
բոլորովին ձեռից գնացել են սովածությունից: Ե-
սոր առափոտ յես վերջին կարտուր տվի տղայիս:
Իսկ յես ինքս...

Յեմ ֆրաու Յունեմանը դառը լաց յեղավ:

Հերը Մեյերը մի հաստիկ, հասակավոր պարոն

եր: Նրա գաղութային ապրանքների խանութում
ուտելիքի ամբողջ սարեր կային՝ ալյուր ու ձավար,
բրինձ ու հաց, սուրճ, շոկոլադ, միրգ... Յերևի դրա
համար ել հերը Մեյերին դժվար եր հասկա-
նալ, ինչ ե նշանակում վերջի կարտուր...

— Դե իմացեք, ֆրաու Յունեման, — ծանրա-
կշիռ կերպով հայտարարեց նա, — վոր դուք ինձ-
նից այլևս մի պֆեննիգ անգամ չեք ստանա: Յե-
րեք որ առաջ յես ձեզ մի ամբողջ մարկ տվի, իսկ
եսոր դուք նորից մուրում եք ինձնից: Այն փո-
ղերը, վոր յես բաժանում եմ, պատկանում են իմ
քաղաքամասի բոլոր կարիքավորներին, և յես պար-
տավոր եմ արդարացի կերպով բաշխել այդ փողերը:
Դուք առանց են ել չափազանց շատ եք ստացել:

— Հերը Մեյեր, դուք պատկերացրե՞ք միայն,
ախր յես յերեք յերեխա ունեմ...

— Բայց չե՞ վոր մենք քո մեծ տղային տվինք
մանկատուն: Նա ենտեղ թագավորի պես ե ապրում:

— Յես անսահմանորեն շնորհակալ եմ ձեզ-
նից դրա համար: Հիմա ել հոգ տարեք փոքրերի
մասին: Թույլ մի տվեք, վոր նրանք մեռնեն
սովից:

Այս ինչ ձանձրալի կին ե: Հերը Մեյերն ու-
զում եր հանգիստ մի գալաթ սուրճ խմել և լրագիր
կարդալ: Իսկ սա ել ձեռ չի քաշում իր գանգատ-
ներով:

— Ահա ձեզ մեկ ու կես մարկ, ֆրաու Յունե-
ման, վորպեսզի դուք այսուհետև մի ամբողջ ա-
միս իմ աչքին չերևաք: Հասկանալի՞ յե: Իսկ յեթե
ձեզ ելի վորևե բան պետք լինի, դիմեցեք «ձմե-
ռային ոգնության» բյուրոյին: Ինձ, խնդրում եմ,
հանգիստ թողեք: Լսում եք:

Շառլոտտա Յունեմանը, ստացած բոները ձեռքում ամուր սեղմած, վազեց «ձմեռային ոգնության» բյուրո: Ծանապարհին նա վարդագույն ծրագրեր երկազմում՝ բյուրոյում նրան կտան ամուսնի քիչ ել վառելափայտ, իսկ մեկ և կես մարկով նա կգնի ուտելիք իր և յերեխաների համար...

Բարեբախտաբար, բյուրոյում վոչ մի հերթ չկար: Շառլոտտայն հայտնեց իր խնդրանքը պաշտոնյային: Սա, փորոնելով քարտարկղում, չոր տոնով ասաց.

— Ձեզ արդեն առաջուց մերժված ե փորեն ոգնություն:

— Ինչո՞ւ, — գոչեց Շառլոտտան:

— Մեր հետադուրիչը հայտարարել ե, փոր ձեր մառանը լիքն ե ուտելիքներով և, ընդհանրապես նա կարիքի վոչ մի նշաններ չի գտել, յերբ այցելել ե ձեր բնակարանը:

— Բայց դա մի ինչ փոր սխալ ե, դուք ինչ փոր բան խառնել եք: Յես ընդհանրապես վոչ մի մառան չունեմ, — բացականչեց Փրաու Յունեմանը:

— Մեզ մոտ սխալներ չեն կարող լինել — հայտարարեց խստորեն պաշտոնյան, չնայած և սրտի խորքում նա շատ լավ գիտակցում եր, փոր հետադուրիչներն ամեն մի չնչին բան վերցնում եյին իբրեւ պատրվակ, փորպեսզի միայն հնարավորություն ունենային մերժել նպաստ տալը:

— Դուք կարող եք նաև դիմել «քրիստոնեական ձմեռային ոգնությանը», — ավելացրեց նա, տեսնելով, փոր կինը պատրաստ ե լաց լինելու:

Փրաու Յունեմանն շտապեց այնտեղ: Ավելի լավ ե չմտաբերել, փոր նա արդեն հինգ ժամ ե, փոր

դուրս ե յեկել տանից... Պետք ե շտապել, վազել այդ յերկար, անվերջ փողոցներով... Ահա և յեկեղեցին: Իսկ նրա դիմաց ապրում ե պաստոր Ենգելմյուլլերը՝ «ձմեռային քրիստոնեական ոգնություն գործադուրկներին» ընկերութան նախագահը: Կամաց, շատ կամաց ներս մտավ Շառլոտտա Յունեմանը պաստորի ընդունարանը: Նա այլևս վոչ մի բանի վրա հույս չունեւ: Ամեն տեղ մերժում եյին նրան, բղավում վրան, քշում... Սոցա պղրամարկղում, հոգաբարձուի մոտ, բժշկի մոտ, կույսերի մոտ... Կուզենա՞ արդյոք այդ բահանան ոգնել նրան:

— Բարեւ ձեզ, սիրելիս, — սիրալիր փողջունեց նրան պաստորն ու մեկնեց ձեռքը:

— Նստեցե՛ք ու պատմեցե՛ք ինձ, ինչի համար եք յեկել:

Շառլոտտա Յունեմանի սիրտն ուրախ բարախեց... Նա նստեց փափուկ բազկաթոռի մեջ: Պաստորը յերևի կոգնի նրան: Նա այնքան բարի յե:

Պաստոր Ենգելմյուլլերը լսեց Փրաու Յունեմանի պարզ պատմությունը, կարեկցաբար շարժելով գլուխը:

— Այո, այո, — ասաց նա հոգատար — ամենահզոր տեր աստվածը ծանր պատժում ե մեզ մեր մեղքերի համար: — Յե՛վ նա շոյում եր կնոջ նիհար ձեռքն իր տաք, փափուկ ձեռքով:

— Բայց փոքր մեղքերիս համար ե պատժում ինձ աստված: Ամբողջ կյանքիս ընթացքում, դեռ յերեխայությունից, յես փոչինչ չեմ իմացել, բացի աշխատանքից, ծանր աշխատանքից ու կարիքից:

— Մենք մեղք ենք գործում, ինքներս ել չիմանալով այդ, իսկ աստված տանջանքներ ե ու-

Շառլոտտա Յունեմանը, ստացած բոները ձեռքում ամուր սեղմած, վազեց «ձմեռային ոգնության» բյուրո: Ճանապարհին նա վարդազույն ծրագրեր երկազմում՝ բյուրոյում նրան կտան ամուլի և մի քիչ ել վառելափայտ, իսկ մեկ և կես մարկով նա կգնի ուտելիք իր և յերեխաների համար...

Բարեբախտաբար, բյուրոյում վոչ մի հերթ չկար: Շառլոտտայն հայտնեց իր խնդրանքը պաշտոնյային: Սա, վորոնելով քարտարկղում, շոր տոնով ասաց.

— Ձեզ արդեն առաջուց մերժված ե վորեւե ոգնություն:

— Ինչո՞ւ, — գոչեց Շառլոտտան:

— Մեր հետազոտիչը հայտարերել ե, վոր ձեր մառանը լիքն ե ուտելիքներով և, ընդհանրապես նա կարիքի վոչ մի նշաններ չի գտել, յերբ այցելել ե ձեր բնակարանը:

— Բայց դա մի ինչ վոր սխալ ե, դուք ինչ վոր բան խառնել եք: Յես ընդհանրապես վոչ մի մառան չունեմ, — բացականչեց Փրաու Յունեմանը:

— Մեզ մոտ սխալներ չեն կարող լինել — հայտարարեց խստորեն պաշտոնյան, չնայած և սրտի խորքում նա շատ լավ գիտակցում եր, վոր հետազոտիչներն ամեն մի չնչին բան վերցնում եյին իբրեւ պատրվակ, վորպեսզի միայն հնարավորություն ունենային մերժել նպաստ տալը:

— Դուք կարող եք նաև դիմել «քրիստոնեական ձմեռային ոգնությանը», — ավելացրեց նա, տեսնելով, վոր կինը պատրաստ ե լաց լինելու:

Փրաու Յունեմանն շտապեց այնտեղ: Ավելի լավ ե չմտաբերել, վոր նա արդեն հինգ ժամ ե, վոր

դուրս ե յեկել տանից... Պետք ե շտապել, վաղել այդ յերկար, անվերջ փողոցներով... Ահա և յեկեղեցին: Իսկ նրա դիմաց ապրում ե պաստոր Ենգելմյուլլերը՝ «ձմեռային քրիստոնեական ոգնություն գործադուրկներին» ընկերութան նախագահը կամաց, շատ կամաց ներս մտավ Շառլոտտա Յունեմանը պաստորի ընդունարանը: Նա այլևս վոչ մի բանի վրա հույս չուներ: Ամեն տեղ մերժում եյին նրան, բղավում վրան, քշում... Սոցապղրամարկղում, հոգաբարձուի մոտ, բժշկի մոտ, կույսերի մոտ... Կուզենա՞ արդյոք այդ քահանան ոգնել նրան:

— Բարե՛վ ձեզ, սիրելիս, — սիրալիիր վողջունեց նրան պաստորն ու մեկնեց ձեռքը:

— Նստեցե՛ք ու պատմեցե՛ք ինձ, ինչի համար եք յեկել:


Շառլոտտա Յունեմանի սիրտն ուրախ բարախեց... Նա նստեց փափուկ բազկաթոռի մեջ: Պաստորը յերևի կոգնի նրան: Նա այնքան բարի յե:

Պաստոր Ենգելմյուլլերը լսեց Փրաու Յունեմանի պարզ պատմությունը, կարեկցաբար շարժելով գլուխը:

— Այո, այո, — ասաց նա հոգատար — ամենահզոր տեր աստվածը ծանր պատժում ե մեզ մեր մեղքերի համար: — Յե՛վ նա շոյում եր կնոջ նիհար ձեռքն իր տաք, փափուկ ձեռքով:

— Բայց վո՞ր մեղքերիս համար ե պատժում ինձ աստված: Ամբողջ կյանքիս ընթացքում, դեռ յերեխայությունից, յես վոչինչ չեմ իմացել, բացի աշխատանքից, ծանր աշխատանքից ու կարիքից:

— Մենք մեղք ենք գործում, ինքներս ել չիմանալով այդ, իսկ աստված տանջանքներ ե ու-



ղարկում մեզ, փոր փործության յենթարկի մեզ, — իր սովորական տոնով քարոզում եր պատուորը: — Բայց մենք, քրիստոնյաներս, պետք է ամեն կերպ ոգնենք իրար: Դուք ածխի և բարուրի կարիք եք զգում ձեր փոքրիկի համար: Դժբախտաբար յես փոշ այն ունեմ, փոշ ել մյուսը: Բայց դրա փոխարեն, յեթե դուք ուզում եք, յես կարող եմ տալ ձեզ մի հին ոթոց: Մի բարի հոգի այն նվիրաբերել է մեզ: Միայն դուք ստիպված պիտի լինեք ինքներդ վերցնել ոթոցը, փորովհետև մենք փոշ մի փոխադրական միջոց չունենք:

Յեվ պատուորը տարավ Փրաու Յունեմանին հարևան սենյակը, փորտեղ դրված եր հնաձև մի ոթոց՝ մաշված և կտրտված յերեսով:

— Պետք է ասեմ, սիրելիս, փոր յես բաժին եմ հանում ձեզ այն ամենից, ինչ փոր յես ունեմ, — շարունակեց պատուորը: Կան դեռ լավ քրիս-

տոնյաներ, փորոնք իրենց ցանկությամբ շրջում են բոլոր տները, բնակարան առ բնակարան, և նվիրատվություններ են հավաքում մեր «ձմեռային ոգնության» համար: Մեզ նվիրում են այն իրերը, փոր տնտեսության մեջ անպետք են, բայց այդ իրերը կարող են բախտավորեցնել գործազուրկներին: Այդպես ենք մենք ոգնում քրիստոնեյաբար միմյանց, սիրելի Փրաու Յունեման:

Փրաու Յունեմանը լուռ ականջ եր դնում պատուր ենգելմյուլլերի քաղցր խոսքերին:

— Դուք ել պիտի ոգնեք մեզ այդ սուրբ գործում, — շարունակեց նա: — Դուք կգնաք նվիրաբերություններ հավաքելու և, գուցե, փորեն մեկը կընվիրի ձեզ հենց այն բանը, փորը ձեզ անհրաժեշտ է:

— Բայց յես չեմ կարող փոշ մի կերպ, հերը պատուոր: Ախր յես չեմ կարող յերկար ժամանակ մենակ թողնել յերեխաներիս, — ասաց Փրաու Յունեմանը, ամաչելով ինքն իր մերժումից:

— Վորքան մեծ է զոհաբերումը, այնքան հաճելի յե այն աստծուն, — ասաց պատուորն այնպիսի տոնով, փոր չեղ թույլ տալիս փոշ մի առարկություն: — Հանձնարարեցեք աստծուն ձեր յերեխաներին ձեր բացակայության ժամանակ:

Փրաու Յունեմանն ստիպված յեղավ խոսք տալ պատուորին, փոր կոգնի նվիրատվություններ հավաքելու «ձմեռային ոգնության» քրիստոնեյական գործի համար: Պատուորն այնքան ազնիվ, այնքան վեհոքեն եր խոսում: Շառլոտտան դուրս յեկավ նրա մոտից դատարկ ձեռքերով, առանց ածխի, առանց բարուրի, բայց դրա փոխարեն հաստատ համոզմունքով, փոր այդտեղ նրան կոգնեն...

Իսկ հիմա շուտ դեպի տուն: Ճանապարհին նա

մտավ խանութ, փորի վրա ցուցանակ կար՝ «Այս-
տեղ ընդունվում են Բեռլին քաղաքի կենսամթեր-
քային բոները»։ Հերը Մեյերից ստացած թղթերի
փոխարեն նա ստացավ կաթ, ձափար, ածուխ և գր-
նումների փաթեթները ձեռքին վազեց իր յերե-
խաների մոտ։

ԳԼՈՒԽ ԻՆՆԵՐՈՐԴ

ՖՐԱՆՍԻ ՅՈՒՆԵՄԱՆԸ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ Ե ՀԱՎԱՔՈՒՄ

Հաշմանդամների փողոցով, Շտետտինի կայա-
րանի ուղղությամբ, գնում եր մաշված վերարկ-
վով մի ծերունի, գլորելով իր առջևում մի դա-
տարկ սայլակ։ Նրա յետևից քայլում էին յեր-
կու կին։ Նրանցից մեկին մենք ճանաչում ենք —
դա Շառլոտտա Յունեմանն է։ Նրանք յերեքով պաս-
տոր Նեգելմյուլլերի հանձնարարությամբ նվի-
րատվություններ էին հավաքում «քրիստոնեյա-
կան ձմեռային ոգնության» համար։

Բարձր, նոր ներկված մի տան առաջ ծերունին
կանգ առավ և փռեց գլանակը։ Կանայք ներս մտան
մուտքից, իսկ ծերունին մնաց փողոցում իր սայ-
լակի մոտ։ Փրաու Յունեմանի ուղեկցուհին զան-
գահարեց։ Դուռը հազիվ բացվեց, աղախինը դիտեց
յերկու խնդրողներին փոսից մինչև գլուխ, ապա
նորից ծածկեց դուռն ու հեռացավ դեպի բնակա-
րանի խորքը։

— Ախ, նրանք բոլորովին չեն շտապում, փոր
բաց անեն դուռը մեր առջև, — հստակեց ֆրաու Յու-
նեմանը։

Այսոր նա առաջին անգամ իր կյանքում դուրս
եր յեկել նվիրատվություններ հավաքելու։

— Չլինի՞ դուք կարծում եյիք, թե մեզ պիտի

յերաժշտությամբ դիմափորեն, — ասաց նրան ավելի փորձված ուղեկցուհին: — Յես կարծում եմ, թե այսօր մենք փոչինչ չենք հավաքի, քանի վոր դուք շատ վատ եք հագնված: Գիտեք, մեր գործում ամենից գլխավորն է ընկնել բնակարանը: Իսկ ընկար այնտեղ, պետք է լեզվակոխ անել մարդկանց — փորպեսզի ձեզնից ազատվեն, մի բան գոնե կնվիրեն: Միայն այսօր մեզ դժվար թե մեկը ներս թողնի — ձեր հագուստից կարելի չե կարծել, վոր մենք մուրում ենք:

— Բայց յես ուրիշ բան չունեմ հագնելու, — կարմրելով պատասխանեց Փրաու Յունեմանը:

Ճար չկար: Ստիպված անցան դեպի մյուս դուռը: Փրաու Յունեմանի ուղեկցուհին յեռանդով զանգահարեց: Նա վստահ եր իր վրա: Ճիշտը վոր ասենք, նա ինքը կարիք չուներ «քրիստոնեյական ձմեռային ոգնության»: Յեթե նա ոգնում եր հավաքելու, ապա միայն մյուսների համար: Բանն այն է, վոր նրա մարդը պատուր Ենգելմյուլլերի յեկեղեցական փոքրավորն եր: Իսկ այդպիսի գործազրկության ժամանակ յեկեղեցական փոքրավորն ել պիտի գնահատի իր տեղն ու աշխատի սիրաշահել պատուորին: Ահա թե ինչու յեկեղեցական փոքրավորի կինը յեռանդագին ոգնում եր պատուորին նրա բարեգործություններում:

Սակայն յերկրորդ դուռն ել չբացվեց նրանց առաջ, չնայած Փրաու Յունեմանը սեղմվեց պատին, փորպեսզի մի անգամից աչքի չընկնի նրա մաշված հագուստը: Ստիպված յեղան բարձրանալ վերև: Այնտեղ փոքրիկ պղնձե տախտակիկի վրա գրված եր.

Դ-Ր ՄԱՔՍ ԿՈՆՐԱԴ

Հոյանդական պանրի գլխավոր ներկայացուցչություն Գերմանիայում

Դուռը բացվեց կիսով չափ: Փրաու Յունեմանը կանգնած եր անվճռական, բայց նրա ուղեկցուհին դռնով ներս ծլկվեց, և մի ակնթարթում նրանք յերկսով արդեն մի մեծ ընդունարանում եյին, վորը զարդարված եր հուլանդական պանրի խայտաբղետ ռեկլամներով:

— Մենք պետք է տեսնենք հերր դոկտոր Կոնրադին, — հայտարարեց յեկեղեցական սպասավորի կինը:

— Ի՞նչ հարցով, — հարցրեց աղախինը, անվրատահությամբ դիտելով յերկու կանանց:

— Գործով, — պատասխանեց Փրաու Յունեմանի հնարամիտ ուղեկցուհին:

Շաուլոտտայի ձեռքերը և վոտքերը դողդողում եյին յերկյուղից: Նա սովոր չեր ներս խուժել հարուստ տներ:

Աղախինն ասաց, վոր հերր դոկտորը տանը չի:


Այն ժամանակ սպասավորի կինը հայտնեց վճռականորեն, թե իրեն անհրաժեշտ է տեսնել հերր դոկտորի կնոջը, և շարժվեց առաջ աղախնի յետևից: Նա դժկամությամբ ճանապարհ ցույց տվեց նրան:

Խնդրողներն ընկան մի բաց-յերկնագույն բուդուար¹⁾: Յածրիկ բազկաթոռի վրա կիսանստել, կիսապառկել եր մի վալիչագեղ յերիտասարդ տիկին: Փոքրիկ, սպիտակ պուդելը պառկել եր նրա ծնկների վրա:

Փրաու Կոնրադի գեղեցիկ մուգ աչքերը զարմանքով կանգ առան Շաուլոտտա Յունեմանի վրա,

¹⁾ Եքեղ զարդարված կանացի առանձնասենյակ — ընդունարան:

միակնթարթում ի նկատի առան նրա կտրտված կոշիկները, նրա մաշված վերարկուն... Պուզելը ցած թռավ տանտիրուհու ծնկներից ու սուր ձայնով սկսեց հաշել:



— Դա ինչ փոր թյուրիմացությունն է, — բացականչեց տիկինը. — Դուք ի՞նչ եք ուզում:

Բայց յերբ հավաքարարները բացատրեցին, թե ինչի համար են յեկել, յերիտասարդ կնոջ դեմքը ծամածովեց զայրութից: Նա վրա պրծավ աղախնին.

— Մարթն, — բղավեց նա: — Այս ի՞նչ են շանակում: Ի՞նչպես համարձակվեցիք ներս թողնելու սրանց: Չե՞ք փոր դուք գիտեք, թե փորքան թույլ են իմ ներվերը: Աստված իմ, քո սեփական բնակարանումն ել հանգստություն չունենամ... Արդեն գլխացավս բռնեց: Յեվ... իմ խեղճ շնիկ: Հանգստացրեք նրան: Նա այնքան հուզված է... Յես վախենում եմ, փոր հիմա կսկսվի նրա մոլուցքը: Ա՛խ, ա՛խ, — և Փրաու Վոնրադն ուժասպառ ընկավ բազկաթռու վրա:

Մարթան չգիտեր ինչ աներ՝ շնիկին հանգստացնել, թե՞ տիրուհուն ուշքի բերել... Իսկ խնդրողները դեռևս կանգնած էին բուզումարում:

— Հապա շուտ, կորեք եստեղից, գործարար կանայք, — ֆլշաց աղախինը:

Շաուրտտա Յունեմանը դուրս փախավ այդ անհյուրընկալ բնակարանից, փորքան փոքերում ուժ կար: Նրա ուղեկցուհին, վազելով նրա յետևից, վրա պրծավ:

— Եդ բոլորը ձեր պատճառով յեղավ, — հայտարարեց նա, — հապա մի նայեք ձեր կոշիկներին: Մի՞թե կարելի չէ ձեզ հետ մտնել կարգին տները: Ինձ դեռ յերբեք եսպես չեյին վռնդել բնակարանից:

Փրաու Յունեմանը չպատասխանեց: Նա մտածում էր այդ տիկնոջ ճոխ սենյակի մասին, մտաբերում էր, նրա զարդարուն հագուստը:

— Նրա պուզելը յերևի ավելի լավ է ապրում, քան իմ յերեսաները, — թոթովեց նա վերջապես, — բա ո՞ւր է արդարությունն ես աշխարհում:

— Լավ, լավ, մեղք մի արեք, Փրաու Յունեման, տեղ աստվածը մեզնից ավելի լավ գիտե, թե ինչպես պետք է բաշխել մեր միջև հարստությունն ու աղքատությունը, — ուսուցանում էր նրան յեկեղեցական փոքրավորի կինը:

Հետևյալ բնակարանում ավելի լավ ընդունելություն գտան:

— Ա՛, դուք «քրիստոնեյական ձմեռային ոգնությունից» եք, — ասաց Փրաու Զիկերսը, իմանալով այցելման նպատակը: — Իհարկե, իհարկե, աղքատներին պետք է ոգնել: Միայն ափսոս, փոր յես հիմա փոչինչ չունեմ նվիրելու...

Յերևում էր, փոր տիկինն իսկապես ափսոսում էր, փոր նա փոչ մի կերպ չի կարող ազատվել

այդ խնդրողներից: Հանկարծ նրա դեմքը պայծառացավ:

— Ի՛նչ, յես գիտեմ, թե ինչ պիտի տամ ձեզ... Միայն փորտեղ եմ գրել, չգիտեմ:

Նա անհայտացավ, բայց շուտով վերադարձավ, հաղթական ձևով բերելով մի զույգ կտրտված փոսկեզոծ պարահանդեսային տուֆլիներ, անշափ բարձր կրունկներով:

— Վերցրեք գրանք, նրանք առաջ շատ սիրուն բաներ եյին: Յեթե նորոգես, կարելի չե նրանցով նորից պարել ինչքան քեֆդ ուզի:

Փրաու Զիկերսն ինքն ել հուզված եր իր առատաձեռնությունից:


Հետևյալ դուռը բացեց ինքը՝ տանտերը—ծերուկ առևտրական խորհրդական Բրաունը: Ծերուկը գլուխ տվեց կանանց և սիրալիկ հրավիրեց նրանց ներս:

Ծերունու սենյակը լիքն եր յերաժշտական գործիքներով: Ամենից շատ եյին փողերը՝ մեծ, փոքր, հասարակ և ամենաբարդը...

Նվիրեցեք գործազուրկների համար փորկե իր, փորը ձեզ համար անպետք ե, — դիմեց յեկեղեցական սպասավորի կինը ծերունուն:

— Խնդրեմ, ուրախությամբ, — փնթփնթաց նա: — Գիտեք ինչ, յես հին կոլեկցիոներ եմ: Սկզբում յես հավաքում եյի լուցկու տուփեր, հետո՝ համազգեստի կոճակներ, հետո՝ փողեր, իսկ հիմա յես հավաքում եմ միայն կոշիկներից ընկած կրնկատակեր: Վորովհետև դուք ել եք իրեր հավաքում, նշանակում ե, մենք ընկերներ ենք: Յես պետք ե ցույց տամ ձեզ իմ կոլեկցիան:

Յեվ ծերունին դուրս քաշեց մի ահագին



արկղ՝ լիքը հին ուղիներ կրնկատակերով: Կանայք միայն նայեցին իրար: Ծերունին պարզապես գուրկ եր բանականությունից:

— Դեհ, իսկ հիմա, — ասաց առևտրական խորհրդականը, ափսոսանքով ծածկելով արկղը, — յես մի բան կնվիրեմ ձեզ ձեր կուկեցիայի համար: Չե՞ վոր դուք հավաքում եք միայն անպետք իրեր: Այ, վերցրեք թեկուզ ես փողը: Նա իսկապես վոր ինձ պետք չի: Նրա յերկու կափույրն ե պակաս միայն, իսկ փողը յավ փող ե:

Ստիպված եյին վերցնել:

Խորհրդականը ճանապարհ դրեց կանանց մինչև դուռը և, հրաժեշտ տալիս, հայտնեց, վոր նրանք պիտի խոսք տան հավաքելու ուղիներ կրնկատատակեր իր համար:

— Քավթառ, հիմարի գլուխ, — քրթմնջաց յեկեղեցական փոքրավորի կինը և բարձրացավ հետևյալ հարկը:

Շաուրտտա Յունեմանը լուռ հետևում եր նրան:

Այսոր առավոտյան դուրս գալով նվիրատու-վություններ հավաքելու, նա այնպես եր յերազում ածխի, բարուրի, չկտրտված տակերով կոշիկների մասին... Պաստոր Ենգելմյուլլերը խոստացել եր առաջին հերթին նրան տալ այն բոլորը, ինչ վոր պետք եր իրեն: Բայց հիմա հույսը կորավ: Նա կվերադառնա դատարկաձեռն իր մոռյոլ, ցուրտ նկուղը: Մտքերը խառնվում եյին գլխում, վոտքերը ծալվում եյին թուլությունից: Շաուրտտան չնկատեց նույնիսկ, թե ինչպես ընկավ մի մեծ, լուսավոր սենյակ, վոր կահավորված եր գեղեցիկ, հարմար կահվարասիքով: Այստեղ շատ կային զարդարուն հագուստներով մարդիկ: Նրանք բոլորը — աղա-

մարդիկ և կանայք — խոնվել եյին կարմիր հագուստով մի փոքրիկ աղջկա շուրջ:

Յերեխայի մայրն շտապով մոտեցավ խնդրողներին...

— Ախ, յես հիմա ժամանակ չունեմ: Մենք տոնում ենք այսոր իմ աղջկա ծննդյան օրը: Հենց այսոր լրացավ նրա յերկու տարին: Յեկեք մի քանի օրից հետո:

Բայց Շաուրտտա Յունեմանը տեղից չեր շարժվում: Հմայվածի նման նայում եր նա բախտավոր յերեխայի կարմիր թշիկներին, հաստիկ ձեռքերին և վոտքերին: Իսկ նրա ինզան, այդ փոքրիկ կմախքը, պառկած ե մենակ նկուղում, և վոչ վոք գործ չունի նրա հետ: Յեվ այդտեղ Փրաու Յունեմանը, վոր առավոտից վոչ մի խոսք չեր արտասանել, հանկարծ սիրտ առավ և, մի քայլ առաջ անցնելով, աղաչանքով ասաց բախտավոր մորը.

— Չե՞ վոր դուք մայր եք, դե խղճացեք իմ աղջկան: Ինզա յե նրա անունը: Նա դեռ բոլորովին փոքր ե: Նա դեռ չորս ամսական ել չկա: Յես աղքատ եմ, յես գործազուրկ եմ, յես վոչինչ չունեմ յերեխային կերակրելու: Յես ածուխ չունեմ, մեր նկուղում այնպես ցուրտ ե... Ինզան բարուր չունի, յես հին վարագույրի մեջ եմ փաթաթել նրան...

Տանտիրուհին ակնհայտ դժգոհությամբ լսում եր Փրաու Յունեմանին: Բայց սա ուշադրություն չեր դարձնում դրա վրա: Նա չեր նկատում նաև այն, վոր իր ուղեկցուհին քաշում ե նրան դեպի դուռը և ֆշշում՝ «Սոսա արեք, դա անքաղաքավարություն ե», — նա մտածում եր իր յերեխաների մասին:

— Իուք պիտի հասկանաք ինձ, — յեռանդով շա-

բունակում եր Շառլոտտան:—Ոգնեցէք ինձ: Տվէք ինձ ձեր աղջկա հին սպիտակեղենը և շորերը, փորոնք արդեն փոքր են նրա համար: Ձե՛ փոր դրանք արդեն պետք չեն ձեզ:

—Յես արդեն ասացի ձեզ,—հոնքերը կիտելով, ասաց տանտիրուհին,—յեկեք մի քանի որից հետո, յես կնայեմ, գուցե մի բան ել գտնեմ ձեզ տալու: Իհարկե՛ իմ աղջկա իրերի մասին խոսք չի կարող լինել, յես սրբութեան պես պահում եմ դրանք իբրև հիշատակ: Դուք փորպես մայր, պետք է հասկանաք ինձ: Իսկ հիմա յես պիտի վերադառնամ դեպի իմ հյուրերը:

Յեկեղեցական փոքրավորի կինը գրեթե ուժով դուրս տարավ Շառլոտտա Յունեմանին բնակարանից: Այ քեզ խելագար: Նա բոլորովին չգիտեր իրեն պահել կանոնավոր տներում:

—Նստեղ մենք կբաժանվենք իրարից,—չարացած ասաց նա Շառլոտտային:—Դուք առանձին հավաքեք, յես ել առանձին: Յես չեմ ցանկանում փոր ամեն տեղից փռնդեն ինձ ձեր պատճառով...

Բայց հանկարծ նա լռեց և վախեցած յետ-յետ գնաց դեպի սանդուխքի բազրիքը, նրա վրա շեշտակի նայում եյին վայրենի փայլով լի, սարսափելի աչքերը: Անմիտ, սարսուցեցնող ծիծաղը հնչեց սանդուխքների վրա:

—Տվէք ինձ այդ կոշիկներն իբրև հիշատակ,—բղավեց Շառլոտտա Յունեմանը:

Նա խլեց պարահանդեսի տուֆլիները վախեցած կնոջ ձեռքից և սլացավ սանդուխքով դեպի վեր: Մի ձեռքում նա ամուր պահել եր փոսկեզոծ տուֆլիները, իսկ մյուսում—կտրտված փողը: Նրա բրբիջն արդեն լսվում է վերևի հարթակից: Փրաու

Յունեմանը կատաղի սեղմում է զանգի կոճակը, զանգն անընդհատ գրնգում է: Նա վայր է գցում վախեցած աղախնուն և նետվում սենյակ, փորտեղ յերկու տղամարդ խաղաղ սուրճ են խմում:



—Դա խելագար է,—գոչում է տղամարդկանցից մեկն ու փախչում մյուս սենյակը:

—Մի բան նվիրեք ինձ իբրև հիշատակ,—խռպտում է Շառլոտտա Յունեմանը, վազելով մյուս տղամարդի հետևից սեղանի շուրջը:—Հսկում եք, մի բան նվիրեք ինձ իբրև հիշատակ:

Տղամարդը սայթաքում է, և նա բռնում է նրա ձեռքից:

Սփրթնած, վախեցած մարդը հուսահատ փնտռում է իր գրպաններն ու, վերջապես, դողդոջուն ձեռքով հանում է զարդարուն պորտսիգարը:

Փրաու Յունեմանը, սեղմելով թևի տակ փողը, վերցնում է պորտսիգարը և դուրս վազում բնակարանից:

Նա սլանում եր Բեռլինի փողոցներով դեպի Վեյնշտրասսե: Անցորդները կանգ եյին առնում նրան տեսնելիս և փնթփնթում:

— Խելքը կորցրել ե...

Ֆրաու Յունեմանը, ատամները բացած, շարունակում եր վազել: Փոքրիկ գլխարկը թռել եր նրա գլխից, և մազերը ծածանվում եյին քամուց: Փողը նա ինչ վոր տեղ կորցրեց, բայց վոսկեզոծ տուֆլիներն ու շքեղ պորտսիգարն ամուր սեղմում եր կրծքին:

Բակում Ֆրաու Յունեմանը դեմառդեմ հանդիպեց հերը և Ֆրաու Ռուպպերտներին: Նա ծիծաղեց նրանց յերեսին և վազելով անցավ մոտներից:

— Հարբած ե, ինչ ե, — վրդովվեց Ֆրաու Ռուպպերտը՝ մայրերի և յերեսաների պաշտպանության ընկերության նախագահը: — Դու ուշադրություն դարձրի՞ր նրա պարահանդեսի տուֆլիներին: Բրունո, քեզ ասում եմ՝ նա գիշերները մինչև լույս պարում ե, իսկ յերեսաներին թողնում ե մենակ, կողպեքի տակ: Չլսված բան ե դա: Հենց յերեկ եր ասում ինձ մեր Աննան, վոր յերեսաներն անընդհատ բզավում են ենտեղ նկուղում... Եղ կինը բոլորովին մոլորվել ե: Նա գիտի, վոր յես մայրերի պաշտպանության ընկերության նախագահն եմ և են որն ինձնից կաթ եր ուզում իր յերեսաների համար...

— Իսկ դու ի՞նչ պատասխանեցիր նրան, — հարցրեց Հերը Ռուպպերտը:

— Վոր յես կաշխատեմ գլուխ բերել եզ գործը և պատասխան կտամ նրան հետո: Ել ինչ կարող եյի անել: Դե պետք եր մի կերպ ազատվել նրանից:

— Դու սխալ ես վարվել, — առարկեց ամուսինը: — Այդ կեղտոտ կինն ամբողջ ժամանակ խոթվում ե մեր տունը, վոր իմանա, թե կաթի խնդիրն ինչ յեղավ: Յես չեմ ցանկանում, վոր իմ բնակարանում միշտ ցցված լինի այդ արարածը:

Դու պետք ե կտրուկ մերժես նրան և արգելես մեզ մոտ գալ: Ի՞նչ գործ ունենք նրա և նրա յերեսաների հետ:

ԳԼՈՒԽ ՏԱՍԵՐՈՐԴ

ԸՆԴՀԱՏՎԱԾ ԽԱՂԸ

— Են ռվ եր, վոր հենց նոր զանգը տվեց, Լուցի, — հարցրեց Փրաու Մերկերը:

— Դա մի մուրացկան է, տիկին, նա սոված է... Կարելի չե նրան տալ յերեկվա կերակրի մնացորդները:

— Լուցի, քանի անգամ ասել եմ ձեզ, վոր մուրացկաններին ներս չթողնեք: Վռնդեցեք նրան անմիջապես, իսկ կերակուրը կարող եք թափել:

Ռորբին ուշադրությամբ ականջ եր դնում այդ խոսակցությանը: Նա արդեն ուզում եր բերանը բացել, վոր մի ինչ վոր հարց տա, բայց հենց այդ ժամանակ բակից լսվեց մի ուրախ յերաժշտութիւն, և Ռորբին դուրս վազեց բալկոն, նայելու, թե ինչ է պատահել:

— Ա՛խ, մայրիկ, — բղավեց նա, յետ դառնալով, — ետեղ ամբողջ մի նվագախումբ կա: Ես մարդիկ ինչի՞ համար են ման գալիս բակերը:

— Դրանք գործազուրկ արտիստներ են, — պատասխանեց մայրը, — նրանք նվագում են փողոցում և փող են վաստակում:

— Իսկ ինչ է նշանակում — գործազուրկ:

— Այդպես կոչում են նրանց, վորոնք չեն աշխատում:



— Հը՛, գիտեմ, գիտեմ, — ուրախ բացականչեց տղան: — Դա նույնն է, ինչ վոր հորեղբայր Վիկտորը: Չե՞ վոր նա ամբողջ ուրը վոչինչ չի անում և միայն ման է գալիս իր ավտոմոբիլով: Յերբ յես մեծանամ, յես ել պիտի գործազուրկ դառնամ...

— Ա՛յ դու հիմար տղա: Հորեղբայր Վիկտորը բոլորովին ուրիշ բան է: Նա գործարան ունի, ետեղ յերեք հարյուր բանվոր է աշխատում: Յերբ հարյուր մարդ ապրուստ են վաստակում իրենց համար, շնորհիվ հորեղբայր Վիկտորի:

— Դե, ուրեմն նրանք շատ են սիրում նրան: Յես ելեմ սիրում հորեղբորս, չե՞...

Փրաու Մերկերը ծիծաղեց:

— Չե, չի կարելի ասել, թե նրանք սիրում են նրան:

— Մայրիկ, իսկ նրանք ինչո՞ւ չեն սիրում նրան:

— Աստված իմ, Ռորբի, դու այսօր իմ հոգին հանեցիր քո հարց ու փորձով... Ավելի լավ է առ

ես հինգ պֆեննիզը տար յերաժիշտներին, համ ել մի քիչ ման կգաս բակում:

Ռորբին վազեց սանդուխքով ներքև: Վերջին որերն անընդհատ անձրև եր գալիս, և միայն այսոր եր, վոր արեգակը մի փոքր չորացրել եր գետինը: Նշանակում ե կարելի յե նորից վազվել բակում և խաղալ:

Նվագախումբն արդեն պատրաստվում եր գնալ: Ռորբին հանձնեց դրամն և ուղեկցեց յերաժիշտներին մինչև դարպասը: Յերբ վերջին յերաժիշտն անհայտացավ անկյունից այն կողմը, Ռորբին կամաց վերադարձավ յետ: Ի՞նչ խաղալ: Նա փորձեց հորեղբայր Վիկտորի մեծ, դեղին ամսոմորիլը խաղալ:

— Տու-տու-տու — սուլում եր մեքենան, կտրուկ շրջադարձեր անելով: — Հոպ, հոպ, — դա փողոցի շարժումը ղեկավարող վոստիկանի ազդանշանն է: — Իսկ հիմա դանդաղ գնա... — Բայց վորքան Ռորբին աշխատում եր պահել բոլոր կանոնները, նրան այնուամենայնիվ ինչ վոր բանի համար տուգանեց հաստ «շուպոն»¹: Սաղոր, սակայն, շուտով ձանձրացրեց Ռորբին. մենակ խաղալը հետաքրքիր չի: Նա հիշեց Բերնհարդին: Ո՛ւր ե կորել Բերնհարդը: Ռորբին արդեն վաղուց չեր տեսել նրան: Պետք ե նայել այն անկյունը, աղբի արկղների յետևը: Բայց արկղները կանգնած եյին մռայլ և միայնակ: Շուրջը խաղաղ եր և դատարկ:

Ռորբերտը փորձեց անվճռականորեն մտնել նկուղի մուկ անցքը: Ուրախ բացականչությունը դուրս թռավ տղայի կրծքից.

— Բերնհարդ:

¹ Շուպոն — վոստիկանի մականունը:

Այդ իսկապես Բերնհարդն եր: Նա նստել եր սանդուխքի ամենացածր աստիճանին և կծկվել — մի գունդ եր դարձել: Յերկու ձեռքը նա շղաճաբար սեղմում եր փորին:

Բերնհարդը լսեց Ռորբիի կանչը, բայց փոշինչ չպատասխանեց, այլ միայն տնքաց:

Այն ժամանակ Ռորբին նստեց աստիճանի վրա՝ նրա կողքին, և կարեկցաբար հարցրեց.

— Ի՞նչ ե յեղել քեզ, Բերնհարդ, հիվանդ ես:

— Ո-ո՛յ, ո-ո՛յ, — տնքում եր նա:

— Գիտե՞ս ինչ, Բերնհարդ, յես կլինեմ բժիշկ ու կբժշկեմ քեզ, — առաջարկեց Ռորբին: Յեվ նա ասաց խիստ ձայնով. — Յեթե դուք վատ եք զգում ձեզ, կուլ տվեք այս դեղահատը: Սա շատ լավ ե ազդում:


Յեվ հանելով գրպանից

մի թքոտած կարամել՝ Ռորբին այն դրեց Բերնհարդի բերանը:

— Ձեր ի՞նչն ե ցավում, գլուխը, թե՞ փորը, — շարունակեց նա խաղը:

Բերնհարդն այնքան ակնհայտնի սեղմում եր ձեռքը փորին, վոր բժիշկը յերբեք չեր կարող սխալվել:

— Վոր եղպես ե, մի դեղահատ ել կուլ տվեք և դուք իսկույն կլավանաք, — հայտարարեց նա և տվեց Բերնհարդին յերկրորդ կարամելը: Ապա դնելով իր բերանը վերջին կանֆետը՝ Ռորբին նստեց



Բերնհարդի կողքին: Հիմա յերկու տղաները նու-
տած եյին իրար մոտ և անխնա ծծում եյին կա-
րամելը:

— Դու շատ վատ ես զգում քեզ, — հարցրեց նո-
րից Ռոբբին:

— Շատ, շատ, — կամացուկ շշնջաց Բերնհարդը:

— Դու յերևի չափից դուրս շատ ես կերել: Ինձ
հետ ել մեկ-մեկ պատահում ե: Յերբ մի բան ինձ
շատ ե դուր գալիս, յես ուտում եմ, ուտում ու
եւ չեմ կարողանում կանգ առնել: Մայրիկը միշտ
եւաւում ե, վոր եդ իմ փորն ե բարկանում ինձ
վրա և ցավ ե պատճառում ինձ:

— Չե, չե, — ասաց Բերնհարդը, — յես բոլորովին
բան չեմ կերել: Յես շատ սոված եմ: Իսկ մայրիկո
հրես բերել եր սրանք, յես ել կերա:

Յեվ Բերնհարդը ցույց տվեց Ռոբբիին պորտսի-
գարը, վորի մեջ կարմիր պիտակներով սիգարներ
կային:

— Դու կերամք սրանցից, — զարմացավ Ռոբբին: —
Դե հո սա ուտելու համար չի, սա ծխելու համար ե:
Իմ հայրիկն ել ունի եսպիսի սիգարներ: Յեվ գիտե՞ս,
սրանք պետք ե վառես, և այն ժամանակ շատ համեղ
են լինում: Իմ հայրիկը շատ ե սիրում սիգարներ:

Բայց Բերնհարդը չեր լսում նրան: Նա կուչ
եր յեկել աստիճանների վրա և կամացուկ տնքում
եր: Նա վատ եր զգում իրեն, այնքան վատ, վոր
նույնիսկ չեր ուրախանում Ռոբբիի հետ հանդի-
պելուն: Իսկ սա սիգարը դրեց բերանը, փքված
դեն եր գցում վրայից յերևակայական մոխիրը և
բաց եր թողնում յերևակայական ծուխն իր քթից:

— Պատմիր, Բերնհարդ, ուր եյիր դու եսքան

ժամանակ, — հարցրեց նա, նմանեցնելով հորը՝
հյուրերի հետ խոսելիս:

— Մանկատանը:

— Իսկ եգո՞ւց ել կգնաս ենտեղ:

— Չե, ինձ ուղարկեցին տուն:

— Դու ուրմիս ես դրա համար:

— Չե: Յես ուզում եյի մնալ ենտեղ: Ենտեղ
միշտ սուպ և շիլա եյին տալիս ինձ...

Ռոբբին չի հասկանում, թե ինչ լավ բան կա
սուպի ու շիլայի մեջ, բայց նա չի վիճում Բերն-
հարդի հետ:

— Արի գնանք խաղանք բակում, — առաջարկում
ե նա: — Յես սիգար կծախեմ, իսկ դու կլինես գնողը:
Լավ:

Այդ հրապուրիչ առաջարկից Բերնհարդը յերբեք
չեր կարող հրաժարվել: Նա զժվարու թյամբ բարձրա-
ցավ տեղից ու քաշ յեկավ Ռոբբերտի հետեւից:
Այդ ժամանակ նկուղի դռանը յերևաց նրա մայրը:
Դատարկ կնուճը ձեռքին նա դուրս թռավ բակը
և վազեց ինչ վորտեղ: Նա չնկատեց Բերնհարդին
և տղան շատ ուրախ եր դրա համար: Վերջին
ժամանակ մայրն այնքան տարորինակ եր դարձել:
Բերնհարդն ուղղակի վախենում եր նրանից:
Առանձնապես սարսափում եր նա նրա անշարժ
հայացքից ու սուր ծիծաղից: Նրա մարմնով սարսուռ
եր անցնում, յերբ մայրն սկսում եր ծիծաղել...

Ռոբբերտը տարվեց նոր խաղով: Նա քայլում եր
շրջագծով, յուրաքանչյուր չորս քայլի վրա կանգ
եր առնում, զանգահարում յերևակայական դռան
մոտ, վողորմություն խնդրում, վռնդում եր իրեն

բնակարանից և գնում դեպի հետևյալ դուռը: Վեր-
ջապես Ռոբբինսոնը տեսնում է Բերնհարդին և հենց պատ-
րաստվում էր սիգարառաջարկել նրան, յերբ ֆրաու
Յունեմանը նորից յերեկաց բաղում: Բերնհարդը
սառեց ու մնաց իր տեղում: Մայրը սլանում էր
ուղիղ դեպի իրեն: Բերնհարդը տեսնում էր նրա
փայլատակող աչքերը, զգոգված մազերը: 'Խատարկ
կճուճը դեռ նրա ձեռքումն էր: Բերնհարդը լաց
յեղավ և յերկու ձեռքով ծածկեց յերեսը:

Ֆրաու Յունեմանը բռնեց տղայի ոճիքից և
առանց մի խոսք ասելու, քաշ տվեց նրան նկուղ:
Բերնհարդը դիմադրում էր նրան փորքան ուժ
ունենալով, բղավում ամբողջ ձայնով, բայց ֆրաու Յու-
նեմանն ուշադրութ չուն չեր դարձնում նրա դիմա-
դրության վրա և քաշ էր տալիս նրան իր հետե-
վից:

Շրը' խկ: — Այդ ֆրաու Յունեմանը ծածկեց դուռն
իր հետևից:

Ռոբբինսոնը, — նորից լսվեց Բերնհարդի ձայնը,
և, վախենալով, Ռոբբինսոնը շտապով փախավ Բերն-
հարդի սարսափելի մորից, վորը կարող էր հենց
իրեն ել քաշել նկուղը: Ռոբբինսոնը հանգստացավ միայն
այն ժամանակ, յերբ հասավ իրենց բնակարանի
դռանը: Նա նույնիսկ չնկատեց, վոր բերել է իր
հետ Բերնհարդի պորտոսիգարը:

Այդ ժամանակ ֆրաու Յունեմանը պինդ, շատ
պինդ ծածկեց նկուղի դուռը: Յերեք հոգի հուսա-
հատ գոռացող յերեխաներ մնացին փակված: Գլուխը
բաց պատառոտված կոշիկներով և կոճակներն արձակ
վերարկվով ֆրաու Յունեմանը դուրս վազեց
փողոց: Ճանապարհին նա քիչ էր մնում վոտի տակ
առներ մի կողմ քաշվող ֆրեյլեն Շենեկեյին և
նույն իսկ, չնկատելով նրան, շարունակեց վազել

առաջ: Նա վազում էր պայծառ յուսավորված
փողոցներով, ուղեվորվելով դեպի Բեռլինի կենտ-
րոնը: Ահա Պոտսդամի կամուրջը: Շաուրտտա Յու-
նեմանը դանդաղեցրեց քայլերը, հանեց զրպանից
մի բան — այդ իր սենյակի բանալին էր — և զցեց
ջրանցքի մեջ: Մի քանի անցորդներ կանգ առան,
լսելով նրա վայրենի ծիծաղը... Բայց ահա ֆրաու
Յունեմանի՝ քամուց ծածանվող՝ վերարկուն արդեն
անհայտացավ ամբոխի մեջ...

Խոնավ աղջամուղջը խտացավ վեյնշտրաս-
սեյում գտնվող № 27 տան բակի վրա: Խորն ընկած
նկուղի մեջ լաց եյին լինում և գոռում փակված
յերեխաները: Բայց վոչ վոք չեր լսում նրանց:
Իսկ բնակարանի բանալին ընկած էր ջրանցքի
հատակին:

Դա 1935 թվի հունվարի 26-ին էր:

ԳԼՈՒԽ ՏԱՍՆՄԵԿԵՐՈՐԴ

ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՊԱՐԱՀԱՆԴԵՍՆԵՐԻ, ԳՈՐԾԱԶՈՒՐԿՆԵՐԻ
ՇՈՒՅԼՈՒԹՅԱՆ ՅԵՎ ԲԱՄԲԱՍԱՆՔՆԵՐ ԶՍԻՐՈՂ
ՄԱՐԴԿԱՆՑ ՄԱՍԻՆ

— Դա հիանալի յեր, հիանալի: Յերևակայել չեք կարող՝ այնպիսի ճոխություն, այնպիսի գեղեցկություն: Իսկ հյուրերը, Ֆրաու Մերկեր, ինչպիսի հյուրեր կային — Բեռլինի ամենաշոկոփ հասարակությունն եր այնտեղ: Կոմսուհի Ֆոն Նիսսբուրգը, յերկու բարոնեսսա Հելմերը, մի ուսմեծ իշխան և նույն իսկ մինիստրի հարսնացուն: Ինչպիսի շորեր երհագել նա: Դուք արդեն կարդացիք լրագրում այդ մասին:

— Չե գեռ, — պատասխանեց Ֆրաու Մերկերը և վերցրեց գեռ չբացված լրագիրը:


— Ա՛յ, ա՛յ, — ցույց տվեց նրան Ֆրաու Ռուպպերտը: — Հսեցեք, ինչ ե գրած եստեղ:

Յե՛վ նա բարձր կարդաց.

— «Արտիստիկա Շչուլգոֆի հագուստն ու արդուզարդը արժեք հինգհարյուրհազար մարկ, իսկ կոմսուհի Նիսսբուրգինը — ութհարյուրհազար մարկ: Մյուս տիկիներն հագուստները նույնպես աչքի եյին ընկնում արոաստվոր շքեղությամբ: Ընդհանուր ուշադրություն եր գրավում իր վրա մինիստրի հարսնացուն՝ նրա զարդարանքը — մի ամբողջ կարողություն արժեք... «Ֆրաու Մերկեր, ձեզ ասում եմ դա մի այնպիսի գեղեցիկ տեսարան եր, վոր յես համբերություն չունեյի սպասելու մինչև այն ժամանակ, յերբ հնարավոր կլիներ պատմել ձեզ այդ բոլորի մասին»:

Ֆրաու Ռուպպերտն այնքան եր տարված, վոր անընդհատ խոսում եր:

— Բայց դե հո մենակ այդ չի: Դահլիճը զարդարված եր մետաքսով և ծաղիկներով, միայն մետաքսով ու ծաղիկներով, յերևակայեցեք: Ծաղիկներ — փետրվարին: Իժվար ե նույնիսկ պատկերաց-



ներ, թե ինչ կարող եր արժենալ այդ բոլորը: Իսկ ճաշկերույթը, Ֆրաու Մերկեր: Թարմ մրգերն ու կանաչին սավառնակով Բալիսիայից եյին բերել: Չե, չե, Ֆրաու Մերկեր, յես մինչև հիմա ել չեմ կարողանում ուշքի գալ:

Ֆրաու Մերկերին վերջապես հաջողվեց նույնպես մի խոսք ասել.

— Այո, այդ բարեգործական յերեկույթները մեծ ճոխությամբ են կազմակերպվում: Անցյալ շաբաթ մենք հրավիրված եյինք մի այդպիսի պարահանդեսի և ուղղակի հիացել եյինք:

— Իսկ ի՞նչ ե նշանակում բարեգործական յերեկույթ: — Ուրբին պատրաստ կանգնել եր իր հարցերով:

— Այո, ինչ լավիկն ե ես տղան,— գոչեց շողո-
քորթելով Ֆրաու Ռուպպերտը։ — Ամեն ինչ նա պիտի
իմանա։

— Այդ պարահանդեսներ են, վորոնք կազմա-
կերպվում են գործազուրկների և նրանց յերե-
խանների կամ պատերազմի հաշմանդամների ոգ-
տին,— բացատրեց մայրը նրան։

— Հասկանում եմ, մայրիկ, նշանակում ե, գոր-
ծազուրկներն ու հաշմանդամները յեկել եյին այդ
պարահանդեսին զվարճանալու։

— Չե, բայիկ ջան, նրանք նստած եյին տանը։
Այդպիսի պարահանդեսներ ամեն մարդու չեն
թողնում։ Այնտեղ պիտի լավ հագնված լինել, գոր-
ծազուրկները լավ հագուստներ չունեն պարերի
համար։

— Ուրեմն, յեթե գործազուրկներին եղտեղ չեն
թողնում, նրանց փոխարեն պարում են ու զվար-
ճանում ուրիշները։

— Իհարկե։

— Իսկ դա գործազուրկներին դուր ե գալիս։

— Պարզ ե, վոր այդպես ե, չե՞ վոր այդպիսի
պարահանդեսներից ստացված յեկամուստները
գնում են նրանց ոգտին։

Ռորբին լռեց ու զբաղվեց իր խաղալիքներով։
Նա վճռեց անմիջապես իր կուրբիկներից կառուցել
մի մեծ պարի դահլիճ և այնտեղ պարահանդես
սարքել գործազուրկների ոգտին։

— Այո, դա մի շքեղ պարահանդես եր,— վերա-
դարձավ Ֆրաու Ռուպպերտը ընդհատված խոսակ-
ցությանը։

— Զարմանալի յե, վոր դա դեֆիցիտով վեր-
ջացավ։

— Ի՞նչ եք ասում։

— Այո, յերևակայեցեք։ Այդպես են գրում լրա-
գրում. պարահանդեսը քսան հազար մարկ դեֆի-
ցիտ ե տվել։

— Մայրիկ, իսկ ի՞նչ բան ե դեֆիցիտը,— հարցր-
րեց Ռորբին, վորին դուր յեկավ անձանոթ
խոսքը։

— Դեֆիցիտ այսինքն յերբ դրամ ունենալու փո-
խարեն պարտքեր ես ունենում։

— Ուրեմն, պարահանդեսը պարտքե՞ր ունի։
Մայրիկ, ուրեմն չարժեր, վոր գործազուրկներն
ուրախանային եդ պարահանդեսի համար։ Հիմա
նրանք պիտի վճարե՞ն ես դեցիֆիտը։

— Պետք ե ասել դեֆիցիտ, Ռորբի,— ուղղեց
նրան Ֆրաու Ռուպպերտը։ — Ի՞նչ լավիկն ե ձեր
յերեխան, Ֆրաու Մերկեր։

— Չե, Ռորբի, գործազուրկները չեն վճարի,
նրանք փող չունեն դրա համար։ Դեֆիցիտը կծած-
կի, իհարկե, Բեռլին քաղաքն իր միջոցներից։

Ռորբին դուրս նայեց լուսամուտից։ Արեգակը
պայծառ լուսավորում եր, յեղանակը լավ եր։ Նա
մի ակնթարթում մոռացավ պարահանդեսների և
դեֆիցիտների մասին՝ — չե՞ վոր մայրիկը խոստացել
ե տանել նրան այսոր կենդանաբանական այգի։

— Մայրիկ, արի գնանք, շուտ,— բացական-
չեց նա։

— Հիմա կգնանք, Ռորբի, յես միայն սպասում
եմ Լուցիին։ Հասկանալ չեմ կարողանում, ես ո՞ւր
ե կորել նա։

— Յես գնամ տուն շորերս փոխեմ,— ասաց
Ֆրաու Ռուպպերտը,— Ինձե՛լ իմաց տվեք, միասին
գնանք։

Յե՛վ նա գնաց:

Ֆրաու Մերկերը նորից նայեց խոհանոցը, վան-
նայի սենյակը, մառանը—վոչ մի տեղ Լուցիի հետքն
անգամ չկար: Ո՛ւր ե կորել նա: Չե՞ վոր նա
գիտի, վոր տերերը տեղ պիտի գնան... Յե՛վ Ֆրաու
Մերկերը, բռնելով վորդու ձեռքից, իջավ բակը
Լուցիին վորոնելու:

Բայց դռնապանն ել չեր տեսել Լուցիին:

Ռոբերին, իջնելով բակը, իսկույն և եթ վազեց
դեպի նկուղի սանդուխքը: Նա ուզում եր գրուցել
Բերնհարդի հետ, իսկ սա ել, կարծես դիտմամբ,
տանից դուրս չի գալիս: Ռոբերին յերկու-յերեք
անգամ մոտեցավ նրա դռանը և ականջ դրեց:
Մի անգամ նույնիսկ նրան թվաց, թե Բերնհարդը
լաց ե լինում: Բայց գուցե դա Բերնհարդը
չեր, այլ նրա փոքրիկ յեղբայրը կամ քույրիկը:
Հիմա ել Ռոբերին վոչ վոքի չտեսավ սանդուխքի
վրա: Բայց դրա փոխարեն նա լսեց, վոր մեկը
ներքևում աշխատում ե բացել դուռը և չի կարողա-
նում: Բայց մայրը կանչեց Ռոբերին, և նա շտապ
վազեց դեպի մայրը: Ֆրաու Մերկերը հանդիմա-
նեց Ռոբերին, վոր նա նորից գնացել եր արգել-
ված տեղը, բայց այդ ժամանակ ի զարմանս իր՝
նկուղից յերևաց Լուցին:

— Դուք ի՞նչ եք անում այստեղ, — բարկացած
գոչեց Ֆրաու Մերկերը: — Յես ամեն տեղ փնտռում
եմ ձեզ, իսկ դուք ցցվել եք մի այնպիսի տեղում,
վորտեղ վոչ վոք չի կարող գլխի ընկնել ձեզ վորո-
նելու:

— Ֆրաու Մերկեր, — պատասխանեց Լուցին
շփոթված, — եստեղ ապրում ե մի գործազուրկ կին
իր յերեխաների հետ: Յերեխաներն ամբողջ ուրը

լաց են լինում, և յես վախենում եմ, վոր մայրը
զցել ե նրանց: Նրանք սոված են, յերևի...

— Ի՞նչ գործ ունեք եդ մարդկանց հետ: Լավ
կլիներ դուք մտածեյիք այն մասին, վոր Ռոբերի
բոլոր կոճակներն իրենց տեղում լինեյին:

— Ֆրաու Մերկեր, յես միայն մտածում եյի...

— Մտածեցեք, ավելի լավ ե, ձեր պարտակա-
նությունների մասին: Ձեր պատճառով մենք արդեն
մի ամբողջ ժամ ե, վոր չենք կարողանում տանից
դուրս գար: Յեթե դա նորից կրկնվի, հիշեցեք, Լու-
ցի, վոր յես ուրիշ կերպ կխոսեմ ձեզ հետ:

Յե՛վ բարկացած Ֆրաու Մերկերը շուռ յեկավ
ու գնաց տուն:

Լուցին լուռ հետևեց նրան...

Խոհանոցում դեռ նա շատ աշխատանք ուներ:
Բացի դրանից, դեռ պետք եր արդուկել յերկու
ամբողջ կապ սպիտակեղեն: Լուցին դանդաղ սկսեց
իր աշխատանքը: Սպիտակեղենից ախորժելի թար-
մություն եր բուրում: Լուցին, կամացուկ մի յերգ
մրմուռով, սկսեց արդուկել:

— Լուցի, մենք գնում ենք և կվերադառնանք
ժամը յոթին: Տեսեք, վոր ընթրիքը պատրաստ լի-
նի մեր գալուն... Սպիտակեղենն ամբողջը արդու-
կեք ու դարսեք պահարանը: Ձեմ հասկանում՝ ին-
չո՞ւ յեք դուք եսքան քաշ տալիս արդուկելը: Դուք
հետաքրքրվում եք այնպիսի բաներով, վոր բոլո-
րովին ձեզ չի վերաբերում, և դրա պատճառով
աշխատանքը կանգ ե առնում:

Վերջապես Ֆրաու Մերկերը դուրս յեկավ տա-
նից:

Լուցին յեռանդով արդուկում եր, բայց բար-
ձի թողի արած նկուղը նրա գլխից չեր դուրս գա-
լիս:

«Եսոր արդեն փոշինչ չի դուրս գա,— մտածում երևա,— բայց եգուց, եգուց անպաման... Ախ, բայց չե՞ փոր եգուց մենք պիտի տունը հավաքենք, ելի հնար չի լինի դուրս պրծնելու...»

Բայց նկուղը միայն Լուցիին չեր անհանգրստացնում։ Ներքևում դռնապանը հուզված պատմում եր իր կնոջը.

— Յես ասացի նրանց, փոր առաջ ել եմ նկատեի փորոշ տարորինակություններ ֆրաու Յունեմանի մեջ։

— Դու պիտի պարզե-պարզ ասեյիր փոր նա խելագար ե, — վրա բերեց նրա կինը։

— Յես ենտեղ ասացի ինչ փոր հարկավոր եր... Յեվ այն մասին, թե յերեխաներն առանց խնամքի մնացել են սենյակում փակված։ Իսկ նրանք ասացին, փոր իրենք դայակներ չեն, փոր գործ չունեն գործազուրկի յերեխաների հետ, և վոնդեցին ինձ քաղաքամասից։ Ահա բո որր։

— Անիծվածներ, անիծվածներ, — կրկնեց դռնապանի կինը։ — Նրանք յերեխաների հետ գործ չունեն։ Լավ փոր եղպես ե, մենք ինքներս կհոգանք նրանց մասին։

— Յես եղ ել առաջարկեցի փոստիկանությանը, բայց նրանք սպառնացին ինձ, փոր պատասխանատու փության կկանչեն բնակարանի դուռը կոտրելու համար... Չե, դա ենքան ել հեշտ չի։

Տու-սու, տա-ա, տու-սու, — հնչեց այդ ժամանակ փոստիկանական ավտոմոբիլի շշակը։ Մեքենան փոստիկաններով լեփ-լեցուն, նետի նման սլացավ դարպասի մոտով։

— Այ, բանվորների վրա հարձակվելը — դա նրանց գործն ե, — շնչաց դռնապանի կինը, և նրանք

միասին դուրս յեկան դարպասից նայելու, թե ուր ե սլանում մեքենան։

— Հրեշներ, գետինը մտնեք, հա, — սրտանց ցանկացավ դռնապանի կինը։

— Բարի էր, հերր Ռեյնիկե, — սիրալիր ժպտաց նա իսկույն իր անեցուն։ — Դուք չգիտե՞ք ինչ ե պատահել։

— Ասում են, թե ԱեԳ-ի բանվորները պահանջում են բարձրացնել աշխատավարձը։ Ենտեղ մեծ իրարանցում կա գործարանում։ Ահա այն ամենը, փոր կարող եմ հաղորդել ձեզ։ Յեվ Հերր Ռեյնիկեն գնաց տուն։ Գնացին նաև դռնապանն ու իր կինը։

*
*
*

Փետրվարյան արեգակը պայծառ լուսավորում եր։ Թեթև քամին փախցրեց վերջին ամպերը։ Արևի շողերը լուսավորում եյին ամբոխի մեջ լրագրավաճառների խայտաբղետ գլխարկները, պսպղում սլացող ավտոմոբիլների ռադիատորներին. նրանք անդրադառնում եյին նույնիսկ վայելուչ հագնված գրոհայինների փայլուն կոշիկների յերեսին։

Ֆրաու Մերկերը Ռոբբիի և ֆրաու Ռուպերտի հետ դանդաղ գնում եյին դեպի կենդանաբանական ագի. հիացած գեղեցիկ յեղանակով։ Առանձնապես գոհ եր Ռոբբին։ Նա վերցրել եր իր հետ փոքրիկ գրպանի հայելին և հիմա զվարճանում եր նրանով, փոր արևի շողերն ուղղում եր անց ու դարձ անոդների յերեսին։

Սակայն ֆրաու Մերկերի հիանալի տրամադրությունը մոռալվում եր, յերբ նա հիշում եր Լուցիի վրդովեցուցիչ վարմունքի մասին։ Նա

գանգատվեց Լուցիից Ֆրաու Ռուպպերտին, և սա լիակատար կարեկցությամբ վերաբերվեց նրա պատմածին:

Նրա հետ միասին Ֆրաու Ռուպպերտը գիտեր, թե ով է Ֆրաու Յունեմանը:

— Մտածեցեք, միայն, — ասում եր նա: — Այդ լկտի կինն ոգնություն է խնդրում ամեն տեղ իր յերեխաների համար, իսկ ինքը մինչդեռ գեղեցիկ հագուստներ է գնում ու գիշերը մինչև լույս պա-
րում է:

— Չի կարող պատահել, — զարմացավ Ֆրաու Մերկերը:

— Ազնիվ խոսք: Յես եղպես չեյի ասի, յերե-
խնքս տեսած չլինեյի այդ իմ սեփական աչքերով:
Վաղուց չի վոր յես գնում եյի ամուսնուս հետ,
և մենք հանդիպեցինք բակում եղ Յունեմանին:
Յերեվակայեցեք, նրա ձեռքին բոլորովին նոր, փոսկե-
զոծ պարահանդեսային տուֆլիններ կային:

— Այ թե ինչ մարդիկ են եղ գործադուրկները,
և դեռ նրանք իրենց թույլ են տալիս բողոքել, թե
քիչ նպաստ են ստանում, — վրդովվում եր Ֆրաու
Մերկերը: — Յես ինքս մի ինչ վոր եսպիսի բան
տեսա: Ռոբբին միշտ խաղում է եղ Յունեմանի
տղայի հետ: Յես իհարկե թույլ չեմ տալիս նրան,
բայց դե դուք գիտեք, թե ինչ բաներ են եղ
յերեխաները... Յեվ ահա մի անգամ Ռոբբին տուն
բերեց մի թանգագին պորտսիգար հիանալի սիգար-
ներով լիքը... Յերբ յես հարցրի նրան, թե վորտե-
ղից է վերցրել պորտսիգարը, նա ասաց, վոր Յու-
նեմանի տղայից է առել: Տեսնում եք:

— Մայրիկ, նրա անունը Բերնհարդ է, եղ տղա-
յի, — մեջ ընկավ Ռոբբին: — Յեվ գիտե՞ս, նա լաց
է լինում նրա համար, վոր կարտու չեն տալիս նրան...

— Ռոբբի, մի խառնվիր մեծերի խոսակցու-
թյանը, — աստեց նրան մայրը և նորից դարձավ
գեպի Ֆրաու Ռուպպերտը: — դուք գիտեք, իմ ա-
մուսինն ասում եր, թե եսպիսի մի պորտսիգար
առնվազը հիսուն մարկ արժի:

— Դուք գիտեք, սիրելի Ֆրաու Մերկեր, յես
բամբասանք չեմ սիրում, բայց յերկու որ առաջ
ես Յունեմանը վազել-յեկել եր ինձ մոտ, թափ
տալով ձեռքում զատարկ կճուճը, և ճշալով կաթ
եր պահանջում: Նրա յերեխաներն, իբր թե, մեռնում
են Կովածությունից: Ի՞նչպես է ձեզ դուր գալիս
եսպիսի մի լրբություն: Գնես քեզ համար փոսկե-
զոծ տուֆլիններ, թանգագին սիգարներ, սոված
կոտորես յերեխաներին և դրա հետ միասին սպառ-
նաս կանոնավոր մարդկանց: Ուղղակի աներևակա-
յելի լկտիություն է:

— Դիտե՛ք, Լուցին կարծում է, թե եղ կնոջ
խելքն այնքան ել տեղը չի, հավատում եք:

— Յունեմանը — ցնդված: Ասոված մի արասցե:
Ասում եմ ձեզ՝ նա բոլորովին հարբած եր:
Նրանից գինու հոտ եր փչում, դա փաստ է: Յես
միշտ ասում եմ միայն այն, ինչ լավ գիտեմ:
Թե չե, մեկ ել տեսար, բամբասանք դուրս յեկավ:
Կուզեք հարցրեք թեկուզ Փրեյլեն Շենեկեյին: Նա
հենց նույն յերեկոյան հանդիպել եր Յունեմանին
դարպասի մոտ, և սա քիչ եր մնացել վայր գցեր
նրան: Փրեյլեն Շենեկեն նույնպես հաստատում
է, վոր եղ կինը բոլորովին հարբած եր:

— Այ քեզ բան, — վրդովվում եր Ֆրաու
Մերկերը: — Նրա մասին պետք է հայտնել ուր
հարկն է:

— Մի անհանգստացեք, իմ մարդն արդեն իմաց

ե տվել ապահովագրական գանձարկղին, ենպես
վոր Յունեմանին այլևս նպաստ չեն տա: Մի պիտե-
նիք անգամ նա չի ստանա, խոսք եմ տալիս ձեզ:
— Դա միանգամայն ճիշտ է, հենց ենպես ել
պիտի անել: Ինչո՞ւ պիտի ապահովագրական գան-
ձարկղը վճարի վոսկեզոծ վոտնամանների և թան-
գագին սիգարների գինը:

Խոսակցությամբ տարված՝ Փրաու Մերկերն ու
Փրաու Ռուպպերտը չնկատեցին, թե ինչպես հա-
սան կենդանաբանական այգի: Առջևից վաղող
Ռորբին արդեն սպասում էր նրանց՝ մուտքի մտա:

ԳԼՈՒԽ ՏԱՍՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ

ԹԵՓԻՑ ԹԽԱԾ ՀԱՅԻ, ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՀԱՆԴԵՐՁԱՆՔՆԵՐԻ
ՅԵՎ ՍՈՎԱԾՈՒԹՅՈՒՆ ՔԱՇՈՂ ՅԵՐԵՆԱՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Քաղաքից վոչ հեռու, գլխավոր խճուղու գծի
մոտ, ձորակում կար մի հին, մոռացության տրված
աղյուսի գործարան: Նրա հանգած վառարանների
բարձր ծխնելույզները տխուր նայում էին
խճուղով սլացող բեռնատար և թեթևակ ավտոմո-
բիլների անվերջ շարանին: Մեքենաները գնում
էին առանց լույսերի՝ լուսաբացի առաջին շողերն
արդեն ցրել էին գիշերային խավարը:

Աղյուսի գործարանը բոլորովին անկենդան էր
թվում: Արդեն մի տարի յե, վոր գործարանը փակ
է, իսկ աղյուս թրծող բանվորները ազատված են
աշխատանքից:

Հիմա նրանք, յերևի, ամեն որ գնում են
գրոշմելու իրենց քարտերը և իրենք իրենց անվա-
նում են—չգիտես ծաղրելով, թե տխրությամբ—
յեղբայրներ՝ ըստ դրոշմի:

Հրապարակում՝ գործարանի առջև յերևում
են ճամբարային խարույկների սև հետքերը: Այդ
առանձնացած, լքված տեղը ծառայում էր իբրև
ապաստարան շատ և շատ մարդկանց համար, վորոնք
գուրկ էին ոթկանից: Բեռլին քաղաքում շրջող
վոստիկանության գիշերապահները ռեզինե մահակ-
ներով անգթաբար դուրս էին քշում պարտեզներից,
կամուրջների տակից, ամեն տեղից այն մարդկանց,

ավտոմոբիլները, և Շառլոտտան քաշ յեկավ դեպի ճանապարհը:

Շառլոտտա Յունեմանը գնում էր խճուղով, փոշ մի ուշադրություն չդարձնելով փողոցի յերթեմեկության վրա: Նրա ականջի տակ փռնում էին ավտոմոբիլային շշակները, շոֆերները հայհոյում էին, բայց նա գնում էր ու գնում ուղիղ խճուղում Եղտեղով: Հանկարծ ծանր բեռնավտոյի թևը դիպավ նրան ու վայր գցեց առօրի մեջ: Վախեցած շոֆերը կանգնեցրեց մեքենան ու վայր ցատկելով, ոգնեց Ֆրաու Յունեմանին փոքրի կանգնելու: Տեսնելով, փոր նա անվնաս է, շոֆերն սկսեց հանդիմանել նրան.

— Ել ի՞նչ եք գոռում, — բղավում էր նա: — Դուք հո անվնաս եք, իսկ ինձնից ձեր պատճառով կարող են խլել իմ շոֆերի գրքույկը:

— Յես յերեք յերեխա ունեմ, և յես չեմ կարողանում հիշել նրանց անունները, — մրմնջում էր լալով ֆրաու Յունեմանը: — Գուցե դուք գիտե՞ք իմ յերեխաների անունները:

Շոֆերը յետ քաշվեց նրանից:

— Խելագար ե, — նա շտապ նստեց իր տեղն ու լրիվ գազ տվեց մեքենային:

Շառլոտտան շարունակեց ճանապարհը:

Ճակատին գոյացած վերքից կաթիլ-կաթիլ ծորում էր արյունը, բայց նա չէր ել նկատում այդ: Խճուղին անվերջ էր թվում նրան: Նա անընդհատ համարում ու համարում էր հեռագրական սյուները: Նրանք ցցվել էին նրա առաջ յերկար շարքերով, լարերը գլխում էին և բզզում ինչ փոր բան նրա գլխի վերևը: Ինչի՞ մասին էին գլխում լարերը: Նա ականջը սեղմեց սյուներին... Բայց ես ի՞նչ եմ նրա դեմքը պայծառացավ: Ես ի՞նչ յերգ եր հնչում

այդտեղ: Շառլոտտա Յունեմանին թվում էր, թե փախում են իր ականջին մոռացված մանկական անունները:

«Ինգեբորգ, Վոլֆգանգ, Բերնհարդ»: —

«Ինգեբորգ, Վոլֆգանգ, Բերնհարդ» — բզզում էր ու գլխում սյուների ներսում: «Ինգեբորգ Վոլֆգանգ, Բերնհարդ», — կրկնում էր ինքնիրեն Շառլոտտա Յունեմանը, կարծես վախենալով, թե պիտի մոռանա... Հիմա նա, վերջապես, հիշեց...

Նա սրբեց արտասուքներն ու շտապեց դեպի Բեռլին: Շշնջալով նա կրկնում էր իր յերեխաների անունները:

Բայց ահա և քաղաքը: Լարերի ձայնը խլացնում էր փողոցային աղմուկը, տրամվայների դղրդյունը, ավտոբուսների, ավտոմոբիլների ազդանշանները, հազարավոր անցվորների քայլերի ձայները:

Շառլոտտա Յունեմանը չգիտեր՝ ուր և ինչի համար է գնում: Նա կանգ էր առնում բոլոր ցուցափեղկերի առաջ, իրտելով ցուցադրված ապրանքները՝ նա շարժում էր գլուխը, կարծես պահանջկոտ ու նրբաճաշակ գնորդ լիներ: Վերջապես նա կանգ առավ լուսանկարների ցուցափեղկի առաջ: Ցուցադրված էին նաև մանկական լուսանկարներ:

Շառլոտտա Յունեմանը յերկար ու համառ նայում էր դրանց: Առանձնապես հետաքրքրեց նրան ակնոցը քթին դրած մի տղայի նկար: Լուրջ մոռթ շինած՝ նա ամուր բռնել էր ձեռքում մի փոքրիկ խողովակ: Նա հազիվ թե յերեք տարեկան լիներ... Շառլոտտա Յունեմանն ուժ չունեց հեռացնելու

հայացքն այդ զվարճալի լուսանկարից: Նա յերեսը սեղմել եր պատուհանի ապակուն, փորպեսզի ավելի լավ դիտի այն:

— Ի՞նչը գնացեք, խնդրեմ,— վրա պրծավ նրան լուսանկարչատան տերը:

Յեվ Շառլոտտան հանգիստ հեռացավ պատուհանից:

Նա նորից սկսեց շտապ քայլել, ինքն ել չիմանալով, թե ուր: Թափառելով քաղաքում՝ նա մոտեցավ Վեյնշտրասսեյին, մոտեցավ այն նկուղով տանը, փորտեղ փակված ելին իր յերեք յերեխաները, անցավ առանց կանգ առնելու, ինչ փորտեղ շտապ գործով գնացող մարդու տեսք ընդունած: Վորքան ժամանակ տևեց այդ թափառումը քաղաքում — Շառլոտտա Յուլենեմանը չգիտեր և փոշինչ չեր հիշում: Նա չեր խուսափում այն փողոցներից, փորոնք տանում ելին դեպի աշխատանքի բորսան, դեպի սոցապդրամարկղը: Նա չեր մտաբերում փոշ պաստոր Ենգելմյուլլերի, փոշ ել «քրիստոնեյական ձմեռային ոգնության» մասին: Անտարբեր վազում եր նա այդ փողոցներով, տների ու հիմնարկների մոտով, փորտեղ քանի-քանի անգամ աղաչանք եր արել իր յերեխաներին փրկելու մասին: Վոչ հերը Մեյերը, աղքատների հոգաբարձուն և գաղութային ապրանքների խանութի հարգելի տերը, փոշ ել սուրբ Գեզվիգայի հիվանդանոցի կույսերը չեյին զբաղեցնում հիմա Շառլոտտա Յուլենեմանին:

Նա անդադար գնում եր ու գնում: Մայրաքաղաքի անհանգիստ ամբոխը, փորը չգիտեր, չեր ել ցանկանում գիտենալ փոշ նրա, փոշ ել նրա յերեխաների մասին, բռնել եր ու տանում եր նրան իր հետ:

Փողոցներից մեկում, Ունտեր դեն Լինդենում¹⁾ Ֆրաու Յուլենեմանը նորից կանգ առավ: Նրա ուշադրությունը նորից գրավեց մանկական լուսանկարների ցուցափեղկը: Դա «Ինտուրիստի» ցուցափեղկն եր: Խալտաբղետ անհասկանալի պլակատներ, իսկ գրանց կողքին նկարների վրա — առողջ, արևից սևացած, ծիծաղկոտ յերեխաներ:

Մի մեծ լուսանկարի տակ, փորը ներկայացնում եր սպիտակ վրաններով ծածկված ծովափը, գրված եր՝ «Բանվորական յերեխաների ճամբարը Լրիմում»:

Ֆրաու Յուլենեմանը յերկար նայում եր յերեխաների ամբակազմ, առողջ կերպարանքներին, նրանց ուրախ, ժպտացող դեմքերին: Բանվորների յերեխաներ... Նա ինքն ել բանվորուհի յե, նրա յերեխաներն ել նույնպես բանվորական յերեխաներ են և կարող ելին նույնքան անհոգ լողանալ ծովում և խաղալ ավազի վրա... Այն, բայց ախր ուր են հիմա նրա յերեխաները: Ֆրաու Յուլենեմանն առաջ շարժվեց, բայց, անցնելով մի քանի քայլ, վախեցած կանգ առավ: Ինչ փոր բարկացած սոցամարդի ձայն բղավում եր փողջ փողոցով մեկ և Ֆրաու Յուլենեմանին թվաց, իբր թե հենց իր վրա ելին գոռում: Չայնը գալիս եր ռադիոապրանքների խանութում դրված բարձրախոսից: Նա փորտում եր ամպի նման, իսկ Ֆլշացող ձայները նա, կարծես, դուրս եր թքում լայն հոսանքով բարձրախոսից փողոց: Յերկու-յերեք անցորդներ կանգնեցին Ֆրաու Յուլենեմանի կողքին և նույնպես սկսեցին ականջ դնել դիկտորի ձայնին:

1) Ունտեր դեն Լինդեն — «Լորենիների տակին» — Բեռլինի կենտրոնական փողոցներից մեկը:

«Յերկու մեծ գյուսեր են արված Գերմանիայում,—
հայտարարում եր ռադիոն:—Ճեմարիս նացիոնալ սո-
ցիալիստ պրոֆեսսոր Շուլցին հայտնում է փայտի
թեփից պատրաստել հաց, վորք գերագանցում է բոլոր
ուրիշ հացերն իր համով յեվ սննդաբարությամբ:

Յերկուրդ գյուսը բույլ է տալիս պատրաստել թղթից
տսեն սեսակի հագուստ, վորն աչի յե բնկնում գեղեց-
կությամբ, տափությամբ յեվ դիմացկունությամբ:
Հիմա պատերազմի դեպքում Գերմանիան կարիք չի
ունենա հումուլթ ներմուծելու:—

Այն ժամանակ, յերբ նացիոնալ—սոցիալիստ-
ական բանակը կսկսի կռվել բուլեվիկների հետ
Ավաստրիայի դրոշակի տակ, գերմանական ժողո-
վուրդը կկարողանա սնվել քեփի համեղ հացով
յեվ հագնել գեղեցիկ թղթե շորեր յեվ այգալիսով
ոգնել բանակին կռվելու մինչեվ լրիվ հաղթանակը»:

— Հաց փայտի թեփից: Իսքներդ լափեք եզ-
հացը: Հերիք եր, վորքան մենք խեղդվեցինք եզ
հացն ուտելով համաշխարհային պատերազմի ժա-
մանակ: Մեր յերեխաներն առանց են ել սովածու-
թյուն են քաշում, իսկ են ժամանակ, վոր բոլո-
րովին կմեռնեն,—արտասանեց ֆրանս Յունեմանի
կողքին կանգնած ամբողջով աղքատ հագնված
մարդը:

Ֆրանս Յունեմանը ցնցվեց, լսելով այդ խոս-
քերը: Ինչ վոր մի խառնաշփոթ միտք ծագեց նրա
ուղեղում:

Այդ ժամանակ լսվեց գինվորական նվագախմբի
յերաժշտությունը, և գրոհայինների քայլող ջոկատի
ժանր քայլերը խլացրին ռադիոն:

Անցորդները լուռ նայում էին գրոհայիններին:

Սվաստիկայով դրոշակը ծածանվում եր քամու
հետ:

— Դըմ-դըմ-դըմ-դըմ — համաշափ դոփում
եյին վոտքերը:

— «Հայլ Հիտլեր»¹⁾,—բղավեց հանկարծ մի
հասարակ մարդ, վորը կանգնած եր մայթի յեզրին,
և ձեռքերը բարձրացրեց վերև²⁾:

— Սե հուսարներին յեռակի... Ոյ-ոյ-ոյ, -ոյ-
ոյ-ոյ-ոյ:

«Ուռա»-յի փոխարեն հաստ մարդը ճշաց արտա-
սովոր ձայնով:

Այն մարդը, վորը հենց նոր վրդովվում եր
թեփի հացի գյուտի համար, սեղմել եր հաստ մարդու
վոտքն իր ծանր, տակերը մեհած կոշիկով:

— Նա դիտմամբ արեց: Դա կոմունիստ ե:

Հաստ մարդը բղավում եր ու մոկեցնում:

Նա փորձում եր անցնել ամբոխի միջով
դեպի իրեն վիրավորողը, բայց սա արդեն չկար:

Գրոհայինները դեռևս գնում էին, նրանց քայ-
լերի պարզորոշ ութմի մեջ ֆրանս Յունեմանը հան-
կարծ լսեց հետեվյալ սարսափելի խոսքերը:

«Յե-րե-խա-նե-րը սո-ված են, յե-րե-խա-նե-
րը սո-ված են»:

«Դըմ-դըմ, դըմ-դըմ, յե-րե-խա-նե-րը սո-ված
են, յե-րե-խա-նե-րը մեռ-նում են»,—հնչում եր
նրա ականջներում: Նա բռնեց ականջներն ու բղա-
վեց: Նրա գիտակցությունը պատող մշուշը հան-
կարծ ցրվի յեկավ: Այդ ընդեյին նա հիշեց ամեն
ինչ:

— Աստված իմ, ի՞նչ արի յես: Յես փակել եմ
յերեխաներին: Նրանք կմեռնեն սովածությունից:
Ինչ վոր մեկի ձեռքերը բռնեցին նրան: Դա
Վեյնշտրասսեյի տան դռնապանն եր:

— Ֆրանս Յունեման, ի՞նչ ե պատահել ձեզ
Ֆրանս Յունեման:

1) «Կեցցե Հիտլերը»:

2) Վոդչույնի պարտադիր ձևը ֆաշիստական Գերմանիայում:

Բայց նա աշխատում էր դուրս պրծնել նրա ձեռքերից.

— Թողեք ինձ, իմ յերեխաները մեռնում են:

— Այ, եստեղ եր կանգնած նա, հերը վոստիկան, այ, եստեղ: Յես կանչում եյի «հայլ» մեր սե հուսարներին, իսկ նա վոտքը կոխեց իմ կոշտակի վրա...

Ամբոխում ծիծաղեցին:

— Հերը վոստիկան, դա կոմունիստ եր, յես հավատացած եմ դրանում,— ձեռ չեր քաշում հաստ մարդը:

Փրաու Յունեմանին հաջողվեց դուրս պրծնել դռնապանի ձեռքից: Ամբոխը անջատեց նրանց:

Յերը դռնապանը դուրս յեկավ ամբոխի միջից, Շաուլտտա Յունեմանն արդեն անհայտացել էր:

«Իմ յերեխաները մեռնում են», — բղավում եր նա: Այդ աղաղակը, թվում եր՝ թե դեռ հնչում եր ողում: Նա, անշուշտ, խելքը կորցրել է: Վոստիկանությունն ինչ ուզում է թող ասի ուրիշի բնակարանի դուռը կոտրելու մասին: Թող նրան նստեցնեն դրա համար... Նա՛ միկնույն է, կկոտրի նկուղի դուռը: Դե, ինչ պիտի անես, յերը Բեռլինում յերեխաները մեռնում են քաղցից, և վոչ վոքի դա չի հետաքրքրում:

Յեվ դռնապանն շտապում է տուն: Յերկու վոստյունով նա մի անգամ ից ցատկում է այն բոլոր աստիճանների վրայով, վորոնք տանում են դեպի Փրաու Յունեմանի նկուղը: Դուռն առաջվա նման փակ է: Դռնապանն ամբողջ մարմնով բնկնում է դռան վրա: Դուռը ճռճում է, բայց դիմանում: Այն ժամանակ նա նորից դուրս է վազում բակը՝

լուսամուտն ավելի հեշտ է ջարդել, քան դուռը: Յեվ մի ըոպե անց՝ նա արդեն մտնում է մութ, լուռ սենյակը:

Չափազանց ուշ է: Յերեք յերեխաներից կենդանի յեր մնացել միայն Բերնհարդը, բայց նա ել մեռավ մի քանի ժամ հետո հիվանդանոցում, ուր տարել էր նրան դռնապանը: Յերկու հարյուր ժամ եր անցել այն ժամանակից, յերը Փրաու Յունեմանը ջրանցքի պղտոր, կանաչ ջրերի մեջ գցեց իր սենյակի բանալին:

ԳԼՈՒԽ ՏԱՍՆԵՐԵՔԵՐՈՐԴ

ՉԱՐ ԼԵՁՈՒՆԵՐՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՅԵՆ ԱՆՑԵԼ

— Ել ի՞նչ ե հարկավոր ձեզ, Փրանս տեսուչ: Յես արդեն առանձնացրել եմ ձեզ համար մի կիլո շաքարի փոշի և կես կիլո յուղ...

Անտոնը՝ գործակատարին ոգնող տղան, պտրտվում եր ոճաձկան նման հերր Մեյերի բերնե-բերան լիբը գաղութային ապրանքների խանութում: Սաստիկ շատ աշխատանք ուներ նա: Մերթ բարձրանում եր ակրոբատի ճարպիկությամբ մինչ ամենավերին դարակները՝ քառակուսի շիշերով պահածո տոմատները վերցնելու համար, մերթ հանկարծակի անհայտանում եր սեղանի տակ և մի վայրկյան անց, հայտնվում եր նորից, սարդինկաներով բեռնված: Նրա յերեսից ժպտոր չեր իջնում:

«Գնորդներին միշտ պետք ե ընդունել սիրալիր ժպիտով», — միշտ կրկնում եր հերր Մեյերը, և Անտոնը ժպտում եր: Չե՞ վոր նա դեռ միայն աշկերտ եր խանութում:

— Յերկու տուփ ել հյուլթալի ռոլմոպս տվեք, բայց տեսեք, վոր նրանք այնպես չոր չլինեն, ինչպես անցյալ անգամ, — պահանջում եր գնորդուհին:

— Մենք ունենք հիանալի տեսակը, «Առաջնորդ»¹⁾ զրոշմանիշով: Խնդրեմ համոզվեք ինքներդ,

¹⁾ Հասկացվում ե չիտեր:

ահա տուփը: — Անտոնն աշխատում ե կարողացածին չափ քավարարել գնորդուհուն:

— Եդ դու յես, անպիտան տղա, ցուցափեղկում ավաստիկայով դրոշակը խցկել սելյոդկսների արանքը: Դու սպասիր, մենք դեռ կխոսենք քեզ հետ, — ֆլաղ հերր Մեյերը:

Անտոնը ծկվեց անկյունը և զբաղվեց նարինջների արկղը բացելով:

— Սպասեցեք մի րոպե, Փրանս տեսուչ, — հերր Մեյերը նորից սիրալիր ժպտաց գնորդուհուն: — Յես ստացել եմ խնձորի ոշարակի մի նոր տեսակ: Դուք



անպայման պիտի փորձեք:

Յեվ նա արդեն բաժակով ոշարակը մեկնում եր նրան:

— Արտակնրդ համար, արտակնրդ համար, —
բղավում էին լրագրավաճառները քաղաքում: —
Մայրը մեռցրել է իր յերեք յերեխաներին: Արտա-
կնրդ համար:

Հերը Մեյերը գնեց լրագիրը և, մինչ ֆրաու
տեսուչը ծծում էր ոշարակը բաժակից, բարձրաձայն
կարդաց խոշոր տառերով տպված հաղորդագրու-
թյունը:

— Դա աներեակայելի յե, — բացականչեց նա:
Լրագրում Շառլոտտա Յունեմանին անվանում
էին հանցագործ, վորն արժանի չէր մոր սուրբ
անունը կրելու:

— Դա սարսափելի յե, սարսափելի յե: Յես
ամբողջովին դողում եմ, — գոչեց ֆրաու տեսուչը:
— Կարդացեք, խնդրեմ, բոլոր մանրամասնու-
թյունները:

«Պարզված է, վոր Շառլոտտա Յունեմանը բան-
գազին հագուսներ եր գնում իր համար յեվ գիշերները
մինչեվ լույս պարում եր գանազան ռեստորաններում, այն
ժամանակ, յերբ յերեխաները մնում էին սոված: Վեյն-
եսրասսեյի վրա գտնվող № 27 սան ապրողները հաղորդում
են, վոր Յունեմանը միշտ զվարճանում էր յեվ հոգ չե-
ր սանում իր յերեխաներին: Նա սիրում եր խմել, յեվ մույ-
նիսկ ցերեկը յեսնում էին նրան հարած վիճակում:
Բոլոր ստացած դրամները նա ծախսում եր իր վրա, գնելու
ամենամանավե՛ր իրերը... վասկեցո՛ծ տու՛փիներ յեվ ալլև...»

Այդտեղ հերը Մեյերը դադարեցրեց ընթերցումն
ու ձեռքով խփեց ճակատին:

— Յունեման... Յունեման... Եղ անունը ծա-
նոթ է ինձ:

— Մի՞թե դուք ճանաչում եք այդ դաժան մո-
րը, — հետաքրքրությամբ հարցրեց գնորդուհին:

— Դե իհարկե, յես ճանաչում եմ նրան, — շա-
քունակեց հերը Մեյերը: — Յեվ յերեակայեք այդ
կնոջ լկտիությունը՝ նա դուրս բերեց մանկատնից
իր յերեխային, վորին յես էյի տեղավորել: Նրա
համար, գիտե՛ք ինչ, եղ մանկատունը բավա-
կանաչափ լավ չէր:

— Դուք անպայման պիտի հայտնեք վոստի-
կանությանն եղ մասին, — բացականչեց ֆրաու
ինսպեկտորը:

— Ո՛ր, իհարկե, իհարկե, — հերը Մեյերը սաստիկ
հպարտ զգաց իրեն այդ պատվաբեր դերի համար: —
Դուք գիտե՛ք, — շարունակեց նա, — յես միշտ ասում
էյի կնոջս, վոր այդ կինը — խաբեբա յե: Յես,
պարոնայք, միշտ պատրաստ էյի ոգնել մարդկանց,
և Յունեմանը յերբեք դատարկաձեռն չէր հեռա-
նում իմ մոտից: Հաճախակի յես ոգնում էյի նրան
իմ խանութի մթերքներով: Ախր աղքատների
հոգաբարձուն չպետք է այնքան փափուկ սիրտ
ունենա, ինչպես իմն ե:

— Գիտե՛ք, — նկատեց մի ուրիշ գնորդ, վորը
մինչ այդ կարդաց վերջացրեց լրագրում գրածը, —
այն բոլորն, ինչ վոր նա ստանում եր, անմիջապես
տալիս եր խմիչքների: Նա գիշերային պարատեղերի
հաճախակի հյուրն էր:

«Շառլոտտա Յունեմանը — կարդում եր հերը Մեյերը, —
գործագուրկ էր, բայց ապահովագրական դրամարկոր
միշտ ոգնում եր նրան: Հաճախակի ստանում եր նա այն-
տեղից արտակարգ նպասներ, իսկ այդ ուր, յերբ փակել
եր իր յերեխաներին, նրան տվել էյին ամբողջ հիսուն
մարկ: Բացի այդ, պասսոր Ենգելմյուլլերը հայտնեց
քննչական մարմիններին, վոր Շառլոտտա Յունեմանը
ստանում եր կանոնավոր կերպով, «ֆրիստենյական

ձմեռային ոգնութիւն»-ից ածուխ, բարուր, վոսնաման,
կիսամաւ հագուստներ իրեն յեմ իր յերեսաների
համար: Շնորհիվ դրա նա լիովին ապահովված եւ...»

— Այ ձեզ դաս, նկատեց գնորդը, — այդ գործա-
զուրկները հետ փափուկ վարովել չի կարելի: Վոչ
մի պֆեննիկ չպետք ե տալ նրանց: Ի՞նչ սրիկաներն
են: Վոչ մի պֆեննիկ:

— Յես միանգամայն համաձայն եմ ձեզ հետ, —
հայտարարեց ֆրաու ինսպեկտորը:

Ավելացնելով իր գնումների վրա նաև մի լավ
կտոր շոկոլադէ՝ նա հրաժեշտ տվեց սիրալիւ խանութ-
պանին և դուրս յեկավ խանութից: Փողոցում նրան
հրեց ինչ վոր մի կին, վորը վազում եր գլխապատառ:
Շոկոլադէն ընկավ գետին ու փշրվեց:

— Այ քեզ խելագար կի՛ն, — ֆրաու ինսպեկտորը
վրդովված եր: Ավելի լավ կլիներ, յեթե նա միան-
գամից մանր շոկոլադէ գներ:

— Արտակարգ համար: Տաս պֆեննիգ, արտա-
կարգ համար: Մայրն սպանել ե իր յերեք յերե-
խաներին: Տաս պֆեննիգ, — աղաղակում եյին լրա-
գրավաճառները:

Վազող կինը կանգ առավ: Նա խլեց իր մոտով
վազող տղայի ձեռքից լրագրի թերթն ու աչքերը
հռեց նրա վրա: Սև, խոշոր տառերն ուղղակի
պարում եյին նրա աչքերի առաջ: Տեր աստված,
չե՞ վոր դա նրա սեփական անունն ե տպված այս-
տեղ: Յերեք յերեխաներ... յերեք փոքրիկ յերեխա-
ներ... դրանք նրա յերեխաներն են:

Ֆրաու Յունեմանը սեղմեց յերկու ձեռքը կրծ-
քին, վոր հանգստացնի կատաղի բաբախող սիրտը,
և հենվեց մի մեծ գորշ տան պատին: Աչքերը բարձ-
րացնելով՝ նա տեսավ, վոր կանգնած ե վոստիկա-

նության կոմիսարիատի դռն առաջ: Դողդողալով,
ամեն ըոպե կանգ առնելով՝ նա ներս մտավ այդտեղ:
— Ի՞նչ եք ուզում, — կոպիտ հարցրեց նրան
հերթապահը:

— Յես — Շաուլտտա Յունեմանն եմ:

ԳԼՈՒԽ ՏԱՍՆՁՈՐՍԵՐՈՐԴ


ՅԵՐԵԲ ԲԱՐԵԿԱՄՆԵՐ ՅԵՎ ՇՈՒՆԸ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԵՁ

Կիրակի որը ճաշից հետո, հավաքելով խոհանոցն ու շացներու չափ փայլեցնելով ամանները, Լուցին հագավ իր տոնական զգեստը: Այսօր նրա ազատ օրն է:

— Ո՞ւր եք գնում, Լուցի, ինչի՞ համար եք եղպես զարդարվում,—հարցրեց տանտիրուհին:

— Յես գնում եմ մորաքրոջս մոտ: Նա տոնում է իր արծաթ հարսանիքը:

Յեվ Լուցիին փողորմածաբար թույլ տվին գնալու: Նա նստեց ավտոբուս և գնաց մինչև քաղաքային այգի: Այստեղ նստեց ստորեկրյա յերկաթուղու գնացքը և, վերջապես, իջավ մի լուռ, խաղաղ փողոցում, փորը փոշնչով աչքի չեր ընկնում Բեռլինի հազարավոր նույնանման փողոցների մեջ: Անկյունի մոտ, փորտեղ մի պառավ կին ծաղիկ էր ծախում, Լուցին գնեց իր համար մի փունջ հովտաշուշան և ուշադրությամբ դիտեց փողոցը: Յերկու մանուկներ գնում— գալիս էին հեծանիվներով, սովորելով ութնյակներ դուրս բերել: Մի տանից կիրակնօրյա զրոսանքի յեր դուրս գալիս ծանրաբարո, շքեղ հագնված մի ընտանիք: Մի մուրացկան փորժրում էր աղբի արկղը, հանում այնտեղից



մրգեղենի կրծմրծած կտորներ, պապիրոսի մնացորդներ և ագահաբար լցնում էր այդ բոլորն իր տոպրակի մեջ:

Լուցին ժպտաց պառավ ծաղկավաճառունուն, ամբացրեց ծաղիկների փունջն իր ժակետին և մի քանի քայլ անցնելով, աննկատելի ծլկվեց ինչ-փոր մի մուտքի մեջ: Միայն մի սպասեք, թե մենք կհայտնենք տան համարն ու փողոցի անունը: Դա խիստ գաղտնիք է:

Փաշխատները լրտեսների ցանցով պատել էին փողջ Բեռլինը: Նրանք ահանջ էին դնում, լրտեսում էին գործարաններում, փողոցներում, բնակարաններում:

Նույնիսկ տնային տնտեսուհիների վտիտ տոպրակները մեջ լրտեսները խոթում էին իրենց

քթերը: Բայց թուղթիկները հայտնվում եյին ամեն
որ, նորից ու նորից: Կորստյան եյին մատնվում
ընկերները, բայց Կոմկուսակցության աշխատանքը
կանգ չեր առնում:

Լուցին ընկերներ ուներ կոմունիստների մեջ,
մտերիմներ՝ դեռ դպրոցից: Նրանք չեյին դադարում
մտերիմ լինել իրար հետ, սակայն դեռ յերկար
ժամանակ Լուցին սիրտ չեր առնում մասնակից լի-
նել ընկերների կրած շարժարանքներին և նրանց
սպառնացող վտանգին: Բայց վերջին որերի
դեպքերը, Ֆրաու Յունեմանի սարսափելի պատ-
մությունը ցնցեցին նրան: Այդ սովամահ յեղած
յերեք յերեխաները, դժբախտ մոր մահվան դա-
տապարտվելը, վորը աղաչում եր դատարանում գի-
շող լինել իր նկատմամբ, լրագրերում հրապարակ-
վող անխիղճ սուտը... Վոչ, վոչ: Լուցին չեր կա-
րող հաշտվել դրա հետ: Այլևս չի կարելի նստել
ձեռները ծալած:

Լուցին շտապում եր իր ընկերների մոտ: Ահա
և իր ուզած դուռը: Նա զանգահարեց—մի անգամ
յերկար և յերկու անգամ կարճ: Դուռը բացվեց և
Լուցին ներս մտավ:

— Ռոտ Ֆրոնտ,—վողջունեց նա սենյակում
գտնվող յերկու պատանիներին:

— Ռոտ Ֆրոնտ: Ուրեմն դու միտքդ չե՞ս փո-
խել,—և նրանցից մեծը—Երիխը—ուրախ մեկնեց
նրան ձեռքը:

Հաֆֆ, Հաֆֆ,—հաջեց Ռեսկը, մի ահագին շուն:
Նա մոտ վազեց Լուցիին, հոտոտեց նրան, յերկու
թաթը դրեց նրա ուսերին և խելոք աչքերով նա-
յեց ուղիղ Լուցիի յերեսին:

— Այ դու, իմ լավ գազան,—ասաց նա և շոյեց
շան բրդոտ գլուխը:

Ծանոթությունն ամրապնդվեց:

— Իսկ հիմա, Լուցի, գործին անցնենք,—ասաց
Երիխը:—Մի ժամ չանցած՝ արդեն ամեն բան պատ-
րաստ կլինի, և յես ու դու կգնանք: Վալտերն արդեն
ամեն ինչ պատրաստել ե—մեքենան հիանալի աշ-
խատում ե: Դու կտեսնես հիմա...

Վալտերը բերեց մի փոքրիկ չեմոզան, վորի
մեջ կար մի գրամեքենա. դրեց սեղանի վրա, պատ-
րաստեց մոմած թղթերը:

Լուցին նստեց լուսամուտի առաջ, սպասելով
նրան:

Սենյակը հինգերորդ հարկումն եր—հենց կտուրի
տակ, վորը թեք եր և կղմինդրով ծածկված: Լու-
սամուտից յերեվում եր Բեռլինը: Յերրորդ կայս-
րության մայրաքաղաքը: Գարնանային արեգակը
լուսավորում եր անսահման ծովի պես փռված տների
կտուրները, և նրանք մերթ բռնկվում եյին հան-
կարծակի տաք և պայծառ լույսով, մերթ նորից
ծածկվում ստվերով: Ամպերն, ինչպես փրփուրը՝
հալվում եյին քամուց... հարևան տանից լսվում
եյին հին գարնանային յերգի հնչյունները:

Մտերիմները մտքի մեջ ընկան: Այդ յերգը
հիշեցրեց նրանց առաջվա ուրախ զբոսանքները—
ընկերների հետ, կարմիր հետախույզների հետ¹⁾:
Այսպիսի ախորժելի գարնանային որերին աղջիկ-
ներն և տղաներն ուրախ լսմբով գնում եյին քա-

1) Կարմիր հետախույզներ—պատանեկական սպորտային կազմակերպու-
թյուն, հեղափոխական սպորտային կազմակերպության մի բաժանմունքը: Կար-
միր հետախույզները շաբաթ յերեկոներն ու կիրակի որերը մերձ-քաղաքային
զբոսանքներ եյին կազմակերպում:

դաքից դուրս յերգերով, կարմիր դրոշակներով...
Հոգնած, բայց ուրախ և գոհ, յերեկոյան ուշ վե-
րադառնում եյին նրանք քաղաք: Բեռլին: Նրանք
հենց հիմա ել սիրում եյին այդ քաղաքը:

Ահա այնտեղ պիտի լինի Կարմիր Վեդդինգը,
այնտեղ — Ֆրիդրիխշտեյնը, իսկ հրեն այնտեղ, մի
քիչ այն կողմ, Նեյկելնն ե¹⁾: Իսկ այստեղ, փոչ
հեռու, բարձր շենքերի արանքում սեղմված գրա-
նդվում ե Կառլ Լիբկնեխտի²⁾ տունը... Այդտեղից
Կոմունիստական Կուսակցությունը պայքարի կոչ
եւ անում գերմանական բանվորներին: Փաշիստ-
ները գրավեցին այդ տունը և ուրախանում եյին,
կարծելով, թե փոշնչացրել են Կոմունիստների
շտաբը և խեղդել են Կուսակցությունը: Բայց Կու-
սակցության ձայնն ավելի ու ավելի բարձր ե հնչում,
և յուրաքանչյուր անլեզալ թուղթիկում նա խո-
սում ե մասսաների հետ և մերկացնում Փաշիստ-
ներին...

Լուցին ծածկեց լուսամուտը Ռեսկլը լիզեց
նրա ձեռքն ու հանգիստ պառկեց հատակին:

— Վստահելի՞ սենյակ ե ձեր սենյակը, — հարց-
րեց աղջիկը:

— Մի անհանգստացիր: Ասենք՝ Երիխն ավելի
շատ մտադրում ե Ռեսկլին: Ագնիվ խոսք, Լուցի,
նա ավելի շատ նրան ե հավատում, քան ինձ, — կես
կատակով, կես լուրջ ասաց Վալտերը: — Գիտե՞ս, ան-
ցյալ օրն Երիխը հավատացնում եր ինձ, փոր Ռեսկլն

1) Կարմիր Վեդդինգ, Ֆրիդրիխշտեյն, Նեյկելն — Բեռլինի այն բանվո-
րական թաղամասերի անունները, փորձելով գործում եր Կոմունիստա-
կան Կուսակցությունը:

2) Կառլ Լիբկնեխտի տուն — գերմանական Կոմունիստական Կուսակցու-
թյան Կենտկոմի շենքը: 1933 թվին, յերբ Փաշիստներն իշխանության գլուխն
անցան, նրանք այդտեղ ղեկավարեցին բոլշևիզմի դեմ պայքարող Կենտրոնական
Ֆոմիտեն:

զգում ե շպիկների¹⁾ հոտը: Յեթե Ռեսկլը կարողա-
նար արտատպել մոմած թղթերից, հավատացնում
եմ քեզ, փոր Երիխը բոլորովին կհրաժարվեր իմ
ոգնությունից:

— Բայց Ռեսկլն իսկապես ավելի զգուշ ե,
քան դու, — պատասխանեց Երիխը: — Մի՞թե դու կար-
ծում ես, թե նա կվազեր փողոցներով պատճենա-
հանման ներկով կեղտոտված թաթերով: Իսկ դու
վաղուց չե, փոր ման եյիր գալիս քաղաքում եդ
զբոսնելու մեջ...

Շունը հասկացավ, փոր իր մասին են խոսում:
Նա հուզված սկսեց վազվզել սենյակում, և ապա
պառկեց իր տիրոջ մոտ ու սկսեց դիտել նրա աշ-
խատանքը:

Երիխն սկսեց թխթխկացնել թուղթիկը մեքե-
նայի վրա, և ստեղծի առաջին իսկ հարվածի հետ
Ռեսկլն սկսեց հաջել: Նա անընդհատ հաջում եր
ամբողջ ժամանակ, քանի Երիխը գրում եր: Խելոք
շունը զուր չեւ հաջում: Յերբ լուրմ եր գրամե-
քենան, դադարում եր հաջել նաև Ռեսկլը: Յեվ
յեթե փորեւ հետաքրքիր ականջ ուղեւսը լսել, թե
ինչ ե կատարվում բնակարանում, նա կլսեր միայն
ուրախ շան հաջոց:

Զարմանալի չեւ, փոր Երիխն այդքան սիրում
եւ իր Ռեսկլին:

Աշխատանքը յեռում եր: Մոմած թղթերն իրար
յետեվից դուրս եյին գալիս գրամեքենայից: Վալ-
տերն առանց աղմկելու հանում եր նրանց արտա-
տիպերն իր պատճենահանման ապարատի վրա:

Ռեսկլը հիմա անշարժ պառկել եր դռան մոտ,
ուշադրությունը լարած, ցատկելու պատրաստ:

1) Շպիկ — (շպիտ) լրտես (Մ. Թ.)

— Վերջացավ, — ասաց, վերջապես Երիխը:
Նոր տպված թարմ թռուցիկներ ի կույտը լցված
էր սեղանի վրա: Երիխը վերցրեց թռուցիկներից
մեկն ու բարձր կարգաց այն կուցիին:

«Շառլոտտա Յունեմանի մահվան դատավճռի լուրը
վրդովմունքի փոթորիկ է բարձրացել վողջ աշխար-
հում: Գերմանական բանվորներէ՛ր, լսեցե՛ք, թե
ի՛նչ է ասում այդ մասին մեր անվեհեր ընկեր Գեորգի
Դիսխոփը, մի մարդ, վոր շոթայակապ դուրսյամբ
էլ սարսափելի յեր ճաշասենյակին, մի մարդ, վորի խոս-
քերը արիություն են ներշնչում հազարավոր հակա-
ճաշասենյակի:

«Գերմանական ճաշիգմի դատավորների լիսի-
ությունը, հեմարիս, վոր անսահման է: Այն փաստը,
վոր գործազուրկ մոր յերեք յերեխաները մեռնում են
հողցից այն մոմենտին, յերբ ինքը մայրը ծայրահեղ
հուսահատության մեջ կորցնելով իր հոգու վողջ հա-
վասարակեռությունը, թափառում է հաղափում, մի
փաստ, վոր հանդիսանում է ամենադաժան մեղադր-
ական ակտը ճաշասենյակի ունեթիսի դեմ գերմա-
նիայում, — այդ փաստը դառնում է հիստ դոքալիս, գոր-
ծազուրկ մորը մահվան դատապարտելու համար:

Այո, Յունեմանը դատապարտված է մահապատ-
ժի, նա պիտի մահապատժի յենթարկվի վորպես
վորդ Եսայան, վորպեսզի հնարավոր լինի թագցնել
մասսաների աչքերից նրա յերեխաների իսկական
սպանողների — կասաղի գերմանական ճաշիգմի հան-
ցանքը, վորն ամեն որ խեղդում յեվ վոչնչացնում է
գերմանական աշխատավոր ժողովրդի լավագույն գա-
վակներին:

Գերմանական ճաշասենյակի մամուլը չարա-
բասիկ գործազուրկ մոր դատապարտությունը դարձ-
նում է մի արտակարգ սենսացիա: Ֆրանս Յունե-

մանին ուզում են պատկերացնել վորպես սի հիվաղի
յեվ իր յերեխաների գիտակցորեն սպանողի, վոր հե-
ռացնեն մասսաների՝ ուշադրությունը ճաշիգմի չլըս-
ված չարագործություններից:

Սորագույն վրդովմունքի զգացումով յես միաց-
նում եմ իմ ձայնը խորհրդային աշխատավորուհիների
յեվ ՄՈՊՐ — ի կոչին Յունեմանի մահվան դատավճռի
դեմ յեվ նրան փրկելու համար:

Թող մի իրոնավոր աշխատավոր կանայք ու տղա-
վարդիկ, աշխարհի բոլոր ազնիվ մարդիկ հայտնեն
իրենց բողոքն ու կանգնեցնեն ճաշասենյակի դահնի
ձեռքը:

Գ.Կ.Վ.¹⁾

— Իսկ հիմա շուտ, շուտ: Չի կարելի սպասեց-
նել ընկերներին: — Յեվ Երիխը դըրուժ էր Վալտե-
րին անցնել գործի:

Վալտերի ձեռքին գեղեցիկ կազմով մի հաստ
գիրք կար: Ուրիշ վոչինչ: Թվում էր թե նա վերց-
րել էր այն միայն նրա համար, վոր զբաղվի
ավտոբուսով յերկար ճանապարհ գնալիս: Բայց դա
միայն թվում էր այդպես: Գիրքը ներսից դատարկ
էր, և նրա մեջ դարձած էին հոգատարությամբ
ծալված բարակ կոմունիստական թռուցիկներ:

Հենց վոր Վալտերը դուրս յեկավ, Երիխն
սկսեց հոգատար կերպով վոչնչացնել ընդհատակյա
աշխատանքի հետքերը:

Փոքրիկ գրամբենան և պատճենահանման
ապարատն անհայտացան, կարծես գետնի տակն
անցան: Երիխը բացեց լուսամուտը, բերեց զրա-
մոֆոնն ու դրեց ամենաբարձր ձայն պլաստին-

1) Գերմանական կոմունիստական կուսակցություն:

կան: Լսվեցին ուրախ ֆոկսորոտի հնչյունները: Երիխը գրկեց Լուցիին ու սկսեց պտտեցնել նրան սենյակում: Ռեսկլը հանդիմանաբար նայում էր, չհասկանալով, թե ինչու հանկարծ այդպիսի ուրախություն սկսվեց: Արի, ու բան հասկացիր: Հերիք չէր այդ, դեռ նրա պոչն ել կոխեցին: Բայց Ռեսկլը պատրաստ էր ամեն ինչ ներել իր տիրոջը...

— Իսկ հիմա գնանք ման գալու, — ասաց Երիխն ու ծածկեց գրամոֆոնը:

Գնալիս մտերիմները նորից դիտեցին սենյակը:

— Ամեն ինչ կարգին է: Հանգիստ, հարմարավոր սենյակ: Իսկ լուսամուտին նույն իսկ ճովողում է դեղձանիկը վանդակում:

Դուռը ծածկվեց և յերկու ջահելներն ու շունը դուրս յեկան տանից:

Կառորդ ժամ անց՝ Ռոգենտալերշտրասսեյում կարելի չէր տեսնել մի յերիտասարդ մարդու, փորը քնքշորեն թևանցուկ գնում էր մի յերիտասարդ աղջկա հետ:

Նրանց յերկուսի կրծքին ամրացրած էյին հովտաշուշանների փնջիկները: Նրանք անհոգ զբոսնում էյին, իսկ առջևից վազում էր մի մեծ փորսորդական շուն: Շունը յերբեմն կանգ էր առնում, նայում էր տիրոջն ու նորից շարունակում էր վազել: Զույգը դանդաղ քայլում էր, մեծ հաճույք զգալով արևոտ յեղանակից:

Փողոցները լիքն էյին ժողովրդով, բեռլինցիներին հրճվանք էր պատճառում գեղեցիկ որը:

Հանկարծակի, յերբ զբոսնող զույգը հասավ այնտեղ, փորտեղ փողոցը դուրս է գալիս հրապարակի վրա, ողում սպիտակին տվեց ինչ փոր մի բան, կարծես ձյունի փաթիլներ լինեյին...

Բայց դա ձյուն չէր, բարակ, նուրբ թերթիկների մի ամբողջ ամպ, ճերմակ թռչունների յերամի նման, իջավ անցորդների ուսերին և թիկունքին...

— Կոմունիստական թռուցիկներ, կոմունիստների թռուցիկներն են, — լսվեց ամեն կողմից:

Մարդիկ փորսում էյին թռուցիկներն ողում, վերցնում գետնից, վազում քամու փախցրած թրդթերի յետեվից: — Վոմանք կարդում էյին հենց տեղն ու տեղ, փոմանք էլ անմիջապես թագցնում էյին գրպաններում:

— Յունեմանն անմեղ է: Ֆաշիզմը — ահա թե ով սպանեց նրա յերեխաներին, — հնչեց մի զրբնագացող կանացի ձայն:

Թռուցիկների մի նոր տարափ, դանդաղ պլաշտվելով ողում, իջավ ամբոխի մեջ:

Մեծ շունը վազեց թռուցիկների յետեվից, փորձում էր փորսալ դրանք ոգի մեջ և բարձր հաջում, ամբողջ իր շնային սրտով հրճվելով ուրախ խաղից:

Բայց արդեն փոստիկանները վազում էյին ամեն կողմից, թափահարելով իրենց բեղիկներ մահակները:

— Արգելված թռուցիկների ընթերցումը պատժվում է նույնպես, ինչպես և նրանց տարածումը, — բղավում էյին նրանք, և նրանց յերեսները կարմրել էյին շարությունից ու լարվածությունից:

— Ռեսկլ, եստեղ արի, — կանչեց յերիտասարդն ու բանեց նրա վզնոցից:

Արդեն վրա հասան փոստիկանական մեքենա-





592
ները, տրվեց հրաման՝ շրջապատել վողջ հրապարակը:

Յերիտասարդները հանգիստ անցան հրապարակով և իշան ստորերկրյա յերկաթուղու կայարանը:

Այնտեղ մի վայրկյանով մոտեցավ նրանց մի մարդ:

— Լավ դուրս յեկավ, — շնչաց նա և իսկույն և յեթ նորից անհայտացավ ուղեւորների միջև:

Իսկ Ռոզենտալերշտրասսեյում հնչում էյին վոստիկանների անընդհատ սուր սուլոցներն ու ավտոմոբիլների շշակների ձայնը:

Ամբողջ թաղը շղթայված էր: Շպիկներն ու վոստիկանները ստուգում էյին ու խուզարկում մարդկանց, անցնելով տնից տուն:

Թող փնտռեն հանցավորներին վորքան ուզում են:

Մենք, դե, գիտենք բանն ինչու՞ն է, բայց վոչինչ չենք ասի:

Այդպես չի:

Իսկ հիմա վերջացնենք մեր պատմությունը:



Գլավիտի լիազոր՝ Դ—4569 Հրատ, № 4105

Պատվեր 191. Տիրած 3000

Քուղթ 62×74 Տպագր. 8³/₄ մամ.

Մեկ մամ. 24,480 նշան. Հեղինակ. 5,53 մամ.

Հանձնված է արտադրության 28 մայիսի 1937 թ.

Ստորագրված է տպագրության 20 մայիսի 1938 թ.

ՀՀ Ազգային գրադարան



NL0386234

321

1359

ԳԻՆԸ 1 Ռ. 90 Կ.

ԿՈՉՈՐ 60 Կ.

ԿՄԻՏ և ԵՐՄԻՆԱ ԴԱՅՆԵՐ

Маленькие дети в большой нужде

Դիզ Արմ. ՍՍՐ. Երևան 1938 թ.